ՀԱՍԱՐԱԿԱՑԻ

1972
2



Ի Ը
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՈՒ-15.459

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Յուն. 1979



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ
ՎԵՀԱՓԱՌ ԵԻ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԵՄԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ Տ. ԿՈՄԻՏԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԱՌԹԻՒ

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ԿՈՄԻՏԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻՆ, ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻՆ ԱՐԱՐԱՏԵԱՆ, ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԵՐԵՒԱՆ

Ամէն հայի սրտի համար անհուն ուրախութիւն է ապրել վերածնուած մեր հարազատ ժողովրդի ծոցում և տեսնել օրէցօր վերելքն ու ծաղկումը մեր մայր հայրենիքի, խաղաղութեան և ապահովութեան պայմաններում:

Այս պայծառ իրադրութիւնը մեծ մխիթարութիւն է նաև Հայոց Հայրապետի համար, որ տիւ և գիշեր աղօթում է Իր զաւակների բարօրութեան ու Մայր Հայաստանի երջանկութեան համար:

Առաւել մեծ է Մեր մխիթարութիւնը, երբ տեսնում ենք, թէ մեր հայրենի հողի վրայ նոր կեանք ու ծաղկում է ապրում նաև մեր նախնեաց սուրբ եկեղեցին՝ ի գլուխ ունենալով համայն մեր ազգի սրբութիւն սրբոց Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը և Արարատեան պատմական թեմը, որ իր եկեղեցիներով, իր հոգևոր կեանքի զարգացումով ու ժողովրդի աճող հաւատքով կենտրոնական տեղ է գրաւում մեր եկեղեցու կեանքում և որ այսօր գտնվում է իր կեանքի մի նոր հանգրուանի առաջ:

Այո, այսօր, Աստուծոյ ողորմութեամբ, Մենք ձեզ կոչում ենք ստանձնելու բարձր ու պատասխանատու պաշտօնը Արարատեան թեմի ղեկավարութեան, իբրև առաջնորդական փոխանորդ: Մենք վստահ ենք, թէ ձեր հաւատաւոր և ուխտապահ ոգով, ձեր աստուածատուր շնորհներով ու կազմակերպական, եռանդուն աշխատանքով Դուք առաւել պիտի շէնացնէք հայրապետական թեմի եկեղեցիներն ու սրբատեղիները և առաւել աւետարանական լոյս պիտի բաշխէք մեր ժողովրդի զաւակներին, ի շինութիւն նրանց հոգիների:

Աղօթում ենք, սիրելի սրբազան, առ բարձրեալն Աստուած, որ ձեզ շնորհի տոկուն քաջառողջութիւն հոգւոյ և մարմնոյ, նաև երկնաւոր ներշնչումներ ու գործելու կորով, որպէսզի լինէք «մշակ առանց ամօթոյ» ձեր կեանքով ու գործունէութեամբ, ձեր բարձր պաշտօնի կատարին:

Այս երջանիկ առիթով, ի գնահատումն ցարդ մատուցած ձեր ծառայութիւնների և ձեզ ի խրախուսանք ձեր նոր առաքելութեան մէջ, կը շնորհենք ձեզ արքութեան պատիւ, մաղթելով ամէն բարիք ի Տեառնէ և շինարար ու արդիւնաւէտ գործունէութիւն, ի փառս Հայաստանեայց առաքելական մեր սուրբ եկեղեցու:

«Այլ որ կամիցի ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ. և որ կամիցի ի ձէնջ առաջին լինել եղիցի ամենեցուն ծառայ» (Մարկոս Ժ 44):

Օրհնեալ եղերուք ի Տեառնէ և ի Մէնջ. ամէն:

Տուաւ կոնդակս ի 27-ը մայիսի
1972 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԻԱ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 732

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի հրավերով 1972 թվականի հունիսի 16-ին Մայր Աթոռ ժամանեց Հռոմեական կաթողիկե եկեղեցու պատվիրակությունը, իբրև ներկայացուցիչ Նորին Սրբության Պողոս Զ Սրբազան Հահանայապետի:

Հռոմի սուրբ եկեղեցու Գահակալը, Իր պատվիրակներին ուղարկելով ս. Էջմիածին, ցանկացել էր արտահայտել Իր բարձր գնահատանքը այն այցելության համար, որ Նորին Սրբություն Ամենայն Հայոց կաթողիկոսը կատարել էր ի Հռոմ 1970 թվականին:

Պատվիրակության կազմում էին Հռոմի սուրբ Աթոռի Քրիստոնյաների միության քարտուղարության նախագահ, Նորին գերազանցություն կարդինալ Ժան Վիլլբրանդը, Մարսելի արքեպիսկոպոս գերաշնորհ Ռոժե Էչեգարայը, սուրբ Ղազարի Միխիթարյան միաբանության ընդհանուր քարտուղար հայր Ներսես Տեր-Ներսեսյանը և Քրիստոնյաների միության քարտուղարության գրասենյակի պետ հայր Ջոն Լոնգը:

Հռոմի սուրբ Աթոռի բարձր պատվիրակությունը եկել էր՝ Հայոց Հայրապետին բերելու Նորին Սրբություն Պողոս Զ Սրբազան Պապի խաղաղության և եղբայրական սիրո նամակը:

Ուրբաթ օրը, ժամը 18.30-ին, Երևանի օդանավակայանում հարգարժան հյուրերին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ տ. Արսեն վարդապետ Բերբերյանը, ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը և տ. Գևորգ վարդապետ Սերայդարյանը:

Օդանավակայանից հյուրերը առաջնորդվեցին Երևան, կաթողիկոսարանի բնակելի շենքը, որը դրված էր նրանց տրամադրության տակ:

Հետևյալ օրը, շաբաթ, հունիսի 17-ին, առավոտյան ժամը 11-ին, հյուրերը տ. Սերովբե և տ. Կոմիտաս արքեպիսկոպոսների ուղեկցությամբ ժամանեցին ս. Էջմիածին, ուր զանգերի ղողանջների տակ հանդիսավոր կերպով մուտք գործեցին Մայր տաճար և աղոթեցին Իջման սուրբ սեղանի առաջ:

Մայր տաճարում հյուրերին ընդունեց Մայր Աթոռի լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը՝ շրջապատված Մայր Աթոռի միաբաններով:

Այնուհետև հյուրերը առաջնորդվեցին Վեհարան և ընդունվեցին Ամենայն Հայոց Հայրապետի կողմից:

Բարեկամական կարճ զրույցից հետո հարգարժան հյուրերը դիտեցին Մայր Աթոռի թանգարաններն ու շինությունները, այցելեցին սուրբ Հռիփսիմե

և սուրբ Գայլանե վանքերը և ապա ժամը 15-ին հրավիրվեցին Վեհարան:

Նույն օրը, երեկոյան, Մայր տաճարում տեղի ունեցավ երեկոյան ժամերգություն և ապա՝ էկումենիկ համատեղ աղոթքի արարողություն, որից հետո հյուրերը ներկա եղան հոգևոր ճեմարանի հանդիսասրահում իրենց պատվին կազմակերպված ուսանողական հանդեսին:

Հունիսի 18-ին, կիրակի օրը, մեծարգո հյուրերը ներկա եղան Մայր տաճարում ս. պատարագի արարողությանը: Պատարագեց տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը: Նորին Սրբությունը քարոզեց և վերջում հավատացյալ ժողովրդին ներկայացրեց պատվարժան հյուրերին:

Հավարտ ս. պատարագի Վեհարանի գահասրահում տեղի ունեցավ հանդիսավոր ընդունելություն, որին ներկա էին, բացի հյուրերից, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները և Երևանի մշակութային ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ընդունելությանը ներկա էր ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը:

Գահասրահում ողջույնի խոսքով հյուրերին դիմեց տ. Սերովբե արքեպիսկոպոսը, որից հետո Մարսելի արքեպիսկոպոս Ռոժե Էչեգարայը կարդաց Հռոմի Սրբազան Քահանայապետի եղբայրական սիրո ուղերձը՝ ուղղված Հայոց Հայրապետին:

Ապա տեղի ունեցավ պաշտոնական ճառերի փոխանակում Վեհափառ Հայրապետի և կարդինալ Վիլլբրանդսի միջև:

Ժամը 15-ին Վեհարանի ճաշասրահում հյուրերի պատվին տրվեց պաշտոնական ճաշկերույթ:

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, հյուրերը այցելեցին սուրբ Մեսրոպ Մաշտոցի դամբարան Օշականում:

Հունիսի 19-ին, երկուշաբթի օրը, պատվիրակության անդամները աղոթեցին Ծիծեռնակաբերդի հայ նահատակաց հուշարձանի առջև, ապա եղան Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում և այնտեղից ուղևորվեցին ս. Գեղարդա վանք, ուր նրանց ցույց տրվեց ջերմ ընդունելություն:

Վանքի վանահայրը, ի պատիվ հյուրերի, տվեց ճաշկերույթ:

Պատվիրակության անդամները այցելեցին նաև Գառնի և դիտեցին վերականգնվող հեթանոսական տաճարը:

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, հյուրերը ներկա եղան իրենց պատվին Մայր տաճարում կազմակերպված հոգևոր համերգին: Մայր տաճարի երգչախումբը, խմբավար պրն. Խորեն Մելիսանեջյանի ղեկավարությամբ, կատարեց հայկական, ռուսական և արևմտաեվրոպական հոգևոր երգեր:

Համերգից հետո Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունեց կարդինալ Վիլլբրանդսին և պատվիրակության մյուս անդամներին: Տեղի ունեցավ հուշանվերների փոխանակում, որից հետո Հայոց Հայրապետը, եղբայրական սիրո ողջագուրումով, հյուրերին մաղթեց բարի ճանապարհ:

Հաջորդ առավոտյան, հունիսի 20-ին, Երևանի օդանավակայանում Մայր Աթոռի միաբանության և պաշտոնեության ներկայացուցիչները ողջերթ մաղթեցին բարձրաստիճան հյուրերին, որոնք մեկնեցին Հռոմ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

21-ը հունիսի 1972 թ.,
Ս. Էջմիածին

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՔԱՆՇԱՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ

(Նոր նախագծով. գործ՝ ոսկերիչ Ժիրայր Զուլոյանի. չափերը՝ 4×5 սմ)

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՉԳԵՆ Ա-ԻՆ

Ձերդ Սրբություն,

Խնդրեցիք Մեր սիրելի եղբորը՝ կարդինալ Ժան Վիլլբրանդսին, այցելել Ձերդ Սրբությանը սուրբ Էջմիածնի ձեր պատմական Աթոռում՝ ի գլուխ Հռոմի եկեղեցու մի պատվիրակության: Ցանկանում ենք, որ այս քայլը լինի Մեր երախտագիտական զգացմունքի մի նոր արտահայտություն այն այցելության համար, որ Դուք տվեցիք Մեզ Հռոմում երկու տարի առաջ և որի մասին Մեզ մի գեղեցիկ հուշագիրք ուղարկելու բրբազգացությունն ունեցաք:

Բացի այդ, կցանկանայինք, որ այս քայլը հանդիսանար նաև մեր և մեր եկեղեցիների միջև արդեն գոյություն ունեցող հաղորդությունը խորացնելու բաղձանքի մի արտահայտություն և դրսևորեր Մեր կամեցողությունը՝ օգտվելու սուրբ Հոգու կողմից ընծայված բոլոր առիթներից՝ առաջ ընթանալու համար այդ ճանապարհի վրա:

Մենք ուրախ ենք, որ, որպես հետևանք Ձերդ Սրբության կողմից Մեզ տրված այցելության, արդեն զարգացել է փոխադարձ սիրո և անկեղծ գործակցության մի նոր ոգի Քրիստոսի եկեղեցու ծառայության գործում. աշխարհի շատ մասերում կաթոլիկ համայնքներն ու հայկական համայնքները ձեռք են բերել ի Քրիստոս իրենց միության մի նոր գիտակցություն:

Այժմ, երբ Մեր ներկայացուցիչները գալիս են Ձերդ Սրբության մոտ, Մենք կցանկանայինք վերստին հավաստիացնել Ձեզ, թե որքան ուրախ ենք զգում Մեզ այս զարգացումների համար և որքան վստահ, որ ինքը՝ եկեղեցու Տերը պիտի շարունակի, իրեն հատուկ ճանապարհներով, առաջնորդել մեզ դեպի ամբողջական կատարումը խաղաղության և հաշտության սպասավորման, որ նա վստահել է իր եկեղեցու հովիվներին (Կորնթ. Բ 5—18):

Մաղթելով, որ ամենակարողն Աստված իր օրհնություններով լցնի Ձերդ Սրբությանը, ձեր եկեղեցու եպիսկոպոսական դասին, հոգևորականությանը և հավատացյալներին, կրկին հայտնում ենք Ձեզ Մեր եղբայրական սիրո ողջ զգացմունքը ի Տեր մեր Հիսուս Քրիստոս:

ՊՈՂՈՍ Զ

Վատիկան, 9 մայիսի 1972 թ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐԴԻՆԱԼ ԺԱՆ ՎԻԼԼԲՐԱՆԴՍԻՆ

(1972 թ. հունիսի 18)

Ձերդ գերազանցություն,

Ի Քրիստոս սիրով, բարի գալուստ կմաղթենք Ձեզի և Ձեր բարձր պատվիրակության անդամներուն, որ կու գաք հավիտենական քաղաք Հռոմեն, իբրև պատգամաբերները Ն. Ս. Պողոս Զ Սրբազան Քահանայապետին:

Հայաստանյայց առաքելական եկեղեցին և հատկապես Մենք հույժ երջանիկ ենք Ձեզ ողջունելու այստեղ, ս. Էջմիածնի մեջ, բազմադարյան գրսգույն կեդրոնը հայ առաքելական եկեղեցվո, Ձեր այցելության մեջ տեսնելով շարունակումը եղբայրական սիրո այն հարաբերություններուն, որոնք սկիզբ առին մեր եկեղեցիներուն միջև, մանավանդ երկու տարիներ առաջ Մեր պաշտոնական այցելությամբ Հռոմ: Մեր այդ այցը, պատմական այնպիսի վկայություն մը հանդիսացավ որ մեր եկեղեցիին և անձամբ Մեզի համար պիտի մնա ոչ միայն անմոռանալի, այլ նաև լուսավոր անկյունադարձ մը մեր հետագա կյանքի ճանապարհին:

Այսօր Ձեր ներկայության, սուրբ Գրիգոր Լուսավորչի գահեն անգամ մը ևս կխոստովանինք թե կհավատանք համաքրիստոնեական եղբայրության իդեալին և եկեղեցիներու հետզհետե առավել մերձեցման ու համագործակցության, Քրիստոսի սիրույն մեջ միանալու տենչով ոգեշնչված:

Երբ կնայինք մեր ետև, անցնող դարերուն, ինչքա՜ն կափսոսանք այսօր, որ այդքան երկար, շատ երկար ժամանակ, Քրիստոսի անունով ապրող ու գործող եկեղեցիներ չեն կարողացած գոնե կրոնական կյանքի մեջ իրականացնել Քրիստոսի մեծագույն պատվիրանները՝ սիրո և խաղաղության: Ողբերգություն մը եղած է այդ, որ ահա մեր օրերուն վերջ կգտնե: Մենք բոլորս երջանիկ կզգանք զմեզ որ մեր օրերուն է որ կկատարվի այդ բարեշրջումը: Եվ եթե մեզմե ոմանք կկարողանան գերակատարները հանդիսանալ երջանիկ այս նոր իրադրության, այդ կրնան նկատել անոնք, իրենց կյանքի մեծագույն մխիթարությունը: Անկասկած թե նման մեծ դերակատարներ հանդիսացան նաև՝ հանգուցյալ Հովհաննես ԻԳ Պապը, և ձեր մեծ եկեղեցվո այժմու Քահանայապետ Պողոս Զ:

Կրոնական տեսակետե, մեր ժամանակները կբնորոշվին քրիստոնեական եկեղեցիներու՝ «աշխարհին բացվելու» և աշխարհին հետ «դիալոգի» մեջ ըլլալու ձգտումով ու անհրաժեշտությունով, կրոնական, գիտական, մշակութային և ընկերային-քաղաքական մակարդակներու վրա:

«Բացվիլ աշխարհին» կրոնական կյանքի մակարդակի վրա կնշանակե ապրիլ և գործել եկեղեցիներու մերձեցման, միութենական ոգիով, էկումենիկ ոգիով:

«Բացվիլ աշխարհին» գիտության մակարդակի վրա, կնշանակե համաձայնեցման եզրեր գտնել գիտության և կրոնքի միջև, այսինքն՝ բնական պատճառականության գիտական սկզբունքին և գերբնական հավատալիքներու կրոնական ուսմունքին միջև:

«Բացվիլ աշխարհին» մշակութային մակարդակի վրա, կնշանակե, օրգանապես հաղորդ մնալ արդի աշխարհի մշակույթին, մեկ կողմե որդեգրելով եկեղեցվո կյանքին մեջ, այդ մշակույթի, արվեստներու որոշ ըմբռնումներ և արտահայտության ձևեր, մյուս կողմե ձգտելով կրոնական բազմադարյան մշակույթի, արվեստներու արժեքները արդիականության լույսին բերել և անոնցմով բեղմնավորել արդի մշակույթի զարգացման ընթացքը:

«Բացվիլ աշխարհին» ընկերային մակարդակի վրա, կնշանակե գտնել իմաստուն ճանապարհը որ եկեղեցիները իրենց ճակատագիրը չկապեն որոշ դասակարգային շահերու, այլ ճշմարտապես հարազատ մնալով ավետարանական ուսմունքին, դառնան քարոզողները ընկերային արդարության ու հավասարության և մարդու կողմե մարդու շահագործման դրության վերացման:

Եվ վերջապես, «աշխարհին բացվիլ» քաղաքական մակարդակի վրա պիտի նշանակեր, դավանիլ և պաշտպանել պետություններու խաղաղ գոյակցությունը և համագործակցությունը, բոլոր մեծ ու փոքր ազգերու իրավական հավասարությունը, անոնց ազատ ինքնորոշման իրավունքը և բոլոր տեսակի անհանդուրժողության ու խտրականության վերացումը, միջազգային հաստատ, անաչառ օրենքներու ուժով երաշխավորված Միացյալ ազգերու կազմակերպության բարձր հեղինակությամբ և ի հարկին ազդու միջամտությամբ:

Մեզի այնպես կթվի թե էկումենիկ շարժման հետ անքակտելի կերպով կապված են այս բոլոր հարցերը: Էկումենիկ շարժման գաղափարը անջատել մեր օրերու մարդկությունը հուզող կենսական ու հիմնական հարցերեն, պիտի նշանակեր սահմանափակել եկեղեցվո գոյության իմաստն ու անոր առաքելությունը:

Մեր կարծիքով ուղիղ չէ մտածել թե էկումենիզմը միմիայն եկեղեցիներու միության շարժում մըն է: Այդպես մտածել ու գործել պիտի նշանակեր հեռու մնալ մեր օրերու աշխարհեն, մեր շուրջ ալեկոծվող կյանքեն և անոր նորանոր հառաջընթաց զարգացումներեն, ինչ որ պիտի նշանակեր անտեսել՝ կրոնական հավատքը իբրև ոգեկան գործոն ուժ պահպանելու անհրաժեշտությունը նոր կյանքի պայմաններու մեջ:

Հակված ենք, ուրեմն, մտածելու թե էկումենիզմը միմիայն եկեղեցիներու մերձեցման և ապագա միության համար գործող շարժում մը չէ, այլ նաև ու մանավանդ շարժում մը միացյալ ուժերով ու ճիգերով պաշտպանելու քրիստոնեական հավատքը տագնապալի մեր օրերուն և զայն տիեզերական դարձնելու արդի աշխարհի մեջ, արդի աշխարհը հուզող կենսական և իրական հարցերուն առնչվելով:

Մենք պետք է գիտնանք փնտրել ու գտնել Քրիստոսի Ավետարանի գոյության իմաստն ու անհրաժեշտությունը մարդկության ապագա կյանքի կառուցման ճանապարհին վրա: Մենք կհավատանք թե կառուցվող ապագա աշխարհը ևս պիտի լուսավորվի Քրիստոսով, վասնզի վկա է երկհազարամյա պատմությունը թե Քրիստոսի Ավետարանը՝ հավիտենական բարոյական ճշմարտություններու շտեմարան է, մշտանորոգ ոգեկանություն է, տևական հեղափոխություն է:

Աշխարհին բացվելու ձգտումին, մեր օրերու ամենահրամայական ար-

տահայտություններեն մին, կշարունակե մնալ աշխարհի խաղաղությունը պահպանելու և ամրապնդելու գաղափարը, որ մեր աղոթքներու, մեր մտածումներու և մեր գործունեության առանցքը պետք է կազմե այսօր:

Այս կնկատենք կրոնական մեր գերագույն պարտականությունը, այլապես ժխտած պիտի ըլլայինք մեր ուխտը Աստուծո հանդեպ որ «խաղաղության Աստված» է: Այս զգացումը մեր գիտակցության մեջ գուցե առավել սիրական է որովհետև հայ եկեղեցին և հայ ժողովուրդը ավելի քան հազար տարի տառապած են ու նահատակված ռազմամոլ ու ծավալապաշտ պետություններու սանձազերծած պատերազմներու հետևանքով: Մեր ժողովուրդը այդ ճակատագիրը ունեցավ նաև մեր դարուն, նախ առաջին համաշխարհային պատերազմին՝ Օսմանյան կայսրության կազմակերպած ցեղասպանությամբ, երբ բնաջնջվեցավ մոտ երկու միլիոն հայ քրիստոնյա ազգաբնակչություն Արևմտյան Հայաստանի մեջ, և ապա համաշխարհային երկրորդ պատերազմին՝ երբ նացիստական հարձակման դեմ Հայրենական մեծ պատերազմին, գոհվեցան ավելի քան 300.000 հայ ժողովուրդի զավակներ, իրենց ռուս և այլ ազգի սովետական միլիոնավոր հերոսներու կողքին:

Մենք չենք կամենար որ կրկնվին այլևս նման ողբերգություններ, ոչ մեկ տեղ աշխարհի վրա:

Ահա թե ինչու Մենք ուրախությամբ ողջունեցինք՝ վավերացումը սովետ-գերմանական՝ ուժի գործադրումից հրաժարվելու դաշինքի և խաղաղ գոյակցության նպաստող այն պատմական համաձայնագրերը որոնք վերջերս ստորագրվեցան Մոսկվայի մեջ, Սովետական Միության ղեկավարներու և Միացյալ Նահանգաց նախագահի միջև:

Սուրբ Էջմիածնի սեղանի առաջ պիտի մնանք միշտ աղոթող որ հետզհետե աճի ու զորանա բարի կամեցողությունը և խաղաղարար ոգին պետություններու բոլոր ղեկավարներուն միջև:

Իբրև Հովվապետ հայ եկեղեցիին, մեր ժողովուրդի հետ միասին մեր բոլոր հույսերը, մեր բոլոր ապագայի երազանքները կապած ենք աշխարհի խաղաղության և ժողովուրդներու բարեկամության դատին հետ:

Ձերդ գերազանցություն, Մենք երջանիկ ենք որ Ձեր այցելությունը ս. Էջմիածին, առիթ ընծայեց Մեզի արտահայտելու Մեր այս մտածումներն ու խոհերը, քաջ գիտնալով և մեծապես գնահատելով ձեր մեծ եկեղեցվո և հատկապես սուրբ Պետրոսի Աթոռի գահակալ Ն. Ս. Պողոս Զ-ի՝ ս. Հոգով ներշնչված կոչերն ու անդուլ ջանքերը ի խնդիր սիրո և խաղաղության ամրապնդման մարդկանց սրտերուն և աշխարհին մեջ:

Կխնդրենք Ձեզմե որ Ձեր վերադարձին Հռոմ, տանիք Ձեր Սրբազան Քահանայապետին մեր եկեղեցվո քրիստոնեական ողջույնը և Մեր եղբայրական հարգալից սիրո հավաստին, Մեր սրտեն բխած մաղթանքներով որ Տերը իր լույսով փառավորե Անոր առաքելության ճամփան այժմ և միշտ:

«Եւ Աստուած իմ լի արասցէ զամենայն պէտս Ձեր ըստ իւրում մեծութեան՝ փառօք ի Քրիստոս Յիսուս: Այլ Աստուծոյ և Հօր մերում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն» (Փիլիպ. Դ 19—20):



ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԴԻՆԱԼ ԺԱՆ ՎԻԼԼԲՐԱՆԴՍԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

(1972 թ. հունիսի 18)

Ձերդ Սրբություն,

Մեծ ուրախություն է ինձ համար ողջունել Ձեզ այսօր: Մարսելի արքեպիսկոպոս գերաշնորհ Ռոժե Էչեգարայի, գերապատիվ հայրեր Ներսես Տեր-Ներսեսյանի և Զոհ Լոնգի ուղեկցությամբ գալիս եմ Ձերդ Սրբությանը փոխանցելու Պողոս Զ Պապի ամենասրտագին բարեմաղթությունները: Հոոմ կատարած Ձեր այցելության հիշատակը դեռևս շատ թարմ է Նրա հիշողության մեջ: Նորին Սրբությունը, ուղարկելով այս պատգամավորությունը, որին գլխավորելու պատիվն ունեմ ես, ցանկացավ հանդիսավոր կերպով հայտնել Իր վերանորոգված երախտագիտությունը այդ այցելության համար, որն առավել սերտացրեց և ամրացրեց հաղորդության կապերը Հռոմեական կաթոլիկ եկեղեցու և Հայաստանյայց առաքելական եկեղեցու միջև և դրանով իսկ հանդիսացավ պատմական մի իրադարձություն մեր երկու եկեղեցիների կյանքում: Եվ եթե դա եղավ հիշատակելի մի օր, չեղավ սակայն ժամանակի մեջ առանձնացած, սահմանափակված և վերջացած-ավարտված մի իրադարձություն:

Նորին Սրբություն Պողոս Զ Պապը, ինչպես և Դուք Ինքներդ, գիտակցեցիք, որ հաստարակաց աղոթքը, ինչպես նաև փոխանակված զրույցները նշում էին սկիզբը մի նոր ժամանակաշրջանի, որի ընթացքում, սուրբ Հոգու առաջնորդությամբ, մեր երկու եկեղեցիների հովիվներն ու հավատացյալները պիտի որոնեն նոր ուղիներ, որպեսզի միասին աճեն այն սիրո մեջ, որը պետք է հատկանշի բոլոր նրանց, ովքեր կրում են քրիստոնյա անունը:

Այդ պատմական օրը հղացված հույսերը իզուր չանցան: Աշխարհի տարբեր մասերում այսօր ի հայտ է գալիս փոխադարձ ըմբռնման և մերձեցման մի նոր ցանկություն: Կաթոլիկների կողմից այսօր նկատվում է մի նոր գնա-

հատություն հայ եկեղեցու, նրա հին, քրիստոնեական ավանդույթների, ինչպես նաև այն եղանակի նկատմամբ, որով հաստատվեց ներդաշնակ կապը հայ ժողովրդի հարուստ մշակույթի և Քրիստոսով եղած հայտնության միջև, հայտնություն, որը փոխանցվեց հայ ազգին նրա բազմաթիվ հոգևոր առաջնորդների և մշակների միջոցով: Այսօր նրանք մի նոր հիացմամբ են մոտենում ձեր փառավոր եկեղեցուն, որը գիտցավ ամուր պահպանել ձեր ժողովրդի հավատը բազում դարեր, որոնց ընթացքում Դուք ենթարկվեցիք հաճախակի հալածանքների և անլուր տառապանքների:

Մենք կարող ենք նաև ուրախ զգալ մեզ այն բանի համար, որ մեր եկեղեցիների աստվածաբանները խուսափեցին Ձերդ Սրբության և Պողոս Զ Պապի՝ 1970 թվականի մայիսի համատեղ հայտարարության մեջ եղած կոչի հանդեպ: Արդեն գումարվել են ժողովներ, և ուրիշ ժողովներ էլ ծրագրվել՝ միասնաբար ուսումնասիրելու համար Հիսուս Քրիստոսի խորհուրդը և նրանով եղած հայտնությունը: Մեր մասնագետները, իրենց հովվապետների օրհնություններով, արդեն բացել են նոր ուղիներ, որոնք պիտի թույլատրեն նրանց հաղթահարելու այն տարակարծությունները, որ դեռևս գոյություն ունեն մեր միջև և այդպիսով առաջնորդելու մեր եկեղեցիները դեպի կատարյալ մի միություն՝ մե՛կ քրիստոնեական հավատի, մե՛կ խորհրդական կյանքի և քրիստոնեական մե՛կ ընտանիքի ոգեկան ներդաշնակության դավանության մեջ: Մենք ձգտում ենք առավել հստակությամբ իրականացնել այն, որ, արտահայտության ձևերի տարբերություններից վեր, մենք դավանում ենք մե՛կ հավատք, հատկապես ինչ վերաբերում է մարմին առած և մեր փրկության համար իրապես մարդացած աստվածային Բանի խորհրդին:

Եթե Աստված թույլ տվեց, որ տեղի ունենա այս զարգացումը մեր եկեղեցիների միջև, նա թույլ տվեց միաժամանակ, որ այն հնարավորություն ստանա ամբողջացնելու առավել մեծ մի շարժման մեջ՝ ներգրավելով բազում ավանդությունների տեր քրիստոնյաներին: Դրա մեկ ապացույցն է այն մեծ փոխըմբռնումը, որն այժմ հաստատվել է հայ առաքելական եկեղեցու և արեվելյան ու առաքելական ավանդություններ ունեցող այլ եկեղեցիների միջև: Հուզում եմ այստեղ խոսել այն արդյունավետ հանդիպումների մասին, որոնք արդեն տեղի են ունեցել բյուզանդական ավանդություն ունեցող աստվածաբանների հետ, ինչպես նաև այն պաշտոնական դիալոգի մասին, որը բացվելու է վերոհիշյալ եկեղեցիների և ձեր եկեղեցու միջև: Հռոմեական կաթոլիկ եկեղեցին, որը բաժանում է ձեզ հետ հավատի, խորհրդակատարությունների և առաքյալներից ու եկեղեցու հայրերից եկող քրիստոնեական կյանքի ավանդությունների գրեթե ամբողջությունը, ցանկանում է գործակցել ձեր բոլորի հետ Քրիստոսի և նրա եկեղեցու խորհրդի մեջ առավել խորը թափանցելու միջոցների որոնման գործում:

Ձերդ Սրբություն, մենք առանձնապես երջանիկ ենք, որ Դուք ընդունում եք մեզ Էջմիածնի այս սուրբ Աթոռում: Իր պատմության ընթացքում հայ եկեղեցին ծաղկել է տարբեր ժամանակաշրջաններում և զանազան երկրներում: Սակայն սուրբ Էջմիածինը առանձնապե՛ս հարգված մի վայր է: Այստեղ է, որ ի մի է բերվել այն, ինչ կուտակել է հայ եկեղեցին որպես մշակութային, աստվածաբանական և պաշտամունքային հարստություն: Հաճելի է ինձ այստեղ հիշեցնել, որ Վատիկանի Երկրորդ ժողովը էկումենիզմի վերաբերյալ իր հրամանագիր-որոշման մեջ հանդիսավոր կերպով կանգ առավ այն անհրաժեշտության վրա, որ բոլոր կաթոլիկները պարտավոր են իրենց հարգանքն ու սերը ցույց տալ քույր եկեղեցիների ունեցած հոգևոր գանձերի

ԴԵՊԻ ՎԵՀԱՐԱՆ

նկատմամբ: Երբ հարցը վերաբերում է ճշմարիտ հարգանքին, երբ սերը գործերով է արտահայտվում, այն ժամանակ մեզնից յուրաքանչյուրին թվում է, որ ավելի հեշտ է կատարել Տիրոջ այն պատվիրանը, թե՝ «Թող բոլորը լինեն մեկ, ինչպես որ մեկ ենք ես և իմ Հայրը»:

Այսպիսով, մենք ավելի լավ պիտի հասկանանք, որ միությունը միմիայն կառուցվածքային հարաբերությունների հետ կապված մի հարց չէ եկեղեցական հաստատությունների միջև, այլ նա ենթադրում է առավել խոր այն հաղորդությունը սուրբ Հոգու մեջ, որը միաժամանակ արտահայտված և սնված պիտի լինի սուրբ հաղորդության խորհրդի հասարակաց կատարումով: Այս հաղորդության մեջ է, որ մենք առավել կարող պիտի դառնանք աշխարհին ծառայելու գործում, այն ծառայության գործում, որը, մեզ թվում է, աշխարհին պիտի բերի այն խաղաղությունն ու հաշտությունը, որոնց համար Հայրն ուղարկեց իր Որդուն մեր մեջ:

Ձերդ Սրբություն, Հռոմի եկեղեցու պատվիրակության անունից հայտնում եմ Ձեզ իմ ամենաջերմ երախտագիտությունը այն ընդունելության համար, որ վերապահեցիք մեզ: Մի անգամ ևս հաղորդում եմ Ձեզ Նորին Սրբություն Պողոս Զ Պապի սրտագին ցանկություններն ու եղբայրական սիրո զգացմունքները, զգացմունքներ, որ Դուք արտահայտված գտաք ինձ հանձնված այս նամակի մեջ:

ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԺԱՄԱՆՈՒՄ

Հայոց Հայրապետի եղբայրական հրավերով և Հռոմեական կաթոլիկ եկեղեցու Քահանայապետ Նորին Սրբություն Պողոս Ջ Պապի բարեհաճ կարգադրությամբ սույն թվի հունիսի 16-ին, ուրբաթ օրը, երեկոյան ժամը 18.30-ին, Մայր Աթոռ է ժամանում Հռոմեական կաթոլիկ եկեղեցու պատվիրակությունը՝ գլխավորությամբ Վատիկանում Քրիստոնյաների միության քարտուղարության նախագահ Նորին գերազանցություն կարդինալ Ժան Վիլլբրանդի, որին ընկերակցում են Մարսելի արքեպիսկոպոս գերաշնորհ Ռոժե Էչեգարայը, քարտուղարությանը կից արևելյան եկեղեցիների գրասենյակի պետ հոգեշնորհ հայր Ջոն Լոնգը և Վենետիկի Մխիթարյան միաբանության քարտուղար ու դպրեվանքի տեսուչ հայր Ներսես Տեր-Ներսեսյանը:

Երևանի օդանավակայանում, հանուն Հայոց Հայրապետի, հարգարժան հյուրերին դիմավորում և բարի գալուստ են մաղթում Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ՝ Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը, ինչպես և Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ տ. Արսեն վրդ. Բերբերյանը, ընդհանուր քարտուղար պրն. Պարգև Շահբազյանը, տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը և դիվանատան աշխատող պրն. Հովհաննես Պայտարյանը:

Օդանավակայանից հարգարժան հյուրերը առաջնորդվում են Երևան՝ հայրապետական վիլլա:

Հռոմեական կաթոլիկ եկեղեցու պատվիրակությանը մշտապես ուղեկցող

են ընդունակվում տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը և տ. Արսեն վրդ. Բերբերյանը:

Հունիսի 17-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, պատվիրակությունը, տ. Սերովբե և տ. Կոմիտաս արքեպիսկոպոսների ու տ. Արսեն վարդապետի ուղեկցությամբ, ժամանում է Մայր Աթոռ:

Հարգարժան հյուրերը զանգերի ղողանջների ներքո առաջնորդվում են Մայր տաճար, ուր ողջագուրումներով նրանց ընդունում և բարի գալուստ է մաղթում Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը՝ շրջապատված Մայր Աթոռի միաբաններով:

Մի պահ սուրբ պատարագից

Հյուրերը Իջման ս. սեղանի առաջ կատարում են իրենց աղոթքը՝ երկյուղած բարեպաշտությամբ ու ապա առաջնորդվում Վեհարան:

Վեհարանում, սրտագին մթնոլորտում, տեղի է ունենում ջերմ ողջագուրում Վեհափառ Հայրապետի, կարդինալ Ժան Վիլլբրանդի, Մարսելի արքեպիսկոպոս Ռոժե Էչեգարայի և մյուս եպիսկոպոսների ու հոգևորականների միջև: Հյուրերին ուղղված բարիգալստյան և ողջույնի խոսք է ասում Վեհափառ Հայրապետը՝ հոգեկան բերկրանքով և եղբայրական սիրո զգացումներով լցված: Հռոմեական կաթոլիկ եկեղեցու պատվիրակության կողմից Վեհափառ Հայրապետին ուղղված ողջույնի խոսք է ասում կարդինալ Ժան Վիլլբրանդը և հաղորդում Ն. Սրբություն Պողոս Զ սրբազան Պապի եղբայրական ողջույնը և բարի մաղթանքները:

Կարճ զրույցից հետո հյուրերը այցելում են Մայր տաճար, եկեղեցական արվեստի թանգարան, Հին Վեհարան, ս. Հռիփսիմե և ս. Գայանե վանքերը:

Ժամը 15-ին Վեհարանում տեղի է ունենում ճաշկերույթ, որին մասնակցում են Վեհափառ Հայրապետը, հարգարժան հյուրերը, տ. Սերովբե և

տ. Կոմիտաս արքեպիսկոպոսները, տ. Հուսիկ եպիսկոպոսը, տ. Արսեն և տ. Ոսկան վարդապետները և պրն. Պարգև Շահբազյանը:

ԷԿՈՒՄԵՆԻԿ ՀԱՄԱՏԵՂ ԱՂՈԹՔ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Երեկոյան ժամը 18.30-ին Մայր տաճարում տեղի է ունենում էկումենիկ համատեղ աղոթքի արարողություն:

Ղողանջում են եկեղեցու զանգերը: Եկեղեցական թափորով Մայր տաճար են առաջնորդվում Վեհափառ Հայրապետը և հայ եկեղեցու պատվարժան հյուրերը:

Սկսվում է կիրակամտի ժամերգությունը: «Ասացուք»-ի ժամանակ Վեհափառ Հայրապետի անունից հետո հիշվում է Ն. Ս. Պողոս Զ Պապի անունը հետևյալ կերպով. «Վասն Սրբազան Քահանայապետին Հռոմայ Տեառն Տեառն Պօղոս Զ Պապի կենաց և փրկութեան հոգւոյ Նորին զՏէր աղաչեսքուք»:

«Համբարձի» շարականից հետո Իջման ս. սեղանին են մոտենում հյուրերը, կատարում իրենց աղոթքը լատիներեն լեզվով և ընթերցում Պողոս Առաքյալի «Առ Փիլիպպեցիս» թղթից մի հատված:

Ապա տ. Արսեն վրդ. Բերբերյանը ընթերցում է մի հատված Հովհաննու Ավետարանից, որից հետո՝ «Խնդրեսցուք», «Կեցո», «Թագաւոր խաղաղութեան», և Տերունական աղոթքով փակվում է համատեղ աղոթքի արարողությունը:

Վեհափառ Հայրապետը և հյուրերը առաջնորդվում են Վեհարան:

ԱՅՑ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի է ունենում հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության հանդիպումը Ն. Սրբություն Պողոս Զ Պապի ներկայացուցիչ կարդինալ Ժան Վիլլբրանդսի և նրան ընկերակցող մյուս հյուրերի հետ:

«Հայր մեր»-ի աղոթքից հետո, հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարուքյանը, հանուն դասախոսական կազմի և ուսանողության, բարիգալստյան և ողջույնի հետևյալ սրտագին ուղերձն է ուղղում թանկագին հյուրերին.

«Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության համար ուրախություն է ևվիրական այս հարկի տակ ողջունել Նորին գերազանցությանը՝ կարդինալ Ժան Վիլլբրանդսին, և բարի գալուստ մաղթել նրան ու նրան ընկերակցող Մարսելի արքեպիսկոպոս մոնսենյոր Ռոժե Էչեգարային, հայր Ժան Լոնգին և Միսիթարյան ուխտից հայր Ներսես Տեր-Ներսեսյանին:

Դժբախտաբար պատմության ընթացքում դավանաբանական, քաղաքական և այլ պայքարները Քրիստոսի միասնական եկեղեցին բաժանել ու նույնիսկ միմյանց դեմ են լարել: Եվ այսպես դարեր շարունակ կողք-կողքի ապրել են քրիստոնեական եկեղեցիները՝ հաճախ առանց միմյանց հասկանալու և երբեմն նույնիսկ առանց միմյանց հարգելու:

Ժամանակաշրջանը, որի մեջ ապրում ենք մենք, եկեղեցիների եղբայրացման բախտավոր մի ժամանակաշրջան է: Մեր եկեղեցին դարեր շարու-

նակ աղոթել է եկեղեցիների հաւերաշխ գործակցության համար:

Այս սրբազան մթնոլորտում, որ մեր հավատքի կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածինն է, մեր լուսամիտ հայրապետները այդ ոգով են աղոթել, աշխատել և գործել: Այսօր էլ նույն ոգին, Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության ներքո, մեր այս կրթական հաստատության միջոցով փոխանցվում է հայ եկեղեցու ապագա հոգևոր սպասավորությանը կանչված սաներին:

Ս. Էջմիածնի հոգևոր կրթության այս հաստատության գոյությունը, որպես աղբյուր Աստուծո գիտության, սկսվում է չորրորդ դարից, Գրիգոր Լուսավորչի օրով, որը, ըստ պատմական տվյալների, մեր երկրում բացեց առաջին քրիստոնեական դպրոցը:

Այստեղ է, որ 5-րդ դարում այս դպրոցի աշակերտ-թարգմանիչ վարդապետները Աստուծո խոսքը հայ լեզվով թարգմանեցին և քրիստոնեական լույսը տարածեցին հայ ժողովրդի մեջ: Եվ այդ հոգևոր լույսը երբեք չհանգավ, հակառակ բազում դարերի մեր ժողովրդի և եկեղեցու սպասավորների անլուր նահատակությունների:

Այսօր էլ ուրախ ենք, որ այդ լույսը հայոց աշխարհում Ամենայն Հայոց Հայրապետի անդուլ ջանքերով ճառագայթում և բաշխվում է Սովետական Հայաստանի, Սովետական Միության այլ հանրապետությունների մեջ գտնվող հայ եկեղեցիներին և արտասահմանի համայն հայ հավատացյալ համայնքներին՝ ի փառս Քրիստոսի եկեղեցու:

Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը ունի ուսումնառության վեց տարիներ: Մեզ մոտ ընդունվում են 16 տարեկանից վեր ուսանողներ: Ուսումնական ծրագրի մեջ նախատեսված են սուրբ գրական առարկաներ, աստվածաբանություն, հայրաբանություն, պատմություն, հոգեբանություն, տրամաբանություն, գրականություն, հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներ, երաժշտություն:

Ճեմարանը գիշերօթիկ դպրոց է: Այս տարի ուսանողների թիվը 34 է, որից 12-ը արտասահմանից են և 22-ը՝ մեր երկրից:

Հաճելի է մեզ համար ընդգծել, որ հատկապես վերջին տասնամյակում էկումենիկ շարժումը օրըստօրե զարգանալու ընթացքի մեջ է:

Պատմության գիրկն է անցել անհասկացողությունների ժամանակաշրջանը: Այսօր եկեղեցիները, իրար կորցրած եղբայրների նման, փնտրում են միմյանց ու ողջագուրվում:

Գոհունակությամբ արձանագրում ենք, որ եղբայրական սիրո կապը և էկումենիկ ոգին գնալով ավելի են ամրացել հայ և կաթոլիկ եկեղեցիների միջև, և այդ արտահայտվում է նաև կրթական գետնի վրա: Այսօր ունենք ճեմարանավարտ չորս ուսանողներ, որոնք իրենց բարձրագույն կրթությունն են ստանում Արգենտինայի, Կանադայի և Ֆրանսիայի կաթոլիկ ուսումնական հաստատություններում: Վերջին երկու տարիներին ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում դասախոսելու համար մեզ մոտ են հրավիրվել Վենետիկի միաբաններից հայր Հարություն Պզտիկյանը և հայր Եփրեմ Տեր-Ղազարյանը:

Ձերդ գերազանցություն, մենք այստեղ միշտ աղոթում ենք եկեղեցիների հաւերաշխ գործակցության և եղբայրության համար: Քրիստոնեական եկեղեցիները իրենց ուրույն ավանդություններով, ծեսերով ու դավանական մտածելակերպով դարեր ամբողջ ապրել ու զարգացել են կողք-կողքի: Նրանք ծաղիկների նման իրենց ժամանակաշրջանի և տարբեր կլիմայական պայմանների արդյունք են: Պետք է այդ տարբեր գույնի ու բույրի ծաղիկները հավաքել ու կազմել այն գեղեցիկ փունջը, որը կոչվում է քրիստոնեական եկե-

ՄԱ - 15459

ղեցիների միություն, եղբայրություն:

Այս խոհերով ու զգացումներով թույլ տվեք վերստին բարի գալուստ մաղթել Ձեզ: Ձեր այցելությունը մեր ճեմարանի պատմության մեջ կմնա որպես հիշատակության արժանի այցելություն:

Ընդունեցեք մեր բարեմաղթությունները Ձեր աստվածահաճո գործերի ապագա հաջողության համար»:

Այնուհետև գործադրվում է գեղարվեստական մի կոկիկ ծրագիր: Հոգևոր ճեմարանի սաները, տ. Մասիս աբեղա Գալստյանի ղեկավարությամբ, հաջորդաբար երգում են «Էջ Միածինն ի Հօրէ», «Գովեա Երուսաղէմ» և «Որք զարդարեցին» շարականները:

Ա. լսարանի ուսանող Ավետիս Արթինյանը դաշնամուրի վրա կատարում է Ի. Ս. Բախի «Ռե մինոր տոկատա»-ն, իսկ Գ. դասարանի ուսանող Կիրակոս Հովնանյանը՝ իր ստեղծագործությունը՝ «Հայկական պար»-ը:

Ա. լսարանի ուսանող Վաչե Նալբանդյանը անգլերեն լեզվով արտասանում է Էդուարդ Դայրի «Մայ մայնդ թու մի ը քինգդոմ իզ» բանաստեղծությունը:

Հոգևոր ճեմարանի սաները երգում են Էդգար Հովհաննիսյանի «Էրեբունի» և Առնո Բաբաջանյանի «Ազգ փառապանծ» հայրենասիրական երգերը:

Այնուհետև հանդես է գալիս հոգևոր ճեմարանի «Զվարթնոց» ևվագախումբը՝ կատարելով «Լուռ գիշեր, սուրբ գիշեր», «Ով զարմանալի», «Գլորի Ալելուիա», «Պոլյուշկա պոլե» և «Ալագյազ» երգերը:

Հանդեսի վերջում հոգևոր ճեմարանի ուսանողությանն ուղղված խոսքով հանդես է գալիս Նորին գերազանցություն կարդինալ Ժան Վիլլբրանդը: Նա նախ իր սրտագին շնորհակալությունն է հայտնում իր և իր գլխավորած պատվիրակության մյուս անդամների պատվին կազմակերպված սույն հանդեսի համար՝ նշելով, որ իրեն զգում է իրենց հոգևոր ճեմարաններից մեկում՝ շրջապատված հարազատ դեմքերով և տեսիլք ունեցող պատանիներով: Ապա սրբազան կարդինալն ավելացնում է, որ ինքը երկար ժամանակ եղել է ուսուցիչ և ուսուցչապետ, դաստիարակել հոգևոր սպասավորությանը նվիրված բազում երիտասարդ սերունդներ, և այդ հանգամանքն իսկ իրեն առավել սիրելի և հարազատ է դարձնում այս միջավայրը: Նա գնահատանքով է արտահայտվում հայ եկեղեցու և հոգևորականության կատարած դերի մասին հայ ժողովրդի պատմության ամբողջ ընթացքում՝ հույս հայտնելով միաժամանակ, որ հոգևոր ճեմարանի այսօրվա սաներից շատերը ապագայում կդառնան իրենց պանծալի հայրերի արժանավոր հաջորդները:

Այնուհետև կարդինալ Վիլլբրանդը սրտաբուխ մաղթանքներ է ուղղում ճեմարանի ուսանողությանը՝ ցանկանալով նրանց հաջողություն ուսման և հոգևոր զարգացման ասպարեզում:

Վերջում սրբազան կարդինալը լատիներեն լեզվով օրհնում է ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը, նրա դասախոսներին և ողջ ուսանողությանը:

Այս արտառուչ հանդիպումն ավարտվում է Տերունական աղոթքով:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ

Հունիսի 18-ին, կիրակի: Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը և կարդինալ Ժան Վիլլբրանդը,



ՀԱՅՑՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՒ ԿԱՐԴԻՆԱԼ ԺԱՆ ՎԻԼԼԲՐԱՆԴԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՀՅՈՒՐԵՐՈՎ ԵՒ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՎ

ընկերակցությամբ տ. Ռոժե և տ. Սերուլբե արքեպիսկոպոսների և տ. Հուսիկ եպիսկոպոսի, եկեղեցական թափորով առաջնորդվում են Մայր տաճար: Թափորին մաս են կազմում նաև հայր Ջոն Լոնգը և հայր Ներսես Տեր-Ներսեսյանը:

Մայր տաճարի շրջափակում հավաքված խուռներամ բազմությունը ջերմ արտահայտություններով է ողջունում Հայոց Հայրապետին և Մայր Աթոռի թանկագին հյուրերին:

Եպիսկոպոսական ս. պատարագը շարունակվում է վեհաշուք կերպով՝ բոլոր ներկաներին հոգեկան մխիթարություն և բավարարություն պատճառելով:

«Հայր մեր»-ից առաջ Հայոց Հայրապետը առաջնորդվում է Ավագ սեղան և խոսում մի ներշնչված քարոզ՝ «Ձիշեցեք զառաջնորդս ձեր որ խօսեցաւ ձեզ զբանն Աստուծոյ» բնաբանով, ոգեկոչելով ս. Գրիգոր Լուսավորչի անունը, պանծալի հիշատակն ու կատարած գործը:

Քարոզի վերջում Հայոց Հայրապետը առանձին գոհունակության զգացմունքով ողջունելով ներկայությունը հարգարժան հյուրերի, ասում է.

Այսօր Մենք շատ երջանիկ ենք, որ սուրբ Գրիգոր Լուսավորչի հիշատակը Մեր սրտում, պատեհությունը ունենք ողջունելու այստեղ Հռոմեական կաթողիկե եկեղեցու բարձրաստիճան ներկայացուցիչներ՝ Նորին գերազանցություն կարդինալ Ծաո Վիլլբրանդսին, Մարսելի արքեպիսկոպոս գերաշնորհ Ռոժե Էչեգարային, հայր Ջոն Լոնգին և սուրբ Ղազարի Մխիթարյան միաբանության անդամ հայր Ներսես Տեր-Ներսեսյանին, որոնք գալիս են հավիտենական քաղաք Հռոմից՝ իբրև պատգամաբերները Նորին Սրբություն Պողոս Զ Պապի: Մեր մեծարգո եղբայրները իրոք որ իշխանաբար են ներկայացնում Հռոմի եկեղեցին:

Ձեզնից շատերը հիշում են անշուշտ, որ երկու տարի առաջ, 1970 թվականի մայիսին, Վատիկանում Մենք եղանք հյուրը Սրբազան Քահանայապետի և սքանչելի տպավորություններ կրեցինք Մեր այցելությունից: Վերջերս Մայր Աթոռի տպարանից հրատարակվեց այդ պատմական այցելությանը վերաբերող մի հուշագիրք: Հետևաբար դուք այսօր ըմբռնում եք մեծ նշանակությունը մեր հյուրերի այցելության:

Մեր օրերում ամբողջ աշխարհում կա ուժեղ, համաժողովրդական մի ձգտում՝ ժողովուրդների միջև բարեկամության և եղբայրության: Այդ ճանապարհի վրա իր վճռական նշանակությունը կոչված է ունենալու էկումենիկ կոչված շարժումը, որը քրիստոնյա բոլոր եկեղեցիների միջև մերձեցման և համագործակցության հետզհետե ծավալվող մի մեծ շարժում է:

Անցյալում, դժբախտաբար, եկեղեցիների միջև երբեմն գոյություն են ունեցել ոչ բարեկամական հարաբերություններ: Այժմ այդ բոլորը անցյալին են պատկանում: Այսօր բոլոր եկեղեցիները ներշնչված են փոխադարձ սիրո, եղբայրության ոգով: Ահա այս շարժման գլուխն է կանգնած, Հռոմեական մեծ եկեղեցու կողմից, Մեր սիրելի եղբայր կարդինալ Վիլլբրանդսը:

Կարծում ենք, որ սխալված չենք լինի, եթե ձեր բոլորի անունից ողջունենք նրա ներկայությունը մեր մեջ՝ մաղթելով միաժամանակ, որ Աստված երկար կյանք պարգևի Նորին Սրբություն Պողոս Զ Պապին, որը սքանչելի մի հովվապետ է, համակ սեր և բարություն դեպի բոլոր մարդիկ անխտիր: Նա տիվ և գիշեր աշխատում է և ամբողջ աշխարհին սիրո և խաղաղության խոսք ուղղում: Ահա թե ինչու Նրա կյանքը թանկ է նաև մեզ համար:

Մաղթում ենք նաև, որ Նորին Սրբության գործակիցները իրենց պարտականությունների վրա ամուր կանգնած՝ շարունակեն իրենց սուրբ գործը՝ ի մխիթարություն համայն քրիստոնեության:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Հավարտ ս. պատարագի Վեհարանի գահասրահում տեղի է ունենում հանդիսավոր ընդունելություն, որին ներկա են, բացի հյուրերից, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները և Երևանի մշակութային ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ընդունելությանը ներկա է նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Ս. Գասպարյանը:

Գահասրահում հյուրերին ուղղված հետևյալ ողջույնի խոսքով հանդես է գալիս տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը.

«Վեհափառ Տեր,

Այսօր բացառիկ և հանդիսավոր օր մըն է Մայր Աթոռիս և ընդհանրապես Հայաստանյայց եկեղեցվո համար, վասնզի այսօր, տարվան մեջ երրորդ անգամ ըլլալով, ոգեկոչեցինք հիշատակը հայ ժողովուրդի մեծ Լուսավորիչ սուրբ Գրիգորին որ իբրև կազմակերպիչը առաքելական քարոզությամբ Հայաստան աշխարհի մեջ արդեն գոյություն ունեցող քրիստոնեական կրոնքին, և հիմնադիրը Մայր Աթոռ ս. Էջմիածնի, իր աստվածարյալ անձին և սուրբ նկարագրին կնիքը դրոշմած է մեր ժողովուրդին և մեր ողջ պատմության վրա:

Եվ այս առթիվ մեր միտքերուն մեջ կվերակենդանանա նաև հիշատակը այն բոլոր երանելի հայրապետներուն որոնք իրենց ոգիներով պայծառացուցին մեր եկեղեցին, ստեղծեցին մեր մշակույթն ու հոգևոր արժեքները:

Վեհափառ Տեր, Դուք այդ երանելի և հավատքով լի հայրապետներուն արժանավոր հաջորդը և անոնց երախտաշատ գործերուն շարունակողը եղաք: Ես չեմ ուզեր այս պահուս անդրադառնալ Ձեր տասնութ տարիներու մեծ աշխատանքին և արդյունավետ գործունեության, այլ միայն երախտագիտությամբ կուզեմ նշել որ Դուք Մայր Աթոռ ս. Էջմիածնին զգեցուցիք իր նախկին փառքը և շքեղությունը՝ Ձեր բացառիկ նվիրումով և շինարար մեծ աշխատանքներով: Ձերդ Վեհափառության ամենեն հատկանշական գործունեությունը եղան Ձեր հայրապետական այցելությունները ի սփյուռս աշխարհի ցրված Ձեր զավակներուն, որոնց ավետեցիք մեր վերածնած հայրենիքի պայծառ իրականությունը և ս. Էջմիածնի խորհուրդն ու կատարած դերը մեր ողջ պատմության ընթացքին:

Պատմական աննախընթաց դեպք մը եղավ նաև 1970-ին Ձեր այցելությունը Հռովմեական կաթոլիկ եկեղեցվո Սրբազան Քահանայապետին՝ Նորին Սրբություն Պողոս Զ Պապին, որով Մայր Աթոռ ս. Էջմիածինը և Հայաստանյայց առաքելական եկեղեցին միջազգային հետաքրքրության առարկա եղան և բոլոր հայ հավատացյալներուն սիրտերը լեցուցին հպարտության և ուրախության զգացումներով:

Այդ պատմական այցելության իբրև հետևանք այսօր քրիստոնեական սիրով և հարգանքով կողջունենք Ս. Պապին կողմե ղրկված մասնավոր պատգամավորության ներկայությունը մեր մեջ՝ նախագահությամբ Նորին

ՄԱՐՍԵԼԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՌՈԺԵ ԷՊԵԳԱՐԱՑԸ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ ԸՆԹԵՐՑՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՊՈՂՈՍ Ջ ՊԱՊԻ ՈՂՋՈՒՅՑԻ ԳԻՐԸ

ամենապատվություն կարդինալ Վիլլբրանդի, որուն կընկերանան նաև Մարսիլիո արքեպիսկոպոս, մեր սիրելի եղբայր Ռոժե Էչեգարայը, հայր Ջոն Լոնգը, ինչպես նաև Միխիթարյան միաբանության անդամներեն հայր Ներսես Տեր-Ներսեսյանը: Մենք վստահ ենք որ այս այցելությունները ավելի պիտի ամրացնեն քրիստոնեական սիրո և գործակցության ոգին երկու եկեղեցիներու միջև՝ խորացնելով քրիստոնեական հավատքը և Քրիստոսի Ավետարանի փրկարար սկզբունքները մեր ժողովուրդին մեջ:

Բարի գալուստ կմաղթենք իրենց և կցանկանք որ նման փոխադարձ այցելություններ շարունակվին՝ նպաստելով եկեղեցիներու շինարար գործակցության, ժողովուրդներու եղբայրության և, ինչու չէ, նաև աշխարհի խաղաղության»:

Այնուհետև Սերովբե սրբազանը ֆրանսերեն լեզվով ողջույնի խոսք է ուղղում նաև Հռոմեական կաթոլիկ եկեղեցու ներկայացուցիչներին.

«Այսօր մեզ բոլորիս համար մեծ ուրախություն է մեր մեջ ունենալ Հռոմեական կաթոլիկ եկեղեցու Սրբազան Քահանայապետ Նորին Սրբություն Պողոս Զ Պապի բարձր պատվիրակությունը:

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի՝ 1970 թվականի պատմական այցելությունից հետո Վատիկան, Նորին Սրբություն Պողոս Զ Պապին, մեր երկու եկեղեցիների միջև սկսվեց քրիստոնեական սիրո և բարեկամության մի նոր շրջան: Եվ այսօր պատվարժան պատվիրակության ներկայությունը այստեղ, ինչպես նաև մեր երկու եկեղեցիների միջև հաստատված եղբայրական կապերը այդ պատմական այցելության բարի պտուղներն են:

Մենք չափազանց ուրախ ենք, որ այդ պատվիրակությունը գլխավորված է Նորին գերազանցություն կարդինալ Ժան Վիլլբրանդի կողմից, որը նախագահն է Սուրբ Աթոռի Քրիստոնյաների միության քարտուղարության՝ ճանաչված ամբողջ աշխարհում իր արդյունավետ գործունեությամբ:

Մենք առանձնապես երջանիկ ենք այս առթիվ, որ մեր մեջ ունենք, որպես այդ պատվիրակության անդամ, մեր շատ սիրելի եղբայր և բարեկամ, Մարսելի արքեպիսկոպոս գերաշնորհ Ռոժե Էչեգարային:

Ես կկամենայի այս առթիվ արտահայտել նաև իմ ուրախությունը Հայաստանում և Մայր Աթոռում նրա ներկայության համար՝ արտահայտելով միաժամանակ, հանձին նրա, իմ երախտագիտությունն ու շնորհակալությունը ասպետական Ֆրանսիային, Ֆրանսիայի եկեղեցուն, ֆրանսիացի ազնիվ ժողովրդին, այն բոլոր դյուրությունների համար, որ նրանք ընձեռել են ֆրանսահայ համայնքին և Ֆրանսիայում գտնվող հայ առաքելական եկեղեցուն:

Մենք ողջունում ենք նաև հոգեշնորհ հայր Ջոն Լոնգին, որը առաջին քարտուղարն է Նորին գերազանցություն կարդինալ Վիլլբրանդի, և որին ես ճանաչում եմ 1970 թվականից: Նա հնարավոր ամեն ինչ արեց՝ Նորին Սրբություն Վազգեն Ա-ի՝ Վատիկան այցելությունը նախապատրաստելու գործում:

Ես կարիք չունեմ ներկայացնելու ձեզ Միխիթարյան միաբանության անդամ հոգեշնորհ հայր Ներսես Տեր-Ներսեսյանին, որին դուք լավ եք ճանաչում»:

Այնուհետև Մարսելի արքեպիսկոպոս Ռոժե Էչեգարայը կարդում է Հռոմի Սրբազան Քահանայապետի եղբայրական սիրո ուղերձը՝ ուղղված Հայոց Հայրապետին (Սրբազան Պապի սույն ուղերձը տես «Էջմիածին» ամսագիր, սույն համար, էջ 7):

Ապա տեղի է ունենում պաշտոնական ճառերի փոխանակում Վեհափառ Հայրապետի և կարդինալ Ժան Վիլլբրանդի միջև (Սույն. ճառերը տես «Էջմիածին» ամսագիր, սույն համար, էջ 8—10 և 11—13):

Ժամը 15-ին Վեհափառ Հայրապետի կողմից տրվում է պաշտոնական ճաշկերույթ, որին մասնակցում են Վեհափառ Հայրապետը, կարդինալ Ժան Վիլլբրանդը, Մարսելի արքեպիսկոպոս Ռոժե Էչեգարայը, տ. Սերովբե և տ. Կոմիտաս արքեպիսկոպոսները, տ. Հուսիկ եպիսկոպոսը, տ. Ջոն, տ. Ներսես, տ. Եփրեմ, տ. Մեսրոպ, տ. Նարեկ, տ. Ոսկան, տ. Աղան վարդապետները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ պրոֆ. Ա. Առաքելյանը, դոկտ. Ս. Մելիքսեթյանը, Հովհ. Թոփուզյանը, տ. Հովհաննես և տ. Ռուբեն քահանաները, պրն. Պարգև Շահբազյանը:

Ս. Գեղարդի վանքում

Ճաշկերույթին ներկա են նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Ս. Գասպարյանը և Երևանի ռադիոկոմիտեի արտասահմանյան հաղորդումների բաժնի վարիչ պրն. Շահե Տատուրյանը:

Ճաշկերույթի ժամանակ տ. Արսեն վրդ. Բերբերյանը Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի անունից անգլերեն լեզվով բարիգալստյան և ողջույնի խոսք է ասում՝ ուղղված հարգարժան հյուրերին:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, հյուրերը այցելում են Օշական, ս. Մեսրոպ Մաշտոցի շիրմին՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու մեծ վարդապետի անմահ հիշատակին:

Այնուհետև հյուրերը, վերադառնալով Մայր Աթոռ, տեսակցություն են ունենում Վեհափառ Հայրապետի հետ:

Հունիսի 19-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, հյուրերը, ուղեկցությամբ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի և տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանի, այցելում են Ծիծեռնակաբերդ, իրենց աղոթքը կատարելու հայ նահատակաց հուշարձանի առջև: Ապա այցելում են ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ուր նրանց ջերմորեն ընդունում է տնօրեն պրոֆ. Լևոն Խաչիկյանը: Հյուրերն այնտեղ մեծ հիացումով ծանոթանում են հայ մշակույթի և արվեստի անկրկնելի գանձերին:

Այնուհետև հարգարժան հյուրերը ուղևորվում են ս. Գեղարդ: Վանքի պարիսպների մուտքի առջև հյուրերին աղ ու հացով և խաչով դիմավորում են տ. Նարեկ վրդ. Շաքարյանը և վանքի հոգևորականներն ու պաշտոնեությունը: Ի պատիվ հյուրերի, վանքի բակի մուտքի առջև բաց են թողնվում մոտ 50 աղավնիներ: Թե՛ աղ ու հացով դիմավորվելը և թե՛ աղավնիների բացթողումը մեծ տպավորություն են թողնում հյուրերի վրա և նրանց հոգին լցնում խոր հուզումով և խանդավառությամբ:

Այնուհետև Մայր եկեղեցում տեղի է ունենում էկումենիկ աղոթք, որից հետո տ. Նարեկ վրդ. Շաքարյանը հյուրերին մանրամասն բացատրություններ է տալիս ս. Գեղարդա վանքի մասին:

Վերջում վանական մթնոլորտում, հին հայկական ավանդությամբ, ի պատիվ հյուրերի, տրվում է ճաշկերույթ:

Հյուրերը գոհունակությամբ հրաժեշտ են տալիս պատմական վանքին և վերադառնում Էջմիածին:

Վերադարձի ճանապարհին նրանք այցելում են նաև Գառնիի վերականգնվող հեթանոսական տաճար:

ՀՈԳԵՎՈՐ ՀԱՄԵՐԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, Մայր տաճարում տեղի է ունենում հոգևոր երաժշտության համերգ:

Վեհափառ Հայրապետը և հարգարժան հյուրերը Մայր Աթոռի միաբանության կողմից առաջնորդվում են Մայր տաճար: Տաճարի քառաձայն երգչախումբը պրն. Խորեն Մելխաձեջյանի ղեկավարությամբ, կատարում է հայկական, ռուսական և արևմտաեվրոպական մի շարք հոգևոր երգեր:

Ողջ երգեցողության ընթացքում, որը տևում է մեկ ժամից ավելի, համակ լսողություն է դառնում խուռներամ ժողովուրդը՝ վերացած ու հափշտակված:

Ս. Էջմիածնի կամարների տակ լսվում են հոգևոր երգերի ներդաշնակ ու հոգեպարար հնչյուններ: Եկեղեցին լցվում է ներշնչանքով, հնամյա տաճարի խնկաբույր պատերը արձագանքում են բազմադարյան հայ երգերի հոգեզմայլ մեղեդիները:

Հիասքանչ երգեցողությունից հետո, «Հայրապետական մաղթանք»-ի երաժշտության ներքո, Վեհափառ Հայրապետը և հյուրերը դուրս են գալիս եկեղեցուց և առաջնորդվում Վեհարան՝ մեծապես ազդված հոգևոր զմայլելի երաժշտությունից:

ՀՐԱԺԵՇՏ

Ժամը 21-ին Վեհարանում տեղի է ունենում հրաժեշտի ընդունելություն, որի ընթացքում փոխանակվում են հուշանվերներ:

Վեհափառ Հայրապետը եղբայրական սիրո ողջագուրումով հյուրերին բարի ճանապարհ է մաղթում:

Ժամը 22-ին Հռոմեական կաթոլիկ եկեղեցու պատվիրակությունը, հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից, մեկնում է Երևան՝ հայրապետական վիլլա:

Ուշ երեկոյան, ժամը 23.30-ին, Երևանի ռադիոկայանից ձայնասփյուռվում է Վեհարանի գահասրահում տեղի ունեցած կիրակի օրվա հանդիսությունը: Հաղորդվում են լրիվ տեքստերը Ն. Ս. Պողոս Զ Պապի ճամակի, կարդինալ Վիլլբրանդսի ճառի և Ն. Ս. Վազգեն կաթողիկոսի հայրապետական խոսքի:

ՄԵԿՆՈՒՄ

Հունիսի 20-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 9.15-ին, հյուրերը հրաժեշտ են տալիս Հայաստանին և Բեյրութի վրայով մեկնում Հռոմ:

Երևանի օդանավակայանում հայ եկեղեցու հարգարժան հյուրերին ճանապարհում են տ. Սերովբե և տ. Կոմիտաս արքեպիսկոպոսները, Վիեննայի հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը, տ. Ոսկան ծ. վրդ. Դալբակյանը, տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը, Պարգև Շահբազյանը և դիվանատան աշխատող Հակոբ սրկ. Գյոկչյանը:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԵՄԻ ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ վերջերս Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ է նշանակվում վրաձայոց թեմի նախկին առաջնորդ և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը, որը սույն թվականի հունիսի 1-ից հանդիսավորապես ստանձնելու է իր նոր պաշտոնը:

Մայիսի 26-ին, ուրբաթ օրը, ժամը 19-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել Վեհարանում այցելությունը Արարատյան թեմի նորակազմ թեմական խորհրդի անդամների, որի կազմում էին՝

Տ. Ռուբեն քհն. Մարտիրոսյան—քարտուղար.

Տ. Սարգիս քհն. Թաշճյան.

Մուշեղ Սերոբյան (միաժամանակ ս. Սարգիս եկեղեցու եկեղեցական խորհրդի նախագահ).

Գևորգ Համալյան (միաժամանակ Երևանի ս. Հովհաննես եկեղեցու եկեղեցական խորհրդի նախագահ).

Խաչիկ Գուզուբաշյան (Երևանի ս. Զորավար եկեղեցու եկեղեցական խորհրդի նախագահ).

Ջավեն Աղասյան.

Գառնիկ Քեհյայան.

Լևոն Գարամանուկյան.

Գուրգեն Մուրադյան:

Ընդունելությանը ներկա են լինում նաև տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը:

Վեհափառ Հայրապետը աղոթքով բացում է սույն հանդիպումը:

Լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոսը Վեհափառ Հայրապետին է ներկայացնում Արարատյան թեմի թեմական խորհրդի նոր կազմը և խնդրում է Նրա հայրապետական օրհնությունն ու պատգամը, որպեսզի թեմականը իր նորընտիր առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս եպիսկոպոսի գլխավորությամբ իր եկեղեցաշեն գործունեությամբ պայծառացնի Արարատյան թեմի եկեղեցիներն ու սրբավայրերը՝ ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:

Հայոց Հայրապետը, խոսք առնելով, սիրով և գոհունակությամբ ողջունում և հաստատում է թեմական խորհրդի նոր կազմը, որը, ըստ հայրապետական գնահատության, կազմված է տ. Կոմիտաս եպիսկոպոսի գլխավորությամբ, հավատքով, տեսիլքով և լավատեսությամբ՝ տոգորված արժանավոր և փորձառու անդամներից:

Հայոց Հայրապետը մեծ կարևորությամբ շեշտում է, որպես հայ եկեղեցու հատուկ ավանդական դրվածք, թեմի եկեղեցական, վարչական, ֆինանսական կյանքում, հոգևոր դասի կողքին աշխարհական տարրի գործոն մասնակցությունը, մի հանգամանք, որը մեծապես նպաստում է մեր եկեղեցու կենսունակության և արդյունավետ գործունեության: Եկեղեցին, նշում է Հայոց Հայրապետը, նաև այս ձևով չի բաժանվում իր ժողովրդից:

Քարոզում է տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը Երևանի ս. Սարգիս եկեղեցում

Այնուհետև Հայոց Հայրապետը շնորհավորում է նորընտիր առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս եպիսկոպոսին, թեմական խորհրդին և անում մի շարք թելադրություններ թեմի վերակազմակերպության համար:

Արարատյան թեմը, որպես հայրապետական թեմ և մեր թեմերի գլուխն ու բարձունքը, եղել է միշտ անմիջական հովանավորության ներքո Մայր Աթոռ ս. Էջմիածնի և նրա գահակալի: Մայր Աթոռը Արարատյան թեմից այսօր էլ մեծ սպասելիքներ ունի հոգևոր, եկեղեցական և կազմակերպչական տեսակետներից:

Հայրապետական Իր խոսքի վերջում Նորին Սրբությունը օրհնում է Արարատյան թեմի նորընտիր առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքազանին, թեմական խորհրդի անդամներին և նրանց բարեմաղթում նորանոր հաջողություններ իրենց հոգևոր, եկեղեցանվեր ծառայության ճանապարհի վրա:

Շնորհակալության և որդիական երախտագիտության ջերմ խոսք է ասում տ. Կոմիտաս արքազանը՝ հանուն թեմի եկեղեցական, թեմական իշխանության՝ վստահեցնելով Հայոց Հայրապետին, որ թեմի վերակազմակերպումը պարտավորեցնում է իրեն, թեմական, եկեղեցական խորհուրդներին և ողջ քահանայից դասին՝ արդարացնելու Հայոց Հայրապետի բարձր ուշադրությունն ու վստահությունը՝ ի պայծառություն մայրաքաղաքի եկեղեցիների, պատմական վանքերի և արբատեղիների և ի շինություն հայ ժողովրդի հոգևոր կյանքի:

Նույն ոգով արտահայտվելով խոսք են առնում տ. Ռուբեն քհն. Մարտիրոսյանը և թեմական խորհրդի անդամները:

* * *

Հանդիսավոր ս. պատարագ ս. Սարգիս եկեղեցում

Մայիսի 28-ին, կիրակի օրը, Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ Երևանի ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում տեղի է ունենում հանդիսավոր ս. պատարագ՝ թեմի առաջնորդական փոխանորդի՝ իր նոր պաշտոնը ստանձնելու առիթով:

Օրվա հանդիսության ս. պատարագը մատուցում է առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը: Ս. սեղանին սպասարկում են տ. Զարեհ քհն. Բասմաջյանն ու տ. Սարգիս քհն. Թաշճյանը:

Հանուն Վեհափառ Հայրապետի, ս. պատարագին ներկա են լինում Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, դիվանապետ Հ. Առաքելյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը:

Եկեղեցին լիքն է հավատավոր բազմությամբ:

«Հայր մեր»-ից առաջ բեմից տ. Զարեհ քհն. Բասմաջյանը, ի լուր ժողովրդյան, ընթերցում է մայիս 27 թվակիր հայրապետական սրբատառ կոնդակը, որով Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ է նշանակվում տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը:

Այս ուրախ առիթով Հայոց Հայրապետը, Իր բարձր գնահատությանն արժանացնելով տ. Կոմիտաս եպիսկոպոսի երկարամյա եկեղեցանվեր թեմական, վարչական գործունեությունն ու ծառայությունը Շիրակի և վրաձայոց թեմերում, Իր նույն սրբատառ կոնդակով նրան շնորհում է արքության պատիվ:

Հայրապետական սույն կոնդակը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 3):

Հայրապետական կոնդակի ընթերցումից հետո, հանուն Հայոց Հայրապետի և Գերագույն հոգևոր խորհրդի, շնորհավորանքի ջերմ ու եղբայրական խոսքով հանդես է գալիս լուսարարապետ տ. Հուսիկ սրբա-

զանը՝ վեր հանելով նաև տ. Կոմիտաս արքեպիսկոպոսի կենսագրության ուսանելի կողմերը որպես Մայր Աթոռի միաբանի, վարդապետի, եպիսկոպոսի, թեմական առաջնորդի և Գերագույն հոգևոր խորհրդի անդամի:

Այնուհետև քարոզում է տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը՝ «Որ կամիցի ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ... Որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ, այլ՝ պաշտել» (Մատթ. Ի 28) բնաբանով: Քարոզիչ սըրբազանը գեղեցկորեն զարգացնում է այն միտքը, թե Արարատյան թեմում իր նոր ծառայության կանչվելը ոչ թե պաշտոնի փոփոխություն է իրեն համար, այլ ավելի պատասխանատու մի պարտականության փոփոխություն, և հույս է հայտնում, որ օգնականությամբ Աստուծո, օրհնությամբ Հայոց Հայրապետի և սրտագին աղոթքով հավատացյալ իր ժողովրդի, համագործակցությամբ Արարատյան թեմի հոգևոր դասի և թեմական, եկեղեցական խորհուրդների, հնարը կաշխատի արդարացնել Հայոց Հայրապետի բարձր վստահությունը՝ ի պայծառություն թեմի եկեղեցիների և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:

Ժամը 15-ին թեմական-եկեղեցական խորհուրդները, ի պատիվ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսի, «Արմենիա» ճաշասրահի մասնավոր դահլիճում կազմակերպում են ընդունելություն, մասնակցությամբ 40 հրավիրյալների:

Ընդունելության ժամանակ արտասանվում են շնորհավորանքի ջերմ խոսքեր: Ելույթներ են ունենում տ. Կոմիտաս, տ. Հուսիկ սրբազանները, քահանա հայրերը, թեմական և եկեղեցական խորհուրդների անդամները, դիվանապետ Հ. Առաքելյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը:

Տ. Կոմիտաս արքեպիսկոպոսին շնորհավորում են նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը և Սպանդարյանի շրջանի գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ Հակոբյանը:

«Էջմիածին» ամսագիրը շնորհավորում է Արարատյան թեմի նորընտիր առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսին և բարեմաղթում նորանոր հաջողություններ նրան՝ իր պատասխանատու և բարձր նոր պաշտոնի մեջ՝ հուրախություն Հայոց Հայրապետի, ի պայծառություն թեմի բոլոր եկեղեցիների և սրբավայրերի և ի տխիթարություն հայ հավատավոր ժողովրդի:



ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԱՑՐ ՏԱՃԱՐՈՒՄ՝ ՄԵԾԱՆՈՒՆ ՆԿԱՐԻՉ ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻ ԱՌԹԻՎ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ հունիսի 11-ին, կիրակի օրը, Մայր տաճարում կատարվում է հոգեհանգստյան մասնավոր կարգ՝ հայ ժողովրդի տաղանդավոր զավակ, մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանի մահվան քառասունքի առթիվ:

Ժամը 11-ին սկսվում է ս. պատարագը: Պատարագում է տ. Արսեն վրդ. Բերբերյանը:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը, շրջապատված բարձրաստիճան հոգևորականներով, առաջնորդվում է Մայր տաճար:

Հավարտ ս. պատարագի ընթերցվում է Վեհափառ Հայրապետի ցավակցական կոնդակը՝ գրված Մարտիրոս Սարյանի մահվան տխուր առիթով, որը լույս է տեսել «Էջմիածին» ամսագրի 1972 թվականի Ե համարում (էջ 3):

Ապա Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ կատարվում է հոգեհանգստյան մասնավոր արարողություն:

Երգեցողությունը կատարում է Մայր տաճարի երգչախումբը՝ Խորեն Մելխանեջյանի ղեկավարությամբ և երգչուհի Լուսինե Զաքարյանի մենակատարությամբ:

Ս. պատարագին, ինչպես նաև հոգեհանգստյան արարողությանը ներկա են լինում մեծ նկարչի հարազատները, բարեկամները և նրա արվեստի երկրպագուները:

Հոգեհանգստյան արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, որտեղ ջերմ սիրով ընդունում է Մարտիրոս Սարյանի սգավոր ընտանիքի անդամներին ու բարեկամներին և մխիթարության ու սփոփանքի խոսք ասում նրանց:

Թող Աստված հոգվո հանգիստ պարգևի հանգուցյալին, թող անթառամ մնա նրա լույս հիշատակը:

ԿԵՉԱՌԻՍԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ

(Գործ՝ ֆրանսահայ ծանոթ նկարիչ Զարեհ Մուրաֆյանի. նվեր Մայր Աթոռին. չափերը՝ 93×78 սմ)



ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 10-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 12-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, բարձր նախագահությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, տեղի է ունենում 1971—1972 ուսումնական տարվա ամավերջի հանդիսությունը, որին ներկա են լինում Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, պաշտոնեությունը, ճեմարանի դասախոսական կազմը և այլ հրավիրյալներ:

Ներկաները հոտնկայս լսում են Հայկական ՍՍՀ պետական հիմնը, ապա՝ «Ճեմարանական քայլերգ» խմբերգը:

Այնուհետև հոգևոր ճեմարանի դասախոս տ. Աղան վրդ. Բալիոզյանը բաց է անում հանդեսը իր հետևյալ խոսքով.

«Վեհափառ Տեր և հարգելի հանդիսականներ

Աստուծո ողորմությամբ և Ձերդ Սրբության օրհնությամբ այսօր ս. Էջմիածնի հոգեվոր ճեմարանը խաղաղ և անդորր պայմաններու տակ բոլորեց ուսումնական տարի մըն ալ:

Կարծեք երեկ էր տակավին, որ այս նույն նվիրական հարկի տակ, խունկով ու աղոթքով բացումը կատարեցինք 1971—1972 ուսումնական տարվա, ու այսօր, փառք Ամենակալին, որ դարձյալ այստեղ, այս նույն հարկի տակ հավաքված ենք՝ սրտի անհուն գոհունակությամբ փակելու ուսումնական տարին:

Վեհափառ Տեր,

Ձերդ Սրբության գլխավորությամբ հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ամբողջ ուսումնական տարի մը, պարտքի և պարտականության գիտակցությամբ, ջանաց կատարել իրեն վստահված սրբազան գործը՝ տալով իր հոգիեն ու մտքեն բաժին մը ճեմարանի ուսանողության, որպեսզի ոչ միայն զարգացած, այլև ավելին՝ կրթված ուսանողներ, տիպար ուսանողներ հրամցնե հայ հասարակության: Յուրաքանչյուր դասախոս ներմուծած մը եղավ ուսանողներուն համար՝ անոնց սրտին ու հոգիին մեջ ներմուծելով բարի սերմեր. վստահ ենք, որ այդ սերմերը իսկան բարեբեր հողի մեջ:

Այս պահուս, երբ մեր հայացքը կերկարի դեպի անցյալը, դեպի տարեսկիզբը, երբ հաշվեհարդարի կենթարկենք ամբողջ ուսումնական տարին, սրտի գոհունակությամբ կմիանանք մեր մեծ բանաստեղծին՝ ըսելու համար, թե կյանքեն մեզի մնաց այն, ինչ որ տվինք ուրիշին:

Վեհափառ Տեր,

Ուսանողները հրճվանքով ու ժպիտներով դիմավորեցին ուսումնական տարեսկիզբը, ու այսօր ավելի փայլուն ժպիտներով կդիմավորեն արձակուրդը, ոչ թե արձակուրդի սիրույն, այլ տարվա ընթացքին իրենց բաշխված գիտելիքներու սիրույն, որոնցմով անշուշտ բան մը ավելցավ իրենց գիտելիքներուն վրա: Այսօր անոնք գեղեցիկ հույսերով ու ապագայի վառ երազներով կդի-

մալորեն արձակուրդը՝ հաջորդ տարին ավելի թարմացած ուժերով վերսկսելու համար:

Ահա այս մի քանի խորհրդածություններով կուզեմ վերջացնել իմ խոսքը և այսօրվա հանդեսը բացված հայտարարել»:

Այնուհետև հոգևոր ճեմարանի երգչախումբը կատարում է «Էջ Միածին ի Հօրէ» և «Որք զարդարեցին» շարականները:

Ամավերջի հանդիսության առաջին մասի ընթացքում (գեղարվեստական բաժին) Գ դասարանի սան Սարգիս Քյոսամանուկյանը արտասանում է Դ. Վարուժանի «Անդաստան»-ը, Բ լսարանի սան Հակոբ սրկ. Խաչատրյանը՝ Հ. Թումանյանի «Լուսավորչի կանթեղը» բանաստեղծությունը, իսկ նույն լսարանի սան Ավետիք սրկ. Արաբաջյանը՝ ռուսերեն լեզվով գրված իր ինքնագիր քերթվածը:

Բ լսարանի ուսանող Վրեժ սրկ. Նաջարյանը և Ա լսարանի ուսանող Հրանդ Աղաջանյանը միասին դաշնամուրի և իոնիկայի վրա կատարում են Բախ-Գունոյի «Ավե Մարիա»-ն: Ա լսարանի ուսանող Ավետիս Արթինյանը իոնիկայի վրա կատարում է Ս. Բախի «Ռե մինոր տոկատա»-ն, իսկ Գ դասարանի ուսանող Կիրակոս Հովնանյանը, իր ուսուցիչ Թադևոս Ասմարյանի հետ միասին, դաշնամուրի վրա կատարում է իր իսկ գրած «Հայկական նոր պար»-ը:

Հոգևոր ճեմարանի երգչախումբը երաժշտության դասախոս Խորեն Մեյիսանեջյանի ղեկավարությամբ կատարում է Առնո Բաբաջանյանի «Ազգ փառապանծ», Կոմիտասի «Երևան բաղ եմ արել», «Հարսանյաց երգեր» և Էդգար Հովհաննիսյանի «Էրեբունի» խմբերգերը:

Այնուհետև ելույթ է ունենում հոգևոր ճեմարանի «Զվարթնոց» ավագախումբը տ. Մասիս աբեղա Գալստյանի ղեկավարությամբ և կատարում է «Լուռ գիշեր, սուրբ գիշեր», «Ով զարմանալի», «Հայրապետական մաղթանք» և «Ալագյազ» երգերը:

Հանդիսության երկրորդ բաժնում, հանուն հոգևոր ճեմարանի ուսանողության, Բ լսարանի ուսանող Վրեժ սրկ. Նաջարյանը ընթերցում է երախտագիտական և շնորհակալական հետևյալ ուղերձը՝ ուղղված Վեհափառ Հայրապետին և հոգևոր ճեմարանի տեսչությանը.

«Վեհափառ Տեր, սիրելի ներկաներ,

Հավաքվել ենք այս հարկի տակ՝ պատմությանը հանձնելու 1971—72 ուսումնական տարեշրջանը: Այսօրվանից երկու ամսով կդադարի հնչել զանգը, մի զանգ, որ հավաքեց մեզ այս հարկի տակ մի ամբողջ տարի՝ ավելացնելու մեր գիտելիքների պաշարը, մի զանգ, որ հնչեց ու սկիզբ առավ այս սուրբ վայրում Մեսրոպի և իր աշակերտների ջանքերով: Այդ զանգն այնուհետև հնչեց և տարածվեց ողջ հայ աշխարհով մեկ. լավեցին նոր ղողանջներ, բացվեցին մտքի կաճառներ և ծնվեցին մտքի հանճարներ:

Շատ ղողանջներ լռեցին, բայց այս մեկը, որ մայրն է մյուս բոլորի, այս մեկը, որ խոցոտվեց բոլորից ավելի, դիմացավ ժամանակին, և նրա ձայնը մերթ ուրախ ու մերթ տխուր, բայց և հարատև հնչեց անցյալից մինչև ներկան և բարձրագագաթ լեռներից մինչև անհուն տափաստանները: Եվ մեր հախիճք այդ ձայնն ու լույսը արձանագրին մագաղաթների մեջ, քարերի վրա և մարդկանց հոգիներում:

Մարդիկ ոչնչացրին մագաղաթները, բնությունը ավերեց շատ կոթողներ, բայց երկրային տարերքն ու չար մարդիկ չկարողացան այն սրբել հայ մարդու հոգուց:

Այսօր հոգևոր ճեմարանը վերածնված Մայր Աթոռի կողքին շարունակում է իր պատմական առաքելությունը: Մենք այսօր հպարտանում ենք մեր ճեմարանով, որովհետև այն անմիջական շարունակությունն է ս. Մեսրոպի և ս. Սահակի բացած ճեմարանի, որը սրբությամբ է պահպանվել և հասել մեզ: Տեսնելով մեր հայրերի հավատքը և մտքի սխրագործությունը, մենք այստեղ վերստին մկրտվում ենք որպես քրիստոնյա և որպես հայ: Այս բոլորի համար, անկասկած, մենք պարտական ենք մեր ուսուցիչներին, որոնց գլուխն է կանգնած մեր սիրելի Վեհափառը:

Թույլ տվեք, Վեհափառ Տեր, մեր խորին շնորհակալությունը հայտնել Ձեզ, որ, հակառակ ձեր բազում զբաղումներին, ժամանակ եք գտնում գալու այստեղ՝ լույս և գիտություն ջամբելու մեզ»:

Այնուհետև բարեշնորհ սարկավագը, հանուն հոգևոր ճեմարանի ուսանողության, շնորհակալական խոսք է ասում նաև հոգեվոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարուքյանին, որը այս տարեշրջանում ուսանողության համար եղավ սիրելի դաստիարակ ու հայր և ճեմարանի ղեկավարման դժվարին գործը կարողացավ հաջողությամբ հասցնել իր ավարտին: Նա սրտագին մաղթանքներ է ուղղում նմանապես հոգեվոր ճեմարանի դասախոսներին, որոնք ջանք չխնայեցին կրթելու համար ուսանողների միտքն ու հոգին՝ միաժամանակ հանդիսանալով նրանց խորհրդատուները:

Ապա «Հոգևոր ճեմարանը 1971—1972 ուս. տարեշրջանում» հաշվետու զեկուցումով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարուքյանը.

«Վեհափառ Տեր և հարգարժան հանդիսականներ:

Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը բոլորեց իր 1971—72 ուսումնական տարեշրջանը: Էջմիածնի դպրոցը, սուրբ Գրիգոր Լուսավորչի օրերից և սուրբ Մեսրոպ Մաշտոցյան շրջանից սկսած՝ դարից դար այս նվիրական սրբավայրում, որպես ջահ, միշտ բոցավառվել է ու տվել մեր եկեղեցուն ու ժողովրդին հավատքի, մտքի, նվիրումի ուխտապահ զինվորյալ սերունդներ, որոնք հայ եկեղեցու և մեր ժողովրդի մշակույթի ջահը փոխանցել են սերնդից սերունդ և հասցրել մեզ:

Մեզ համար պատասխանատու ու ծանր պարտականություն էր մեր ուսերի վրա վերցնել ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի տեսչության պաշտոնը: Բայց մենք աշխատեցինք մեր ուժերի ներածին չափով արդարացնել մեզ վստահված գործը:

Էջմիածնի այս ս. կամարների տակ մեր կատարած աշխատանքները աստվածահաճո և հոգեկան մխիթարություն պատճառող մի տքնաջան մաքառում է՝ կերտելու համար հոգիներ, որոնք իրենց անձն են նվիրաբերելու եկեղեցու սեղանների առաջ:

Հոգևոր ճեմարանի սաները:

Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը ուսումնական տարվա սկզբին ուներ 41 ուսանողներ, որոնցից 20-ը նախկին ուսանողներն էին: Այսօր ճեմարանում սովորում են 34 սաներ: 7 ուսանողներ ճեմարանից հեռացել կամ հեռացվել են այլ և այլ պատճառներով:

Ըստ դասարանների՝ ուսանողների բաշխումը ունի հետևյալ պատկերը.

Բ լսարան 5 սարկավագ
Ա. լսարան 9 ուրարակիր
Գ դասարան 7 ուսանող
Բ դասարան 6 ուսանող
Ա դասարան 7 ուսանող

Հոգևոր ճեմարանի ուսանողներից 12-ը եկել են սիլուոքի տարբեր թեմերից:

Այս տարի չունեցանք ավարտական՝ Գ լսարան: Հուսով ենք, որ առաջիկա ուսումնական տարում դասարանների թիվը կդառնա դարձյալ վեց:

Դասախոսական կազմը:

Ուսումնա-դաստիարակչական աշխատանքները հոգևոր ճեմարանում ավելի լավ կազմակերպելու համար, Վեհափառ Հայրապետի հավանությամբ, այս տարի դասախոսական կազմի մեջ տեղի ունեցավ որոշ փոփոխություն:

Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի գլուխ կանգնած է ազգիս Վեհափառ Հայրապետը:

Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը այս տարի ևս իր կարելին արեց մեր սաների մտավոր, հոգևոր և ֆիզիկական դաստիարակության համար:

Հոգևոր ճեմարանի տեսչությունը վշտով նշում է, որ այս տարի, հունվար ամսին, կորցրեցինք մեր ավագագույն դասախոս երջանկահիշատակ տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանին:

Այս տարի երկարատև հիվանդության պատճառով ճեմարանի հայրենագիտության ավագ դասախոս պրն. Կամսար Ավետիսյանը նոյեմբեր ամսից չկարողացավ դասավանդել: Նա արդեն ապաքինվում է և հույս ունենք, որ հաջորդ ուսումնական տարում կվերադառնա աշխատանքի:

Այս ուսումնական տարվա սկզբից մեզ մոտ հյուրաբար գտնվող Երուսաղեմի միաբաններից հայր Աղան Բալիոզյանը և Վենետիկի Մխիթարյան միաբաններից հայր Եփրեմ Տեր-Ղազարյանը՝ հունվար ամսից, իրենց կրոնագիտական առարկաների որակյալ դասավանդություններով օգտակար եղան մեր սաներին: Հոգևոր ճեմարանի տեսչությունը, ի թիվս ճեմարանի դասախոսների, իր շնորհակալությունն է հայտնում նրանց և մաղթում կյանքում նորանոր հաջողություններ:

Այս ուսումնական տարվա հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը հետևյալն է..

Վեհափառ Հայրապետ, Գևորգ վրդ. Սերայդարյան, Աղան վրդ. Բալիոզյան, Եփրեմ վրդ. Տեր-Ղազարյան, Մասիս աբեղա Գալստյան, տ. Հովհաննես քհն. Մարուքյան, պրն. Արթուն Հատիտյան, պրն. Պարգեվ Շահբազյան, պրն. Գրիգոր Գյուլյան, պրն. Սամվել Անթոսյան, պրն. Կամսար Ավետիսյան, պրն. Խորեն Մելյահանեջյան, պրն. Արամ Սահակյան, պրն. Երվանդ Մելքոնյան, պրն. Սարգիս Իշխանեջյան, պրն. Խաչատուր Ներսեսյան, պրն. Բարսեղ Թաշճյան, պրն. Հարություն Սիմոնյան:

Այս ցանկին կարելի է ավելացնել պրն. Թադևոս Ամամյանի և տիկ. Ռոզա Գալաջյանի անունները, որոնք բարեխղճորեն շաբաթը 2 օր եկան ճեմարան, առաջինը՝ դաշնամուրի, երկրորդը՝ մեքենագրության դասեր տալու որոշ ուսանողների:

Այս տարի տեսչի օգնական-դաստիարակներ էին պրն. Բարսեղ Թաշճյանը, բարեշնորհ Կտրիճ սրկ. Ներսիսյանը, Ծիրայր սրկ. Սիմոնյանը և Տրդատ սրկ. Շամլյանը: Հակառակ իրենց անփորձությանը, մեր դաստիարակ սարկավագները չորսն էլ տեսչի հետ ձեռք-ձեռքի տված՝ իրենց կարելին արեցին ճեմարանի կարգապահությունը բարձր պահելու համար:

Ուսումնական կյանք:

Հոգևոր ճեմարանի առօրյա կյանքը եղել է նույնը. ժամը 7-ին արթնանալ, մարզանք, առավոտյան ժամերգություն, նախաճաշ, դասեր մինչև 14.30, ապա ճաշ, հանգստյան ժամեր, երեկոյան ժամերգություն, սերտողություն, ընթրիք, դարձյալ սերտողություն և գիշերվա ժամը 10-ին՝ անկողին:

Մարզական կյանքը, հակառակ հատուկ խաղադաշտի բացակայության, այս տարի նույնպես շարունակվեց հոգևոր ճեմարանում: Մեր սաները ունեցել են բասկետբոլի և վոլեյբոլի ընկերական հանդիպումներ հարեվան դպրոցների աշակերտների հետ: Իսկ ձմռան ամիսներին անց է կացվել սեղանի թենիսի միջճեմարանական մրցում:

Հույս ունենք, Վեհափառ Տեր, որ մյուս տարի պիտի ունենանք մեր սեփական դաշտը:

Ուսումնական կյանքի հաջող կազմակերպումը առաջին պայմաններից մեկն է հոգևոր ճեմարանի սաներին գիտելիքներով զինելու համար: Ամբողջ տարին դասերը շարունակվել են կանոնավոր կերպով: Հիվանդության և այլ հարգելի պատճառներով ժամանակավորապես բացակայած դասախոսների ժամերը բաշխվել են այլ դասախոսների վրա՝ դասացուցակի փոփոխումով:

Մեր նպատակն է եղել, մեր սաներին ոչ միայն գիտելիքներ տալ, այլ նաև կերտել նրանց հոգին: Ամեն մի ուսանող եղել է մեզ համար փակ մի աշխարհ, աշխատել ենք մեր ուժերի ներածին չափով կարդալ նրանց հոգին, ճանաչել ու քաջալերել նրանց նախասիրությունները, շեշտը միշտ դնել ինքնուրույն, անկաշկանդ զարգացման վրա: Աշխատել ենք սովորեցնել նրանց ուսումնական կյանքի դժվարությունները հաղթահարելու ուղիները, որպեսզի մեր սաները գիտակցեն իրենց կյանքի նպատակը: Իսկ նպատակի պարզությունը օգնում է ուսանողին և թռիչք տալիս նրա աշխատանքին, որով և ամեն մի խոչընդոտ հեշտությամբ և սիրով հաղթահարվում է:

Ծրագրով նախատեսված դասավանդությունների հետ միաժամանակ, ուսանողների գիտական ու կրթական մակարդակը բարձրացնելու համար, բացի մեր հիմնական դասախոսների ուսումնա-դաստիարակչական աշխատանքներից, հոգևոր ճեմարանի տեսչությունը ամենօրյա հետևողական աշխատանք է տարել: Այս նպատակով էլ Հայոց Հայրապետը համարյա երկու շաբաթը մեկ բոլոր ուսանողներին Իր շուրջը հավաքելով՝ Իր հայրական, կրոնաշունչ, բարոյական խրատներն է տվել ու զրուցել նրանց հետ:

Հոգևոր ճեմարանի հարկի տակ այս տարի տեղի են ունեցել հետևյալ զեկուցումները, հանդիսությունները և հանդիպումները.

1. «Եգիպտահայ գաղութը անցյալում և այսօր».

բանախոս՝ Ներսեհ վրդ. Փապոյճյան:

2. 5 շրջանավարտ սարկավագների ավարտաճառերի բանավոր պաշտպանությունը:

3. Ընդունելություն ի պատիվ Հ. Բ. Ը. Մ. նախագահ Ալեքս Մանուկյանի և նրան ուղեկցող անձանց:

4. «Տարոն գավառի ժողովրդական երգեր»՝

տիկ. Արմինե Գևորգյանի կատարմամբ:

5. Ռումին օրթոդոքս եկեղեցու քահանա և հայրաբանության դասախոս պրոֆ. հայր Կոմանի չորս բանախոսությունները:

6. Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի հիմնադրման 150-ամյակին նվիրված երեկո. զեկուցող՝ Գերագույն հոգևոր խորհրդի անդամ պրն. Հ. Թոփուզյան:

7. «Մայր Աթոռի և Կիլիկյան Աթոռի հարաբերությունները».

զեկուցող՝ պրն. Արթուն Հատիտյան:

8. 1971 թ. դեկտեմբերի 31-ին Նոր տարվա տոնակատարություն:

9. Հանդիպում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղար դոկտ. Էժեն Բլեյկի հետ:

10. Ուղեղի գործունեության մասին երկու զեկուցում.

զեկուցող՝ պրոֆ. Սուրեն Զոհրապյան:

11. Վարդանանց հերոսամարտի տոնակատարությունը.

զեկուցող՝ պրն. Երվանդ Մելքոնյան:

12. «Ներսես Շնորհալի».

բանախոս՝ պրն. Նիկողայոս Թահմիզյան:

Շնորհալու երգերը կատարեցին ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Գոհար Գասպարյանը և ծանոթ երգիչ Գևորգ Եղիազարյանը:

13. Գրական-գեղարվեստական երեկո՝ հոգևոր ճեմարանի ուսանողների ուժերով:

14. «Երուսաղեմի կրոնական, մշակութային և կրթական կյանքը».

բանախոս՝ Աղան վրդ. Բալիոզյան:

15. Մոգական լապտերով հին վանքերի լուսանկարների ցուցադրում.

ցուցադրող՝ կենսաբան և լեզվաբան Վիլլի Օհանջանյան:

16. Ռումին օրթոդոքս եկեղեցու բարձրաստիճան հյուրերի ընդունելություն: Կազմակերպում կրոնական հյուրերի շուրջ երկու բանախոսությունների: Բանախոս՝ արժանապատիվ պրոֆ. Ենե Բրանիշտե:

Շուտով հոգևոր ճեմարան կայցելեն Ն. Ս. Պողոս Զ Պապի ներկայացուցիչները՝

կարդինալ Ժան Վիլլբրանդի գլխավորությամբ:

Հոգևոր ճեմարանի տեսչությունը ուրախ է հայտնելու, որ ճեմարանի «Տաթև» պարբերականը շարունակվեց լույս տեսնել բարեշնորհ Սամվել սրկ. Պետրոսյանի խմբագրությամբ: Ուրախությամբ պետք է նշել, որ «Տաթև» պարբերականը ստեղծագործելու նոր եռանդ ու աշխատելու բարի նախանձ առաջացրեց ուսանողների մեջ:

Այս տարի հոգևոր ճեմարանում կազմակերպվեց «Զվարթնոց» ճվագախումբը՝ տ. Մասիս աբեղա Գալստյանի ղեկավարությամբ: Նվագախումբը բազմաթիվ անգամներ ճեմարանի հարկի տակ իր ելույթներով խանդավառել է ունկնդիրներին: Խումբը ելույթ է ունեցել նաև Էջմիածնի քաղաքային մշակույթի պալատում:

Ե՛վ «Տաթև» պարբերականի խմբագիր Սամվել սրկ. Պետրոսյանը, և՛ «Զվարթնոց» ճվագախմբի ղեկավար Մասիս աբեղա Գալստյանն ու նրանց աջակիցները արժանի են գովասանքի և խրախուսանքի: Ցանկանում ենք նրանց նորանոր հաջողություններ:

Հոգևոր ճեմարանի սաները անխտիր ամեն շաբաթ կինոնկարներ են դիտել Էջմիածնի քաղաքային կինոթատրոնում: Հաճախ կազմակերպել ենք թատերական ներկայացումների դիտումներ և երաժշտական այլևայլ համերգների ունկնդրություն Երևան քաղաքում:

Հոգևոր ճեմարանի գրադարանը գործել է անխափան: Գրադարանի վարիչ սրն. Տաճատ Վարդանյանը այս տարի բարեխղճորեն կատարել է գրադարանային ֆոնդի հաշվառում: Կատարվել է նաև հնատիպ և նոր հրատարակված գրքերի վերագնահատում:

Ամենայն Հայոց Հայրապետի հոգատարությունը մեծ է ուսանողների հանդեպ: Այս բանի արդյունքն է՝ ճեմարանի և միաբանության համար ստեղծված հիվանդանոցը: Նոր հիվանդանոցը գտնվում է ուսանողների ապագա ննջարաններին անմիջապես կից՝ արդիական բոլոր հարմարություններով: Ունենք մնայուն բժիշկ և բուժակ: Բժիշկ սրն. Ֆելիքս Գրիգորյանը և բուժակ սրն. Ալեքսանդր Ավանյանը ամենօրյա հոգատարություն են ցուցաբերում ուսանողների հանդեպ: Ճեմարանի սաների առողջական վիճակը եղել է գոհացուցիչ: Լուրջ հիվանդություններ չեն եղել:

Երկար տարիներից ի վեր ճեմարանի սաների բաղձանքն էր ունենալ ընթերցասրահ և հեռուստացույցի համար առանձին սենյակ: Ճեմարանի տեսչությունը կարողացավ ուսանողների ցանկությանը գոհացում տալ: Այսօր մեր սաները ամենօրյա արտադասարանական ընթերցանությունների համար ունեն հարմարավետ սենյակ, ուր դրրվում են ամենօրյա նոր օրաթերթեր, ամսաթերթեր: Միևնույն սենյակում տեսչության թույլտվությամբ սաները գիշերները դիտում են հետաքրքրական և օգտավետ հաղորդումներ:

Հոգևոր ճեմարանը այս տարի Բեյրութից ստացավ նոր գրասեղաններ, աթոռներ, պահարաններ, որոնք ավելի հարմարավետ են ուսանողների և դասախոսների համար: Այս բոլորը հոգեպես ուրախացնում է մեզ:

Այս տարի հոգևոր ճեմարանի ուսանողությունը խիստ ձմռան և անբարենպաստ եղանակների բերումով չկարողացավ մեկնել միօրյա պտույտների:

Ծուտով, հունիսի 12-ին, հոգևոր ճեմարանի ուսանողությունը և դասախոսական կազմը կմեկնեն չորսօրյա պտույտի: Ծրագրված է այցելել Լենինականի մոտակա Հառիճա և Մարմաշենի վանքերը, Կիրովականով անցնել Օձուն վանքը, ապա Ալավերդի, այնտեղից՝ Սանահին և Հաղպատ վանքերը և ապա վերադարձ Սևանով դեպի Մայր Աթոռ: Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ տարվում են համապատասխան աշխատանքներ՝ պտույտը կազմակերպված և հետաքրքրական անցկացնելու համար:

Հոգևոր ճեմարանը այս տարի ևս տվեց իր հոգևոր հունձքը: Բ լսարանի 5 սաներ ցանկություն հայտնեցին սարկավագ ձեռնադրվելու, և նրանք իրենց ուխտը կատարեցին ս. Ստեփանոսի տոնին՝ ձեռնադրվելով գեր. տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանի կողմից: Ուրարակիր եղան Ա լսարանի 9 սաներ, և դպրության 4 աստիճաններ ստացան Գ դասարանի 7 սաներ: Ճեմարանի տեսչությունը և դասախոսական կազմը սրտանց ուրախանում են և հույս ունեն, որ նրանք շուտով կդառնան եկեղեցու սպասավորներ՝ իրենց կյանքը կապելով այս հաստատությանը:

Հոգևոր ճեմարանի տեսչությունը խոստովանում է, որ հոգևոր ճեմարանում ուսումնա-դաստիարակչական աշխատանքը անթերի չի եղել: Դաստիարակության ճանապարհին եղած թերությունները վերացնելը մեզանից՝ յուրաքանչյուրիցս երկարատև և հետևողական աշխատանք է պահանջում: Դեռևս ցածր մակարդակի վրա է Ա և Բ դասարանների ուսանողների կարգապահությունը:

Սիրելի սաներ, այսօր պատմության գիրկն է անցնում ձեր պատանեկան կյանքի ամենագեղեցիկ տարիներից մեկը: Իմացեք և արժեքավորեք ձեր ուսման տարիները: Ծուտով ձեր ուսանողական կյանքը կդառնա հուշ, իսկ անցյալի օրերը ձեր մեջ կարթնացնեն գեղեցիկ երազներ: Օգտվեցեք առի-

թից և յուրաքանչյուր օր մի նոր բան ավելացրեք ձեր գիտելիքների վրա: Ձեր հոգին լցրեք վեհ գաղափարներով, եղեք ազնիվ, աշխատասեր, բարի և հոգով՝ լուսավոր: Ունեցեք երազ և այդ երազի իրականացման ճանապարհին՝ ամեն մի խոչընդոտ հաղթահարելու կամք և արիություն: Ուսանողի ճանապարհը փշոտ է, բայց նպատակը՝ ազնիվ և հոգեպարար: Ձեզ է նայում հայ ժողովուրդը, ձեզ են նայում Ամենայն Հայոց Հայրապետն ու ձեր հարազատները: Ամեն օր քնելիս մաքուր խղճով քնեցեք ձեր կատարած բարի, աստվածահաճո գործերի համար: Գուցե ձեր մեջ կլինեն վրիպուտացածներ: Գործադրված պատիժները, ինչպես նաև հանդիմանությունները, քաջալերանքները և խրախուսանքները եղել են ձեր հոգու, ձեր նկարագրի կերտման համար: Կիրառված ամեն մի մանկավարժական մեթոդ հետապնդել է միմիայն մեկ նպատակ. այն է՝ չզոջալ ձեզ նման սերունդ դաստիարակելու համար: Մեր լավը տալով ձեզ, ապրենք ձեզանով, հարատևենք՝ փոխանցվելով և բաշխվելով ձեզանով ուրիշներին, և դուք էլ հետագայում մեզ նման ձեր հերթին: Ձեր առաջ է գտնվում ձեր ապագան, ելաճեցեք այդ դժվար, բայց վեհ բարձունքը: Մաղթում ենք ձեզ քաջառողջություն և արձակուրդի բարի վայելում:

Համառոտ այս հաշվետվությունից հետո, թույլ տվեք, Վեհափառ Տեր, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության կողմից համբուրել Ձերդ Սիրության Աջը՝ մաղթելով Ձեզ բեղմնավոր գործունեության երկար տարիներ հայ եկեղեցու հետագա պայծառության համար»:

Այնուհետև տ. Հովհաննես քհն. Մարուքյանը կարդում է հոգևոր ճեմարանի այն առաջադեմ ուսանողների անունները, որոնք սույն ուսումնական տարում ուսման, վարքի, մարմնամարզության և այլ առարկաներում արժանի են համարվել մրցանակի: Նրանք գալիս և աջահամբույրով Վեհափառ Հայրապետից ստանում են իրենց վկայականները:

Մրցանակաբաշխությունից հետո Վեհափառ Հայրապետը շնորհավորանքի և օրհնության խոսք է ասում՝ ուղղված հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարուքյանին, ինչպես նաև դասախոսական կազմին, նրանց կատարած աստվածահաճո և հայրենանվեր գործի համար:

Վեհափառ Հայրապետը շնորհավորանքի և օրհնության խոսք է ուղղում նաև ուսանողներին:

Ամավերջի սույն հանդեսը փակվում է Տերունական աղոթքով:



ՈՍԿԱՆՑԱՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ

(1666 թ., Ամստերդամ)

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունիսի 1-ին, հինգշաբթի.—Տօն սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին. Եկեղեցական հանդէս ի վանս ս. Շողակաթի.

Այսօր ս. Շողակաթ եկեղեցում ս. պատարագ է մատուցում տ. Վարդան քհն. Քեշիշյանը (Աբովյանից):

Ս. պատարագին ներկա են լինում Մայր Աթոռի միաբանությունը և հոգևոր ճեմարանի ուսանողությունը:

* * *

Հունիսի 3-ին, շաբաթ.—Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի վիրապէն.

Այսօր Մայր տաճարում, Իջման ս. սեղանի առաջ, ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

* * *

Հունիսի 4-ին, կիրակի.—Տօն կաթուղիկէ ս. Էջմիածնի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Ավստրալիայի և Նոր Զելանդիայի թեմի առաջնորդ տ. Գարեգին եպս. Գազանճյանը և պատարագի ավարտին քարոզում «Թագաւոր. երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա» բնաբանով:

Այնուհետև, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է հայրապետական մաղթանք՝ «ի յիշատակ կաթուղիկէ ս. Էջմիածնի»:

* * *

Հունիսի 7-ին, չորեքշաբթի.—Այսօր Ավստրալիա՝ իր պաշտոնատեղին է մեկնում տեղի հայոց առաջնորդ տ. Գարեգին եպս. Գազանճյանը:

* * *

Հունիսի 8-ին, հինգշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանում ավարտվում են ամավերջի քննությունները:

* * *

Հունիսի 12-ին, երկուշաբթի.—Այսօր առավոտյան հոգևոր ճեմարանի ուսանողությունն ու դասախոսական կազմը չորսօրյա պտույտի են մեկնում Էջմիածին—Արթիկ—Լենինական — Կիրովական — Ալավերդի — Դիլիջան—Սևան—Երևան —Էջմիածին եր-

թուղով՝ այցելելով մեր պատմական վանքերն ու եկեղեցիները:

* * *

Հունիսի 12-ին, երկուշաբթի.—Այսօր Մայր Աթոռ է ժամանում Շվեդիայի պաղատեենտի ամբասիր և արտաքին հարաբերությունների կոմիտեի փոխ-նախագահ ու Եկեղեցիների համաշխարհային խորհրդի միջազգային գործերի հանձնաժողովի նախագահ պրն. Օլլե Դահլենը՝ իր ազնվափայլ տիկնոջ հետ:

Պատուվարժան հյուրերին ընկերակցում էին Զագորսկի հոգևոր ճեմարանի դասախոս պրոֆ. Կ. Կոմարովը և օրիորդ Ն. Գորինան՝ որպես թարգման:

Հյուրերին Երևանի օդանավակայանում դիմավորում է Մելբուռնի և շրջակայքի հայոց հոգևոր հովիվ տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը:

Նրանք այցելում են Մայր տաճար և այնուհետև ընդունվում Վեհափառ Հայրապետի կողմից Վեհարանում:

Հաջորդ օրը, հունիսի 13-ին, ի պատիվ շվեդացի հյուրերի, տրվում է ճաշկերույթ, որին ներկա են լինում Վեհափառ Հայրապետը, պրն. Օլլե Դահլենը՝ իր տիկնոջ հետ, պրոֆ. Կ. Կոմարովը, օրիորդ Ն. Գորինան, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը և ուրիշներ:

Ճաշկերույթի ընթացքում վեհափառ Հայրապետի, շվեդացի հյուրերի և մյուս ներկաների միջև տեղի է ունենում ջերմ զրույց՝ արտագին մթնոլորտում:

Մայր Աթոռում գտնվելու ընթացքում պատվարժան հյուրերը այցելում են Հայաստանի գիտությունների ակադեմիա, ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Ծիծեռնակաբերդի հայ նահատակաց հուշարձան, «Էրեբունի» թանգարան ու միջնաբերդ, ս. Գեղարդ ու Գառնի:

Հունիսի 15-ին, հինգշաբթի օրը, առավոտյան, շվեդացի հարգարժան հյուրերը մեկնում են Մոսկվա:

Երևանի օդանավակայանում նրանց ճանապարհում է տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը:

* * *

Հունիսի 13-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ է ժամանում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Փրանսիայի հայոց թեմի առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

* * *

Հունիսի 15-ին, հինգշաբթի.—Չորսօրյա պտույտից հետո Մայր Աթոռ են վերադառնում հոգևոր ճեմարանի ուսանողությունն ու դասախոսական կազմը:

* * *

Նույն օրը, երեկոյան, Մայր Աթոռ է ժամանում Զագորսկի հոգևոր ճեմարանի շրջանավարտ տ. Գեորգի քահանա Կրասնոլոժկինը:

Արժանապատիվ տեր հորը Երևանի օդանավակայանում դիմավորում է բարեշնորհ Ավետիք սրկ. Արաբաջյանը:

Տ. Գեորգի քհն. Կրասնոլոժկինը այստեղ գբաղվելու է իր ավարտաճառով, որի թեման է «Հայ եկեղեցին և նրա արդի վիճակը»:

* * *

Հունիսի 22-ին, հինգշաբթի.—Տօն սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ.

Այսօր Մայր Աթոռի միաբանությունն ու հոգևոր ճեմարանի ուսանողությունը ուխտի են գնում Օշական՝ ս. Մեսրոպի դամբարան:

Օրվա հանդիսավոր ս. պատարագը մատուցում է Վիեննայի հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը և քարոզում ս. Սահակի և ս. Մեսրոպի կյանքի և գործունեության մասին:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում հոգեհանգիստ՝ եկեղեցու նորոգության բարերարների՝ Ղազարոսյան և Ալեքսյան գերդաստանների ննջեցյալների հոգիների հանգստի:

* * *

Հունիսի 25-ին, կիրակի.—Ե կիրակի զկնի Հոգեգալստեան. Գիւտ տփոյ սրբուհւոյ Աստուածածնի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը և քարոզում՝ «Համբերութեամբ ձերով ստասջիք զոգիս ձեր» (Ղուկ. ԻԱ 19) բնաբանով:

* * *

Հունիսի 27-ին, երեքշաբթի.—Այսօր Բեյրութի վրայով Փարիզ՝ իր պաշտոնատեղին է մեկնում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

Երևանի օդանավակայանում սրբազանին ճանապարհում էին տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը և Հակոբ սրկ. Գյոկչյանը:

Սերովբե սրբազանը Մայր Աթոռում գրտնրված օրերին, հունիսի 24-ին, ուխտի է մեկնում Տաթևի պատմական վանք՝ ընկերակցությամբ Հակոբ սրկ. Գյոկչյանի:

* * *

Հունիսի 30-ին, ուրբաթ.—Այսօր առավոտյան Բեյրութի վրայով Մելբուռն՝ իր պաշտոնատեղին է մեկնում տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը:

Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը Տաթևի վանքում, այլ ուխտավորների հետ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆԸ*

Ը

Ոսկանը Զմյուռնիայից առաջ գնում է Լիվոռնո, որտեղ բավական թվով հայ վաճառականներ կային: Այնտեղ երկար խոսում է և բացատրում է յուր միտքը և օգնություն է խնդրում տպագրական ծախքերը վճարելու համար: Սակայն, Լիվոռնոյի հայ վաճառականները մերժում են նրան օգնելը: Այստեղից նա գնում է Հռոմ: Այստեղ էլ մխիթարական ոչինչ չի գտնում նա զանազան պատճառներով, ինչպես ինքն է ասում, «թէ՛ ի մերայնոց ազգաց և թէ՛ ինքեանց սահմանաց և կանոնաց»: Ոսկանը կրկին վերադառնում է Լիվոռնո և այս անգամ թեև գտնվում են մարդիկ, որոնք հանձն են առնում նրան օգնել, սակայն, այնպիսի ծանր պայմաններ են դնում, որ Ոսկանը չի համաձայնվում. որովհետև ասում է. «Ոչ օգուտ ազգի և զարբոյ Աթոռոյն, այլ զանձանց զցանկութիւն և կամաց զհաճութիւն կամէին լնուլ»: Ուստի տեղացի հա-

Ամատերդամի հայոց ս. Կարապետ եկեղեցու շինության արձանագրությունը (1663 թ.)

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1972 թվականի №№ Դ—Ե-ից:



ՈՍԿԱՆՑԱՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ

(1666 թ., Ամստերդամ)

յերից հույսը կտրելով, դիմում է ջուղայեցի վաճառականներին և հաջողեցնում է երեք վաճառական հայերի համոզել, որ Աստվածաշնչի տպագրության ծախքը հոգան:

Ջուղայեցի այս երեք վաճառականներն էին Խաչենց Ստեփաննոսը, Տեր-Ավագյան Պետրոսը և Քթոեշենց Թեոդորոսը, որոնք և համաձայնվում են տպագրության ծախքը վճարել, որի համար և առանձին դաշնագիր են կապում: Այս դաշնագրի պայմանների համաձայն Ստեփաննոսը և Պետրոսը խոստանում են Աստվածաշունչ գրոց վաճառումից ավելացած շահը Էջմիածնին ևվիրել. Թեոդորոսը խոստանում է իրեն բաժին ընկած շահի կեսը Երուսաղեմի վանքին, իսկ մյուս կեսը՝ Ուշի ս. Սարգսի վանքին, որի վանահայրն էր Ոսկանը: Ապա Ոսկանը երբ Ամստերդամ է հասնում, առաջին անգամ տպագրել է տալիս իբրև փորձ մի **այբբենարան, որն առաջին տպագրված դասագիրքն է:** Եվ որովհետև Մատթեոս Ծարեցու պատրաստել տված տառերը խոշոր և անհարմար էին և խորագրերի համար էլ տառեր էին պակասում, ուստի Ոսկանը յուր ծախքով նոր տառեր է պատրաստել տալիս և ձեռնարկում է վաղուց հետե շատերի և իր փայփայած միտքն իրագործելու: Այդ հրաշալի գործը, որ **Աստվածաշնչի** տպագրությունն էր, նա 1666 թվականին հաջողությամբ վերջացնում է, չափազանց աշխատանք գործ դնելով ոչ միայն իբրև սրբագրող, այլև իբրև խմբագրող, և բաղդատում է նաև լատիներենի հետ: Վերջինիս համաձայն գլուխների է բաժանում, հատուկ անունների ցանկ կազմում և Սիրաքի գիրքը Էջմիածնի միաբան Ստեփաննոս Լեհացու ձեռքով նորից թարգմանել տալիս:

Հարյուր հիսուն տարուց ավելի էր անցել այն օրից, երբ առաջին հայ գիրքը լույս էր տեսել: Եվ այժմ միայն Ոսկանի նման անվեհեր հոգու, աննկուն կամքի, եռանդուն ջանքերի և անխոնջ աշխատանքի տեր մարդու շնորհիվ **առաջին անգամ տպագրվում է Աստվածաշունչը** այսպիսի խորագրով.

Աստուածաշունչ հնոց և նորոց կտակարանաց ևեր պարունակող. շարադրութեամբ նախնեացն մերոց և ճշմարտասիրաց թարգմանչաց: Իսկ զկնի հրամանաւ Վեհափառին Տեառն Յակոբայ Հայոց կաթուղիկոսի գլխակարգեալ և տնատեալ ըստ Դաղմատացւոցն. նաև զհամաձայնութիւն հանուրց գրոց Աստուածաշնչից, ընդ իրեարս առընթեր կարգեալ ամենեցուն, նուաստի ումեմն բանի Տեառն սպասաւորի, Ոսկանի Երևանեցւոյ: Յամստէրդամ, ևեր տպարանում սրբոյն Էջմիածնի. և սրբոյն Սարգսի զօրավարի, ի թուում Փըրկչին 1666, իսկ Հայոց ՌՃԺԵ նամսեանն մարտի մետասանի:

Աստվածաշնչի այս առաջին տպագրությունը պատկերազարդ էր: Այս մի հատիկ գործն իրոք բավական էր Ոսկանի անունն անմահացնելու և Էջմիածնի դիրքն ու հեղինակությունը բարձրացնելու:

Այնուհետև Աստվածաշնչի մի քանի հրատարակություններ են եղել զանազան քաղաքներում, որոնց մեջ նաև Միխիթար Սեբաստացու հոչակավոր պատկերազարդ 1733 թ. հրատարակած Աստվածաշնչի տպագրությունն է, որը Ոսկանի տպած Աստվածաշնչի արտատպությունն է ներկայացնում*[9]:

---

* Առաջին տպագրությունը տեղի է ունեցել՝
Ա.—Իտալիայում՝ 1464 թ., Գաղղիայում՝ 1470 թ., Զվիցերիայում, Անգլիայում և Իսպանիայում՝ 1474 թ., հայերը Վենետիկում տպել են առաջին գիրքը 1512 թ., Հյուսիսային Ամերիկացիք՝ 1640 թ., տաճիկները՝ 1726 թ., եգիպտացիք՝ 1882 թ., (Աղնք. Երիցյան, Պատմական տեսություն հայ տպագրության, Տփխիս, էջ 2):
Բ.—Հրեաները Կ. Պոլսում գաղտնի կերպով իրենց տպարանն են ունեցել 15-րդ դա-



Գ Ի Ր Ք
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ց·
Շ արադրեալ
Ի ՎԱՐԴԱՊԵՏԻՆ,
ՌՈՒՖԷԼՈՑ ԴԱՎԻԹ
ՅԱԼԾԻՈՑ·

Սակս դիպուածոց հայաստանեայց՝ և
ևս գաւառին արարատոյ՝ և մասին գողթան
գաւառի, սկսեալ՝ի Թուականէն հայոց· 1054· ընդ
մինչև յաւարտ պատմագրութեան· այլև
՝ի յիշատակարանէ մատենաւորաց
բար· առաի և անտի·

Տպագրեալ Տպարանի Ամստերդամու Լիմպենէ.
և Ամստ Մուրէ ընդ·
Ի հայրապետութեան Տեառն Յակոբայ կաթո-
ղիկոսի Աղուանից երկրին·
Ն· ՔՐԻՍՏՈՍԻ Տեառն Ոգեծայ Նչեան
յոյժ բանի ապաստոյ·

ՅԱՄՍԹԻԼՕԴՈՒՄՈՒՄ·
Ի Թուին Քրիստոսի 1669· ին· Յունվ
վարի· 1·
Ի տոմ ըստ Հայոց· 1118· ին
Ահիկ· 29·

Առաքել վարդապետ Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»-ի տիտղոսաթերթը (1669 թ., Ամստերդամ)

Ռևկանը յուր նախորդներից առավել ևս առաջ է գնում: Նա չի բավականանում միայն կրոնական գրքեր տպագրելով, այլ ձեռք է առնում նաև աշ-

---

րում և 1490 թ. տպել են «Աստուծո ժողովրդի պատմությունը» գիրքը: (Լևո, Պատմություն տպագրության, էջ 54):

Գ.—Տպագրությունը Ռուսաստան մուտք է գործել Իվան Դ (Անողի) Վասիլևիչի ժամանակ, Մոսկվայում 16-րդ դարի կեսերին (Журнал литер. критик, за 1934 г.):

Դ.—Վրացական տպագրության սկիզբը.



Առաքել վարդապետ Դավրիժեցու «Գիրք պատմութեանց»-ի 2-րդ էջը

1629 թ. Հռոմում վրացերեն-իտալերեն բառարան.
» » այբբենարան աղոթքներով
1643 թ. » վրացերեն քերականություն Մաջիոյի
1670 թ. » նույնը Բ հրատարակությամբ
1705 թ. Մոսկվայում—Սաղմոս
1709 թ. Տփխիսում—Ավետարան
» » Սաղմոս
» » Առաքելականք

Առաջին վրացական տպարանը Վրաստանում հիմնվել է 1708—1709 թթ. Վախտանգ Զ-ի ձեռներեցությամբ, որը 1712 թ. տպագրել է տվել Շոթթա Ռուսթավելու «Վագրենավորը» քերթվածը: Բոլորը տպված են խուցուրի տառերով: (Լ. Մելիքսեթ-բեկ):

խարհիկ բովանդակությամբ գրքեր հրատարակելու: Նրա ջանքերի շնորհիվ 1669 թվին առաջին անգամ տպագրվում է Առաքել Դավրիժեցու **Պատմությունը**—մի հեղինակ, որ յուր իսկ կենդանության ժամանակ յուր աշխատությունը տպված է տեսնում: 1669 թվին Ոսկանը տպում է նաև Խորենացու **Աշխարհագրությունը**, որին կցված էր **Աղվեսագիրքը:**

Սակայն կաթոլիկ պրոպագանդան չի դադարում և այստեղ Ոսկանին հալածելուց և նա ստիպված Հոլանդիայից տեղափոխվում է Գաղղիա: 1669 թվի մայիսի 6-ին նա լատին լեզվով գրած մի աղերսագրով դիմում է Լուդովիկոս ԺԴ-ին: Այս աղերսագրի մեջ հայտնում է նա դեպի Լուդովիկոս ԺԴ-ը յուր ունեցած խորին հարգանքը և խնդրում է, որ բարեհաճի ընդունել արքունի մատենադարանի համար յուր ձեռքբերած Աստվածաշնչի մի օրինակը: Հրամանագրի մեջ գրված էր և մի պայման, որ գրքերը ուղղափառ, առաքելական հռոմեական կրոնի վարդապետության և հավատալոց հակառակ ոչ մի բան չպետք է բովանդակեն:

Լիվոռնոյում տպարանը բացվում է 1670 թվին, որ 1673-ին տեղափոխվում է Մարսելլ քաղաքը, դարձյալ ս. Էջմիածնի և ս. Սարգսի անունով, որտեղ տպարանը կարողանում է **Ժամագիրք, Պարտէզ հոգևոր, Քրիստոնէական, Գրքոյկ կարևոր, Արհեստ համարողութեան, Կանոնք զգուշութեամբ պահելու զանձն** գրքերը հրատարակել**:

Երբ Հռոմի աթոռը լսում է, թե Ոսկանը յուր տպարանը տեղափոխել է Ֆրանսիա, գրում է թեմական եպիսկոպոսին նորա վերա հսկողություն ունենալու, ավելացնելով, որ Ոսկանը գաղտնի կերպով հարաբերության մեջ է Էջմիածնի պատրիարքի հետ: Մարսելլի գահակալ եպիսկոպոս Տըֆորպեն Ժանսոն նախ պահանջում է Ոսկանից հավատո դավանությունը հայ և լատին լեզվով, ըստ հռոմեական եկեղեցու վարդապետության և ապա իր ընդհանուր փոխանորդի հսկողությանն է հանձնում նոր տպարանը և այնտեղ տպվելիք հայերեն գրքերի քննությունը, հայ լեզվին հմուտ մի քահանայի ձեռքով իրեն սեփականացնում:

Այդ ժամանակ Ոսկանը փողի խիստ կարիք ունենալով և Էջմիածնից խոստացված նպաստն էլ ճանապարհների դժվարության պատճառով չստանալով, ստիպված իրեն ընկեր է դարձրել յուր քեռորդի Թադեոս քահանա Համազասպյանին: Սակայն նա յուր հաշիվների մեջ խիստ սխալվել էր: Համազասպյան քահանան նյութական շահից ավելի ներքին գաղտնի շահերից դրդված էր Ոսկանի հետ ընկերացել և գործում էր նորա տպարանին վնաս տալու նպատակով, գործիք լինելով օտարի ձեռքին:

Ոսկանի նպատակն էր հրատարակել նաև պատկերազարդ **Ժամագիրք,** առանց հեռուն մտածելու, որ դա մի այնպիսի հրատարակություն էր, որ ավելի շուտ պիտի ենթարկվեր մոլեռանդ կաթոլիկների կողմից խիստ գրաքննության: Թադեոս քահանան հենց սկզբից վատ ընթացք է բռնում Ոսկանի դեմ:

---

* **Հ. Գ. Զարբհանալյան,** Պատմություն Հայկ. տպագրության, Վենետիկ, 1895, էջ 114:

** **Լեո,** Հայկական տպագրություն, Ա հտ. Թիֆլիս, 1901, էջ 181:

Ժամագրքի առաջին թերթերը հազիվ թե տպագրվել էին, Համազասպյան քահանան ստոր ճանապարհներով ու մատնություններով աշխատում է Ոսկանին հերետիկոս դուրս բերել և մինչև անգամ խնդիրը պետական ու կրոնական ատյաններին է հասցնում*:

Հալածանքն այնքան է սաստկանում Ոսկանի դեմ, որ նա հոգով տանջանքների մեջ է ընկնում և սրտի ցավից դառնացած Ոսկանը վախճանվում է 1674 թվին, իսկ Թադեոս քահանան շտապում է տերության միջամտությամբ տպարանը փակել տալ**:

Ծպագրական գործն այսպես հալածանքների մեջ շարունակվում է, մինչև որ Մատթեոս Վանանդեցին, որ դեռևս Ոսկանի կենդանության ժամանակ Հակոբ կաթողիկոսի հրամանով եկել էր նորան օգնելու, օժանդակ ունենալով Թովմաս եպիսկոպոս Վանանդեցուն, Ղուկաս և Միքայել Վանանդեցի եղբայրներին, Ոսկանի և Կարապետ վարդապետի մահից հետո, կարողանում է Ոսկանի տպարանը նորից Ամստերդամ տեղափոխել, որտեղ և գործում է այս տպարանը մինչև 1717 թվականը:

Այստեղ Մատթեոսը, Երևանցի Հովհաննես Ուղուրլյան անունով մի քահանայի և ջուղայեցի Պողոս Դուլիաթյանց անունով անձի օժանդակությամբ տպագրում է 1685 թվին **Շարականը**, իսկ հաջորդ տարին տպագրում է **Ժամագիրքը**: Այլ և տպարանը պայծառացնելով՝ տպագրում է նաև Խորենացու **Պատմագրությունը**, 1695 թվին, մանր տառերով տպում է Թովմա Գեմբացին 1696 թվին, և Ղուկասի ձեռքով **ամիսների համաձայնությամբ** պատրաստած **Ավետարանը**՝ 1698 թվին: Դորանից հետո տպում է **Ոսկեայ Դուռն** կոչված և **Գանձ չափուց** 1699 թվին, **«Ձեռբացութիւն»**-ը՝ 1705 թվին, իսկ յուր եղբոր որդի Ղուկասի ու Միքայելի և Թովմաս եպիսկոպոսի գործակցությամբ պատրաստել է տալիս **Համատարած մեծ աշխարհացոյց**: Ղուկասը երրորդ անգամ

---

* **Թեոդիկ**, Տիպ և տառ, Կ. Պոլիս, 1912, էջ 155:

** Օրմանյան Մաղաքիա արքեպիսկոպոսը յուր «Ազգապատում»-ի մեջ հետևյալ խորհրդածություններն է ընծիրում Ոսկանին, գրելով, որ իր կրած երկարատև և «Հոգեմաշ տագնապներուն պետք է վերագրել իր տարաժամ մահը... երբ շատ ավելի արդյունքներ ինար էր սպասել իրեն նման տոկուն և անխոնջ բնավորության վիճակյալ անձե մը...»: Համակասպյանն «ավելի տպարանը փճացնելու և գիտության լույսը մարելու նպատակ ուներ, ինչպես ըսած են զինքը ճանչնող ժամանակակից գմյուռնացիք, որոնք զայն ոչ միայն քահանա, այլև քրիստոնյա կոչելու անարժան կը համարին... Այս կերպով տպագրության ձեռնարկին կատարելապես նահատակ մը եղավ՝ տպարանի փոշիներու մեջ թավալող այս սրբազան արքեպիսկոպոսը, մինչ շատ դյուրին էր իրեն՝ իր ծագմամբ և աստիճանով փառքերու և հեշտություններու մեջ անցնել իր կյանքը, դասակից եկեղեցականներու նման: Ոսկանի անձնավորությունն արժանի է մեր ազգին մտավոր զարգացման տեսակետեն՝ մեծ երախտավորներու կարգը դասվիլ և հայ տպագրությանը իսկական մղում տվողը ճանչցվիլ: Նախընծա տպագրություն ճանչված է 1512 և 1513 տարիներու Հակոբի հրատարակությունները, միայն ժամանակագրական փառք մը ունեցան, առանց իրական օգուտի: Աբգար Եվդոկիացիին ձեռնարկն ալ ամփոփված ու սեղմված մնաց ու անհետացավ: Ոսկանի գործն է, որ իր տաբատախտ մահվընե ետքն ալ շարունակեց և չորցած բույսե մը թափված սերմերու նման՝ բողբոջները բազմացան... Դավանական տեսակետեն, հոռոմեականներ իրենց համախոհ մը եղած կը կարծեն Ոսկանը. սակայն հառաջ բերված պատմական պարագաներ կը ցուցնեն թե պատահաբար ու բռնադատյալ առ երեսս համակերպող մը եղած է նա, և ոչ ավելի: Նյ այն ալ տպագրական ձեռնարկը չխափանելու և չխանգարելու համար: Գերեզմանին ալ անհայտ մնացած ըլլալը, կրնա իբր նշան ընկատվիլ թե իր հիշատակը պատվո արժանացած չէ տեղվույն կրոնական շրջանակին մեջ»[10]: (**Մաղաքիա արք. Օրմանյան**, Ազգապատում, մասն Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 2548—45):

տպագրել է տալիս **Շարականը** 1702 թվին և **Պատարագամատոյցը** 1704 թվին նաև **Արամեան լեզուին գանձ** գիրքը 1711 թվին*:

Թե ինչպիսի դժվարություններ է քաշել Մատթեոս Վանանդեցին, մինչև որ հաջողեցրել է նորից Ոսկանի տպարանը Ամստերդամում բաց անել, երևում է 1685 թ. նրա տպած **Շարականի** հիշատակարանից, որտեղ նա գեղեցիկ կերպով նկարագրում է հետևյալը ասելով.

«Ես նուաստս յամենից Մատթէոս դպիրս՝ եկի ծառայելով ընդ արեւնակից վարդապետին իմոյ յերկիրն յԻտալացւոց և ի մայրաքաղաքն Հռոմ և վեհն իմ գնաց յայլ ուրեք և ես դարձայ յԱլիկօռնայ առ ոտս աշակերտի տեառն Ոսկանայ արհեպիսկոպոսի՝ տեառն Կարապետի վարդապետի և ուսայ ի նմանէ զարհեստ շարաբարդութեան և մնացի ընդ վեհին Ոսկանայ արհիեպիսկոպոսի և քեռորդւոյ նորա, Սողոմօնի ամս չորեքտասան և վարձուց կողմանէ ոչինչ ընկալայ: Քանզի և տէր Յակովբ կաթուղիկոսն գրեաց առ իս ի Մարսիլիա՝ թէ ընկալայ զհամբաւդ ի քէն զբարւոք ուսանիլն զարհեստիդ. վասն որոյ և զփոքր նամակս օրինութեան առաքեցի առ հոգևոր որդեակդ իմ Մատթէոս, զի բարւոք ծառայիցես տեառն Ոսկանայ արհի եպիսկոպոսի աշակերտի իմոյ և զկնի վախճանի նորա մի ումեք կարօտասցիս: Այնպէս համարեայ թէ ինձ ես արարեալ որպէս ասէ Տէրն **և ես զքո վարձն հաստուցանելոց եմ և եթէ մահ հասարակաց հանդիպի՝ զհետնամնաց նստօղ սրբոյ Աթոռոյն պարտ են հատուցանել**»**: Սակս որոյ ժամանակն բազումս ծառայեցի և զկնի վախճանին նորա առ Աստուած և իմ տեսեալ զչարակրութիւն և զանաջողութիւն յամենայն կողմանց, վասն որոյ դիմեցի յերկիրն Հոլանդիոյ՝ ի վայելուչ քաղաքն յԱմստէլօտամ, և գտի զ·աւ վարպետ իմն, որ անուամբ Նիկօլայոս ասի՝ և ետու յօրինել զգիրս այբուբենից բազմօք աշխատանօք և զայլ տեսակս ևս գրոց նօտրի և բոլորի»***:

Այս հիշատակարանից պարզապես տեսնվում է, թե ինչպես Հակոբ կաթողիկոսը Էջմիածնից հույս ու ոգի է ներշնչում Վանանդեցուն և փայփայում հայ տպագրության արվեստի զարգացումը, որ նա ծաղկի ու ընդարձակվի, թեև օտար հողի վերա, և հայերեն տպագրված գրքերով լեցնե Հայաստանը:

1691 թվին Լիվոռնոյում սկսում է գործել մի տպարան դարձյալ ս. Էջմիածնի և ս. Սարգսի անունով, որ ինչպես երևում է, Ոսկան վարվապետի տպարանի մի մասը պիտի լինի փոխադրված Մարսելլից: Այս տպարանն էլ տաս տարի յուր գոյությունը շարունակեց, որից հետո 1701 թվին փոխադրվեց Կ. Պոլիս, նույն անվան տակ: Դեռևս 1642 թվին ս. Էջմիածնի միաբան չուղայեցի Հովհաննես վարդապետը Եվրոպա անցնելով՝ Հռոմում նոր տառեր է շինել տալիս և Լիվոռնո գալով՝ սեփական տպարան հիմնում: Այստեղ նա տպագրում է փոքրադիր **Սաղմոս**, որի հիշատակարանում նշանակված է «Յիսուսի Քրիստոսի ծառայ Յովհաննէս Ջուղայեցի, շնորհօքն Աստուծոյ վարդապետ և սպասաւոր սուրբ Էջմիածնի որ ի թուին ՌՁԸ»****:

1715 թվին ս. Էջմիածնի միաբան Մխիթար Սեբաստացին Վենետիկի մոտ, ս. Ղազար կղզու վերա հիմնում է մի նոր միաբանություն, որը միաժամանակից հետո ունենում է յուր սեփական տպարանը: Այդ ժամանակ Մատթեոս Վանանդեցու տպարանը գրավ էր դրված օտարազգիների մոտ

---

* **Հ. Միքայել վրդ. Չամչեանց**, Պատմութիւն Հայոց. հատ. Գ, ի Վենետիկ, 1786, էջ 662—663:

** Ընդգծվածները մերն են. Ա. Ե. Ս.:

*** Բազմավէպ, 1896 ԾԴ, էջ 295—296:

**** Բազմավէպ, 1891, էջ 293:

Մի էջ «Գիրք առասպելաբանութեանց որ ասի աղուէսագիրք»-ից
(1668 թ., Ամստերդամ)

պարտքի պատճառով: Միխթար Սեբաստացին վճարելով պարտքի մի մասը, տաղերից գնում է և տանում է Վենետիկ յուր տպարանի համար:

Վանանդեցու տպարանի մնացած պարտքը վճարում է Գևորգ աղա Արծրունին ԺԹ դարի սկզբին և մնացած տաղերը նվիրաբերում Ներսիսյան ազգային դպրոցին:

Շնորհիվ շրջապատի բարեբաստիկ հանգամանքների, Միխթարի տպարանը, որ մինչև այժմ էլ գոյություն ունի, յուր նշանավոր դերն է կատարել և կատարում է Վենետիկի Միխթարյան հայրերի ձեռքի տակ՝ լույս ընծայելով բազմաթիվ հրատարակություններ, գիտության ամեն ճյուղի վերաբերյալ զարկ տալով հայկական հին և նոր գրականությանը:

ԺԸ և ԺԹ դարերի ընթացքում գիտությունն ու արվեստները այնքան են առաջ գնում և արտաքին ճնշիչ հանգամանքները այնչափ թուլանում, որ, ամեն քաղաքում Եվրոպայի, ինչպես և վերջը ս. Էջմիածնում և Կովկասում հայ տպարաններ են բացվում հայ տպարանատերերով:

Մեր նպատակից դուրս լինելով այդ տպարանների գործունեության, ինչպես և Միխթարյան տպարանի գործունեության պատմությունը գրելը, որոնց մասին հատորներ կան գրված, կանգ կառնենք միայն ս. Էջմիածնի տպարանի վերա և առաջ կբերենք նորա հաստատման ու գործունեության պատմությունը:

Թ.

ԺԸ դարի ընթացքում Կովկասյան ազգերի մեջ ևս տպարաններ են բացվում, դորանց մեջ նշանավոր տեղ է բռնում Էջմիածնի տպարանը, նախ՝ այն պատճառով, որ մայր հողում նա առաջին տպարանն է լինում և երկրորդ՝ ս.

Էջմիածնի կաթողիկոսները մինչև այդ հնարավորությունից զորկ լինելով՝ օտար պետությանց մեջ էին պահում տպարաններ՝ Էջմիածնի անվամբ. այժմ Սիմեոն կաթողիկոսն առաջինը հաղթահարելով բազմատեսակ խոչընդոտների և դժվարությունների, կարողանում է հենց ս. Էջմիածնում հաստատել Հյուսիսենբերգի հրաշալի գյուտը, երբ մարդ աչքի առաջ ունենա Արարատյան աշխարհի այն ժամանակվա քաղաքական հանգամանքները, ժամանակի տիրող իշխանությանց բռնությունները,—այն ժամանակ Սիմեոն կաթողիկոսի ջանքը տպարան հիմնելու, այն էլ Էջմիածնում պետք է անշուշտ մի հանդուգն քայլ համարի: Սակայն ոչ շրջապատի քաղաքական աննպաստ պայմանները, բռնությունները, բարբարոսությունը տիրող իշխանությանց, ոչ էլ Էջմիածնի ժամանակի միաբանության ոմանց տգիտությունը չկարողացան երջանկահիշատակ Սիմեոն կաթողիկոսի մտադրությանը արգելք լինելու, այդ նվիրական ու պատմական մեծ գործի հիմքը դնելու մեջ:

Ամստերդամի տպարանի աշխատավորներից մեկը, Մարկոս անունով, 1759 թվին Իզմիրում մի տպարան է բաց անում, որը գործում է մինչև 1763 թվականը: Այդտեղ տպված **Եզնիկի** հիշատակարանից երևում է, որ այդ տպարանի կառավարիչները եղել են ս. Էջմիածնի միաբաններ՝ աստապատցի Աբրահամ եպիսկոպոսը և Սյունյաց դպրոցի ներկայացուցիչ՝ Երևանցի Սիմեոն վարդապետը:

Սիմեոնի հետագա գործունեությունը աչքի ընկնող տեղ է բռնում հայոց եկեղեցու պատմության մեջ՝ հատկապես ս. Էջմիածնում տպագրական արվեստի հիմը դնելու պատճառով: Ուստի և այս տեսակետից արժե, որ մի փոքր ավելի մոտիկից ծանոթանանք Սիմեոն վարդապետի կյանքի հետ:

1763 թվին Սիմեոնը ընտրվում է կաթողիկոս Ամենայն Հայոց: Նա մի շինարար և ուսումնասեր մարդ էր: Կաթողիկոս դառնալուց հետո անմիջապես ձեռք է առնում Էջմիածնի վանքին պատկանող բոլոր շինությունները նորոգելու և Մայր Աթոռը վայելուչ բարեզարդությամբ պայծառեցնելու: Չնայած ժամանակի աննպաստ հանգամանքներին, Սիմեոնը կաթողիկոս օծվելուց հետո այնպիսի բեղմնավոր գործունեություն է ցույց տալիս, որպիսին երկար ժամանակի ընթացքում նրանից առաջ և հետո քիչ ենք հանդիպում: Յուր կաթողիկոսության ընթացքում նա ցույց տվեց, որ ազգի թե՛ անցյալի և թե՛ ներկայի քաղաքական և կրոնական դրության հետ բաջ ծանոթ է: Ուստի և օր ու գիշեր մտածում էր աշխարհի չորս կողմը տարածված հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության համար: Ծնորհիվ յուր անհողդողդ կամքի՝ նա կարողանում է յուր մտադրություններն յօգուտ ազգի և ի պայծառություն եկեղեցու ի կատար ածել:

Սիմեոն կաթողիկոսը կարճ ժամանակում նորոգություններ է կատարում ս. Էջմիածնի Մայր տաճարի մեջ թե՛ դուրսի և թե՛ ներսի կողմից, նորոգում է և ավելացնում է վանքին շրջապատող շինությունները, հարստացնում է վանքը արոտատեղերով և վարելահողերով:

Սիմեոնը սակայն դորանով չի բավականանում: Նա որոշում է վաղուց հետե յուր նախորդների մտածած, սակայն չիրագործած միտքն իրականացնել՝ այն է՝ ս. Էջմիածնում տպարան հիմնել:

Ժամանակի քաղաքական հանգամանքները և Էջմիածնի դիրքը վերջին դարերի ընթացքում այն դյուրությունը չէին տալիս, որոնք տպարան հիմնելու համար անհրաժեշտ էին: Ուստի, ինչպես վերևը շեշտվեց, կաթողիկոսները ստիպված էին տպարաններ պահել Ամստերդամում, Մարսելում, Վենե-



Մովսես Խորենացու «Ազգաբանութիւն տոհմին Յարեթեան»-ի տիտղոսաթերթը
(1695 թ., Ամստերդամ)

տիկում և այլն քաղաքներում, նույնիսկ Կ. Պոլսում, բայց ոչ Վաղարշապատում: Որքան էլ որ այդ տպարանները ս. Էջմիածնի անունն էին կրում, այնուամենայնիվ Մայր Աթոռի մեջ տպարան գոյություն չունեցավ մինչև Սիմեոն կաթողիկոսը, որին միայն հաջողվում է Փոքր Ասիայի այդպիսի մի խուլ անկյունում, ինչպես Էջմիածինն էր, տպարան հիմնել և տպագրական արվեստն այնտեղ ծաղկեցնել:

Էջմիածնում տպարան հիմնելու միտքը Սիմեոնի մեջ շատ վաղ էր

զարթնել: Դեռևս Հնդկաստանում ունեցած յուր ևվիրակության. ժամանակ, հանդուրժում էր Գրիգոր աղա Միքայելյան Խոջաջանյանին (Զաքիկենց մականունով) յուր հոգևոր կտակը արգասավոր դարձնի մի որևէ նշանավոր գործով:

Կաթողիկոսական աթոռը բարձրանալուց երկու տարի հետո, երբ ս. Էջմիածնի նորոգչական աշխատանքները վերջանալու վրա էին, նա տպարան հիմնելու հոգացողությամբ սկսեց զբաղվել:

Սիմեոնը 1765 թվի մարտի 4-ին գրում է Զմյուռնիայի ևվիրակ և առաջնորդ Ղուկաս Կեղեցի կամ Կարնեցի վարդապետին «Յատուկ պատուէր մի ևս տպագրական գրոյ իրիք ազնույ որ էր ի յԱմստէրդամ, յօրինեցեալ Առաքելէ ումեմնէ որ թէպէտ յօրինեալ էր, այլ զտպագրատուն հաստատել ոչ կարէր վասն գործատորաց պակասութեան: Ուստի գրեաց ամա սրբազան Վեհին, զի գրեսցէ առ Առաքելն այն ի յԱմստէրդամ և խնդրեսցէ զայն ի նմանէ գնով և առեալ յղեսցէ աստ ի սուրբ Աթոռս»:

Ձեռնհալով բավարար պատասխան Սիմեոնը մի քիչ հետո 1765 թվի դեկտեմբերի 30-ին կրկնում է յուր պատվերը Ղուկաս վարդապետին և հարցնում է, թե ո՞ւր է այն մյուս Մարկոս անունով տպագրիչը, որ Զմյուռնիսւ էր, թող խոսի նորա հետ, պայմանավորվի և ս. Աթոռն ուղարկե: Սորան պատասխան է ստանում, թե Մարկոս տպագրիչը կամենում է դեռևս **Սաղմոսը** տպագրել և ապա գալ Էջմիածին: Կաթողիկոսը նորից պատվիրում է թե եթե նա փողի պատճառով է ձգձգում յուր գալը և ուշանում, թող ցանկացած փողը նորան տա, որպեսզի Մարկոսը Մայր Աթոռ գալով՝ հենց այստեղ **Սաղմոսը** տպագրե: Նույն պատվերը մի փոքր հետո կրկնում է Սիմեոնը ավելի խստությամբ: Գրում է նաև Ամստերդամ Հովհաննես վարդապետին, որ վաղուց ուղարկված էր այնտեղ դեռ Ղազար կաթողիկոսից և պատվիրում է:

«Զի զՈւռաքելի գիրն կամ անդ տպարան հաստատել տալ և կամ առնոչ, և ի ս. Աթոռն յղել. իսկ եթէ Առաքելն չտայցէ և թէ անդ տպարան իցեն հաստատելոց և թէ ոչ, նոյն փորագրողին ձեռնն մի գիր վասն ս. Աթոռոյս փորեցուցեալ յղեսցէ»:

Նույնը գրում է նաև Առաքելին առանձին թղթով, առաջարկելով ստանալ Ղուկաս վարդապետից կարևոր ծախքերը և «վասն Մարկոսին ևս չանալ և մի՛ ի կողմն հատանել զբանն»:

Այդ ժամանակ մահտեսի Մովսեսը գրում է Կ. Պոլսից կաթողիկոսին. «Վասն Զմիուռնիոյ տպագրիչ Մարկոսին թէ գտեալ եմք զինարս ինչ յղել յայդր», որին և Սիմեոնը գրեց, որ շտապեն իրագործել այն՝ նախապես Ղուկաս վարդապետի հետ խորհրդակցելով*:

Չնայած Սիմեոն կաթողիկոսի այնքան եռանդուն ջանքերին, տարին բոլորում է և այնուամենայնիվ նորան չի հաջողվում ոչ տպարանական պարագաները ևվեր ստանալ որևէ մեկից և ոչ էլ գնել: Այն ժամանակ նա յուր հայացքն ուրիշ կողմն է ուղղում, որովհետև Ամստերդամի հայերը Առաքելի գործի վերա արգելք էին դրել**:

Այդ ժամանակները Վենետիկից Պոլիս էր վերադարձել կեսարացի Սարգիս վարդապետ Սարայյանը: Նա արևելքից Եվրոպա անցնելով, հետամուտ

---

* Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Սիմէոն կաթողիկոսի Յառաջաբան, յիշատակարանը, կենսագրութիւնը յաւելուածներով ու ծանօթութիւններով. հրատարակեց Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1894, ՃԾԵ—Ը:

** **Հ. Գ. Զարբհանալեան**, Պատմություն հայկական տպագրության, Վենետիկ, 1895, էջ 183:

էր եղել հայկական տպագրության և իրեն համար սեփական տառեր էր ձուլել տվել: Այդ տառերը կամ դրանց հայրերն ու մայրերը հետը վերցնելով Սարգիս վարդապետը վերադառնում է Կ. Պոլիս: Սարգիս վարդապետը Էջմիածնի նախկին միաբան էր:

«Էր ի Պօլիս առ Կեսարացի Սարգիս վարդապետն գիր տպագրական ւիորագրեցեալ ի Վենետիկ,—ասում է Սիմեոն կաթողիկոսի հիշատակարանի գրողը,—յոյժ ազնիվ և քաղցրատես, որով **զէֆէմէրտէս** գիրքն տպեալ էր և պահէր առ ինքն զգիրն և ոչ տայր ումեք, և ոչ ինքն զտպագրատուն բանայր: ւԱսաև որոյ գրեաց առ նա սրբազան վեհն զթուղթ մի սիրոյ, և խնդրեաց տալ զտպագրական գիրն սրբոյ Աթոռոյս կա՛մ գնով և կա՛մ ի յիշատակ հոգւոյն իւրոյ: Եւ եթէ կամիցի զայս որով կերպիւ և իցէ, ծանուսցէ մերայնոցն, որոց և կամիցի ինքն, զմիտս իւր, զի գրեսցեն ինքեաւն և կամ ինքն խօսեսցի գրով, և որպէս կամիցիս, ասէ, և ինձ է հաճելի»*:

Գործն արագացնելու համար Սիմեոն կաթողիկոսը թուղթ է գրում Մայր Աթոռի գործակալ մաճառեսի Մովսեսին, որ Սարգիս վարդապետի հետ խոսի և տառերի գնի սակարգությունը տպագրիչի հետ վերջացնի: Սակայն, վերջինս Սիմեոնի հետ բանակցությունները չվերջացրած՝ տառերը վաճառում է կեսարացի Գեորգ դպրին, որ Կ. Պոլսո Վեզիր խանի մեջ տպարան է բաց անում**: Միևնույն ժամանակ Սիմեոն կաթողիկոսը թուղթ է գրում նաև Ամստերդամ բնակվող ջուղայեցի Խոջա Առաքելին, կրկնելով յուր խնդիրը, որ տառերի ու պատկերների ուղարկելուն էր վերաբերում: Նույն թղթում խնդրում էր, որ եթե նա տպարան է բաց արել և տառերի ուղարկելն անհնարին է, այն ժամանակ նույն փորագրողին պատվիրի Մայր Աթոռի համար ամեն տեսակ տառեր, ծաղկագրեր ու ծածկագրեր պատրաստել տալ: Վերջապես, թուղթ է գրում Զմյուռնիայի Ղուկաս վարդապետին, որ սա Մարկոս տպագրիչին համոզե՝ յուր տառերն ու տպարանը վերցնի և Էջմիածին տեղափոխվի:

Թե դորանից հետո այլևս ինչ գրագրություններ են տեղի ունենում տպարանի վերաբերյալ, գրավոր հիշատակարանները պակասում են. միայն այսքանը հայտնի է, որ Սիմեոն կաթողիկոսի բոլոր դիմումներն իզուր են անցնում: Առաքելի տառերը Ամստերդամից չեն ստացվում, իսկ Մարկոս տպագրիչն էլ մնում է Զմյուռնիայում: Չնայած, մինչ այդ ունեցած անհաջող դիմումներին, Սիմեոն կաթողիկոսը չի հուսահատվում, և յուր նպատակից ետ չի կանգնում: Նա յուր աչքը դարձնում է դեպի Հնդկաստան:

Տասներկու տարի եռանդագին աշխատելուց հետո վերջապես 1771 թվին Սիմեոն կաթողիկոսին հաջողվում է յուր նպատակին հասնել և Էջմիածնի վանքում տպարան հաստատել, յուր նվիրակության ժամանակ Հնդկաստանում ծանոթացած ջուղայեցի Հնդկաստան վերաբնակված Գրիգոր Միքայելյան Խոջաջանյանի ծախքով և տպարանական բոլոր պարագաներով: Գրիգոր Միքայելյանը վերջապես իրագործում է Սիմեոնի դեռևս սարկավագ եղած ժամանակ նրան տված յուր խոստումը, այնպիսի փառավոր գործի հիմք դնելով, որի նմանը մինչև այդ Էջմիածնում չէր եղել:

Դժվար է ասել, թե Սիմեոն կաթողիկոսը որևէ տեղից պատրաստի տառեր լինի ստացած, քանի որ նորա հիշատակարանը գրողը նորաքանդակ տառերի մասին է խոսում***, որից պետք է հետևցնել, թե նորան հաջողվել է

* Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ... Ցառաջաբան, ճԺԹ:

** **Մ. արք. Օրմանյան**, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, Բ հտ., էջ 3098—99;

*** Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Ցառաջաբան, ճԿ;

Մի էջ Մովսես Խորենացու Պատմությունից (1695 թ.)

նոր տառեր փորագրել ու ձուլել տալ: 1774 թվին տպված **Տօնացոյց**-ի հիշատակարանի մեջ էլ հիշվում են էջմիածնեցի Հարություն անունով փորագրող և քանդակողը և Սկրտիչ Ծոռոթեցի եպիսկոպոսը, որ «Նախկին հեղինակ եղև առ փորագրութիւնն ի պողովուտայս»*:

Տպարանը զետեղում են կաթողիկոսի ձմեռվա կացարանի արևմտյան ծայրին կից գտնված շինության մեջ, որի ճակատին դրվում է այս արձանագրությունը.

«Աստուծով հաստատեցաւ տպագրատունս նոր ի նորոյ ի սուրբ Աթոռս Էջմիածին, ամենայն պարագայիքն նոգաբարութեամբ Տեառն Սիմէօն արքազան կաթուղիկոսին Երևանցւոյ, արդեամբ Ջուղայեցի ի Հինդ բնակեալ բարեպաշտօն Գրիգոր աղային Խոջաջանեան, որ մանաւանդ Ջաքիկենց կոչի ի յիշատակ իւրեանց եւ իւր ի Քրիստոս հանգուցեալ ծնողացն՝ Միքայէլին և Մամախաթունին, իւր կենակից Մատլինային և վաղաթառամ Միքայէլ որդուոյն և քերցն Անամարիային և Զիպիտային, ճօրեղբարցն՝ Եղիազարին, Սաֆարին և Աղէքսանդրին պապուն՝ Գրիգորին և կենակից Թագուհւոյն և ճօրաքեռն Զիժազատային և մեծ պապ Յակոբջանին և ճօրեղբօր դստերացն՝ Պէկզադային և Գիւլնաբաթին, և այլ ամենայն հին և նոր ննջեցելոցն նորին: Այսու պայմանաւ՝ զի ի տարին Բ անգամ ի տօնի Լուսաւորչին և հրեշտակապետացն

---

* Տօնացոյց, Էջմիածին 1774:

ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՎԱՆՑՈՒ ՄԱՑՐ ԱԹՈՌՈՒՄ ՀԻՄՆԱԾ ՏՊԱՐԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ի սուրբ Աթոռոջս պատարագ մատչիցի հանդիսաւորութեամբ՝ յիշելով զնուա, որոց յիշատակն օրինութեամբ եղիցի, ամէն. թ. ՌՄԻ (յամի 1771)[10]:

Տպարանը բացվելու ժամանակ, ինչպես երևում է, արդեն Զմյուռնիայից եկած է լինում և Մարկոս տպագրիչը, որը մեծ աջակցություն է ցույց տալիս տպագրական գործի հաստատմանը Էջմիածնում: Բայց նորա գործունեությունը նորահաստատ տպարանում շատ երկար չի տևում: Տպարանը կարգավորելուց և գործի սկիզբը դնելուց շատ կարճ ժամանակ անց Մարկոս տպագրիչը վախճանվում է և թաղվում Մայր Աթոռի միաբանների ընդհանուր գերեզմանոցում: Տապանաքարի վերա կարդում ենք.

«Այս է տապան հանգստեան Ակնցի տպագիր ծերունազարդ Մարկոսին, որ եկեալ ի սուրբ Աթոռս և շինեալ զգործարանն, փոխեցաւ առ Քրիստոս բարի մահուամբ, որում Տէր ողորմեացի, ի ՌՄԻ թվին (1771)»:

Առաջին անգամ նորահաստատ տպարանում տպվում է **Ջբօսարան հոգեւոր** կոչված գրքույկը, որը վեշտասան ծալքով աղոթքների մի մատյան էր: Հաջորդ տարին Սիմեոն կաթողիկոսը գրում է Գրիգոր աղային յուր մի կոնդակում հետևյալը.

«Իսկ ի կողմանէ տպագրատան միամիտ և աներոգ եւ ուրախ լիցիս, զի Աստուծով աճա հաստատեցաւ լաւապէս և օրը ըստ օրէ լաւագոյն հաստատի: Յառաջագոյն զփոքրիկ գրքոյկ մի աղօթից յօրինեալ էի, զի նորաքանդակ գրով տպեցաք և ... յղեցաք ի նմանէ վասն սիրելւոյդ...: Իսկ յայսմ թուովն նոյն **Տաղարանն** զոր յառաջ տպեալ էաք, այժմ ևս նոյն աղօթից գիրն քո գրովն վերստին տպել ետուք, վասն բարւոք փորձառութեան գործարանին: Ահա երկու հատ ևս ի նմանէ եդաք ի մէջ թղթոյս և յղեցաք վասն սիրելւոյդ առ ի տեսանել և ուրախանալ քեզ այդու ևս, զի ահա տիպն դորին փոքր ինչ լաւագոյն է քան զաղօթից գրոյ տիպն, որ ահա այդպէս օր ըստ օրէ լաւապէս հաստատի տպարանն և յաջողմամբ Աստուծոյ... և յետ այսորիկ հանդերձեալ եմք ահա այլ տեսակ նորաքանդակ գեղեցիկ գրով զ**Տօնացոյցն** ևս տպել, զոր յետ սուղ միջոցի յղելոց եմք վասն սիրելւոյդ, զի տեսցես և ուրախ լիցիս: Նաև զտպագրատունն սակաւ ինչ փոքրիկ էր, յայսմ ամի մեծացուցաք զի ամենայն գործոց և գործավարաց նոցին ընդարձակ տեղիք լինիցին մերձ միմեանց: Իսկ զքոյդ յիշատակի արձանագրարն, ըստ այնմ օրինակի, զոր յղեցաք առ քեզ ընդ Փիլիպպոս վարդապետն, գրեալ եմք, դնելոց եմք այժմ, ի գլուխ նորակերտ մեծագոյն դրանն տպարանին»*:

Ինչպես սույն գրությունից տեսնվում է, Սիմեոն կաթողիկոսը Հարություն փորագրիչի պատրաստած տառերից զատ՝ ստացել էր նոր տառեր նաև Գրիգոր աղայից, որով երկրորդ անգամ տպագրել է տալիս **Ջբօսարան հոգևոր** աղոթագիրքը: Բացի այդ, նա պատրաստվում էր ընտիր նոր տառեր ձուլել և փորագրել տալ ու ձեռնարկել նոր հրատարակությունների, որոնցից առաջինը պետք է **Տօնացոյցը** լիներ:

Սակայն, տպագրական գործի արագ կերպով հառաջադիմությունը խանգարող մի ուրիշ աննպատակ հանգամանք կար: Սիմեոն կաթողիկոսը տպա-

---

* Այս արձանագրությունը համարվում էր կորած (Տ. Սիմեոն կաթ. հիշատակարանի մեջ): Տողերիս գրողը վանքի տպարանի վարպետ Ղևոնդ Ղարախանյանցի հետ փնտրելով գտնում են այդ արձանագրության քարը 3 կտոր եղած և հողի մեջ թաղված: Այդ կտորները միացվում են և դրվում վանքի հնությանց թանգարանում: Ա. Ե. Ս.:

** Դիւան հայոց պատմութեան. գիրք Գ, Սիմէոն կաթողիկոսի Յիշատակարանը, 1894, Թիֆլիս, էջ ՃԿԳ:

րանի համար հարկավոր թուղթը Եվրոպայից էր բերել տալիս, որը մեծամեծ դժվարությունների էր հանդիպում ճանապարհների անապահովության և դժվարության պատճառով: Այս հանգամանքը Սիմեոն կաթողիկոսի մեջ մի հանդուգն ու խիստ դժվարությամբ իրագործելի միտք ևս է ծնեցնում, այն է՝ **Էջմիածնում հիմնել նաև թղթի գործարան:**

Սիմեոն կաթողիկոսը տաճարի հարավային կողմը Մայր Աթոռի պարըսպից դուրս, Ղազարապատի հարավային դրան դիմաց, բավական մեծ շենք է շինում 1774 թվին, այնտեղ՝ ուր, առաջ պարտեզ էր, «Խաղաւարտ սեղխենիք սերմելու համար», և Եվրոպայից հմուտ արհեստավորներ հրավիրելով՝ սկիզբ է դնում նաև թղթաշինության: Արարատյան դաշտի բամբակի բերքի և ջրի առատությունը մեծ հաջողություն էր խոստանում նաև թղթաշինության արհեստի ծաղկման համար: Նույն թվի գարնանը սկսում են շինել քյարխանան և մյուս տները: Մեծ տունը մի եկեղեցու չափ էր, տաշած քարերով և կրով: Երկարությունը Ի (20) գազ և լայնությունը Թ (9) գազ: Թղթագործարանի շինության առթիվ էլ Սիմեոն կաթողիկոսը 1771 թվից սկսած Չաքիկենց Գրիգոր աղայի հետ թղթակցություն ուներ, որով համոզում էր նրան թղթագործարանի ամբողջ ծախքն էլ վճարել, ինչպես որ հոգացել էր տպարանի ծախքը: Գրիգոր Միքայելյանին ուղղած յուր մի կոնդակում Սիմեոն կաթողիկոսը 1774 թվին գրում է.

«Յանցեալ ՌՄԻԱ (1772) թուովն եհաս առ մեզ թուղթ քո, որ յաղագս թղթաշէն վարպետացն և այլոց յոլովից իրակութեանց գրեալ էիր ... իսկ մեք զթղթաշինաց թուղթսն յետ հասանելոյն առ մեզ՝ շուտով յղեցաք ի մեծն Պօլիս առ մեր նուիրակ Զաքարիա վարդապետն յղել անդ, որպէս քեզ ևս գրեալ եմք յառաջ և նա ի վաղուց հետէ յղեալ էր և գրեալ առ մեզ: Բայց պատասխանիքն նոցին մինչև ցայժմ տակաւին ոչ ընկալաք, զի գիտացաք, թէ որպէս եղեն, գալոց են թէ ոչ: Եթէ դու զհամբաւ ինչ լուեալ ես ի նոցունց, մեզ ևս գրեա զի գիտասցուք, ապա թէ չես լուեալ, եթէ կամիցիս վերստին գրեա անդ, զի թերևս եկեսցեն: Այլ և նոյնպէս, սիրելին մեր Էքիզեան մաճտեսի Յարութիւն աղայն՝ երեք հազար մէկ հարիւր և վեց ոսկի և կէս ի քոյդ կողմանէ փոլիցայ էր արարեալ ի մեծն Պօլիս առ մեր նուիրակ Զաքարիա աստուածբան վարդապետն, որ հասեալ էր առ նաև գրեալ էր մեզ ... Ուստի մեծապէս շնորհակալ եղաք զսիրելւոյդ մերմէ, և օրհնեցաք զարժանաւոր օրհնութիւն... զոր Տէր օրհնեսցէ և ... փոխանակ արդեամբ բազմարդիւն ջանիցդ զոր ջանաս յաղագս հաստատութեան **հոգևոր յիշատակացդ** նաև մեծագոյն սիրոյդ, զոր ունիս առ լուսատու ծնողս քո սուրբ Աթոռս, տացէ քեզ Տէր զվարձս բարիս...»*:

---

* Դիւան հայոց պատմութեան, գիրք Ա, Բ, 1780—1834, Թիֆլիս, 1893, էջ ՃԿԲ—ՃԿԳ:

Էջմիածնի տպարանի և թղթաշինության գործարանի շինության առթիվ տարիների ընթացքում թե Սիմեոն կաթողիկոսը ինչ ջանք ու եռանդուն աշխատանք է թափել՝ ստորև բերում ենք նորա մի քանի գրության պատճենները:

1.—1767 թ. առ Զմիւռնիոյ առաջնորդ Ղուկաս վարդապետն վասն տպագրչին և առ այլս ոմանս:

Իսկ և ի կարի յոյժ ստիպելն զսա սրբազան Վեհին վասն տպագրիչ Մարկոսին (որպէս բազմիցս ասացեալ է ի վերայ ցուցեալ տեղիսն) կոչեալ էր զնա ի մէջ իշխանաց և հարցեալ, և նա յանձն էր առեալ գալ աստ և յերիս ամս աստ մնալ և զերկուս կամ զերիս աշակերտս ուսուցանել և տալ մեզ զգիրս **Եզնկայ** և **զԽորհրդատետրին,** զորս ինքն էր ոգացեալ և զՏաթևացւոյ հատորոցն, (զոր ստացեալ էր) ամենայն պարագայիւքն յիւրեանց,

Այդ ժամանակ Պարսկաստանում թղթի գործարաններ գոյություն ունեին: Սիմեոն կաթողիկոսը այնտեղից վարպետներ է բերել տալիս, սակայն արանք չեն կարողանում թուղթ պատրաստել: Որպեսզի գործը չուշանա, Սիմեոն կաթողիկոսը դիմում է Գրիգոր աղային և խնդրում որ ինքն անձամբ աշխատե վարպետներ գտնելու համար: Այդ միջոցին Պոլիս էին եկել Փարիզից թուղթ պատրաստող երկու վարպետներ՝ մուսիո Բեյսոն (Բիսիոն) և մուսիո Դեսիոո: Սրանց հետ Գրիգոր աղան նոտարական պայման է կապում, որ գան Էջմիածին թուղթ շինեն, և սովորեցնեն աշակերտներին, որպեսզի իրենցից հետո նրանք կարողանան գործը շարունակել: Ամեն բան ձրի, վարպետները պետք է ստանային 14000 ռուբլի: Վարպետները գալիս են և գործն սկսում: Բայց հենց գործի սկիզբից նրանք զանազան դժվարություններ են հարուցանում:

և ապա ինքն կանչել և գնալ աստի: Բայց խնդրեալ էր ևս զԵՌ (5000) դուռուշ դրամ ԲՌ-ն (2000) ի գին գրոց և գործեացն իւրոց, զորս խոստանայր տալ մեզ և զԳՌ-ն (3000 ի վարձ երից ամացն, յորս աստ մնալոց էր: Եւ այսոքիկ բացի ճանապարհական ծախուցն և կերուեացն և զգնդեացն աստ ի մէնջ ի յերիս ամս: Որոյ աղագաւ իշխանքն Ջմիւռնիոյ և ինքն մաճետեսի Մարկոսն ևս գրեալ էին առ սրբազան Վեհն զթուղթ: Ընդ որ հաճեցաւ սրբազան Վեհն, և գրեաց Ղուկաս վարդապետին, զի թէ ի վերոյիշեալ գրոցն պակաս ինչ իցէ ի պարագայիցն, ճոգալ տացէ, և զքանի տէրունական պատկերս ևս ի ձեռն բերել տացէ նմա: Ապա առեալ ի նմանէ զամէնն, դիցէ յարկեղ և նմա և իշխանացն կնքեցուցեալ, յիւր անուն յղեսցէ ի Կարին և զծախսն նոցին ինքն ճոգասցէ: Եւ աստ ինքեան գրեալ ծանուսցէ: Որպէս զի ինքն մաճետեսի Մարկոսն առանց ծանրութեան թեթև և փութով եկեսցէ ի սուրբ Աթոռս: Եւ թէ այս ասէ, ի գլուխ գալոյ լիցի ընդ գրոցն և զԲԾ (200) օղմա լաւ թուղթ առեալ յղեսցէ: Իսկ և պատուիրեաց զԱՌ (1000) դուռուշն անդէն տալ մաճետեսի Մարկոսին, որպէս նա խնդրեալ էր: Որ ի ԵՌ-էն (5000) նաև ըստ բաւականին միոյ մարդոյ՝ տալ նմա զճանապարհական ծախսն: Ցետ այսորիկ, ասէ՝ թէ յոժարեսցի նա ի գալ, թող ի գարնանս աստ գտանիցի փութով և թէ ոչ, ծանո մեզ զի և մեք զվերջինն արասցուք: Կամէր ևս նա, զի յայնմ օրէ, դիցէ զսկիզբն երից ամաց, յորում ելցէ ի Ջմիւռնոյ: Ընդ այս ևս հաճեցաւ սրբազան Վեհն, բայց այսու պայմանաւ, զի ի մուտն մարտի ամսոյ ելցէ և ի մուտն մայիսի աստ գտանիցի, և բաց ի յԲ(2) ամսոց այլ մի ևս աւելի յամեսցի ի ճանապարհին: Եւ վասն Ամստերդամու գրոյն դարձեալ հարկ (որպէս և յօգոստոսի Բ(2) ջանալ թերևս և զայն ի ձեռն ածել»: Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ը, Սիմէոն կաթողիկոսի Ցիշատակարանը, մասն երկրորդ (1767—1776), Թիֆլիս, 1908, էջ 19:

2.—1769 թ. թուղթ ևս առ Ջմիւռնիոյ նուիրակ և առաջնորդ Ղուկաս վարդապետն գրեաց, ի պատասխանի երից գրոց նորին, գրեցելոցն ի մարտի Ը(8), ի յունիսի Ե(5) և ի յուլիսի ԻԲ(22) առ որ հասեալ էր թուղթն, որ յապրիլի ԻԸ(28) գրեցաւ: Վասն Ամստերդամու Առաքելի գրոյն գրեալ էր թէ՝ կամի զպղնձեայ մայր գիր մի յղել և ոչ զհայր, նաև զպատկերս պղնձեայս զոր ինչ ախնդրիցես: Գրեաց թէ՝ այլ չեն պիտոյ մեզ նորին գիրն և զպատկերն: Սպառնալիս ևս՝ զի գրեսցի նմա: Եւ ի յԱմստերդամ գրեաց զկարգաւոր յղել որպէս և ինքն գրէր: Անթիմոնին զոր խնդրեաց յառաջ, այժմ գրեաց թէ այլ չէ պիտոյ: Եւ գործիս վասն տպագրին, և զայլ ինչս և զթուղթ և զհայր գրոյն զորս յառաջ գրեալ էր առնուլ, գրեաց կամ ի ձեռն Զաքարիա վարդապետին ի վերայ Պօլսոյ և կամ այլով հաւատարմաւ յղել աստ: Վասն թուղթ շինելոյ այլ ևս հարցմամբ գրեաց տեղեկանալ»:

Անդ էջ 109

3.—1772 թ. թուղթ ևս առ Ջմիւռնիոյ նուիրակ Ղուկաս վարդապետն գրեաց (որ ի դեկտեմբերի ԼԱ(31) յիշեցաւ) ի պատասխանի ի հոկտեմբերի ԻԷ(27), գրեցեալ թղթոյն: Ծանուցանելով նմա քանզ զայս յառաջ ի սեպտեմբերի ԻԲ(22), և ի դեկտեմբերի ևլն զթուղթս գրելն առ ինքն: Որում և վասն թղթաշինութեան կրկին պատուէր զի այլ ազգաց ևս հարցանիցէ, թերևս ի նոսա դիտօղ լինիցի, քանզի գրէր թէ՝ աստ թղթաշինութեան դիտօղ ոչ գոյ: Եւ ի Մարդամ զքահանայ յղելոյն աստի, որպէս քան զայս յառաջ ի յուլիս ամսօջն գրեալ էր սրբազան Վեհին, և այժմ ևս էր գրեալ զնոյն խնդիր: Բայց աստ այնպէս քահանայ ոչ գտնուեցաւ զի յղեցիր սրբազան Վեհն, վասն որոյ՝ յառաջագոյն գրեաց ի Պօլիս առ Զաքարիա վարդապետն զի անդ քահանայ գտեալ յղեսցէ: Եւ նա ևս խոստացեալ էր յղել: Ուստի և սրբազան Վեհն ծանոյց նմա զխոստումն նորին, և պատուիրեաց ի նմանէ խնդրել քահանայ»:

Անդ էջ 144

(Շարունակելի)



ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐԱՅՐ ԵՊՍ. ՊՈՂԱՐՅԱՆ, «ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ, Ե—ԺԷ ԴԱՐ», ԵՐՈՒՍԱՂԵՄ, ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՀԱԿՈԲՅԱՆՑ, 1971, ԷՋ ԺԲ+616:

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության ավագագույն անդամներից տ. Նորայր եպս. Պողարյանը, որ հայագիտությանը դեռ վաղուց քաջ հայտնի է ինչպես արտասահմանյան, այնպես էլ Հայաստանյան գիտական պարբերականներից իր բանասիրական հմտալից ուսումնասիրություններով, վերջին տարիներին իր կազմած և հրատարակած «Մայր ցուցակ Սրբոց Հակոբյանց» ձեռագրացուցակի հրատարակությամբ իր արժանի տեղը գրավեց հայ ձեռագրագիտության մեր մեծագույն վաստակավորների շարքում: Օժտված հայագիտական և մասնավորապես ձեռագրագիտական բարձր կարողություններով, անսահման եռանդի տեր Պողարյան սրբազանը մեծ-մեծ նակ, կարճ ժամանակում կարողացավ կատարել այնպիսի չափերի հասնող հսկայական մի աշխատանք, որը անհրաժեշտ կարող է թվալ հայագիտական նույնիսկ մի առանձին հիմնարկության համար: Եվ իրականապես, սկսած 1966 թ. մինչև այսօր ամեն տարի մեկը մյուսի հետևից լույս տեսան բանասեր սրբազանի տքնաջան աշխատանքի արդյունքը եղող՝ Երուսաղեմի ձեռագրացուցակի հինգ ստվար և մեծադիր հատորները[1], իսկ վեցերորդ հատորը արդեն իսկ տպագրության ընթացքում է գտնվում ներկայումս: Նշենք, որ հրատարակված հիշյալ հատորների էջերի ընդհանուր քանակը շուտով հասնելու է արդեն շուրջ 4,000 մեծադիր երկսյուն էջի, իսկ նկարագրված ձեռագրերի թիվը՝ 2,000-ի: Առանց վարանելու կարելի է ասել, որ իր նախընթացը չունեցող յուրահատուկ մի մրցանիշ է այս հայ ձեռագրագիտության պատմության մեջ, մի գործ, որը արժանի է միայն ակնածանքի և խոր հարգանքի:

Իրար հաջորդող հատորների թողած ազդեցությանը գուցե պետք է վերագրել այն, որ դեռևս հայագիտությունը ճնարավորություն չի ունեցել անհրաժեշտ չափով

---

[1] Հայկական մատենաշար Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության: Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբյանց, հատոր առաջին, կազմեց՝ Նորայր եպս. Պողարյան, Երուսաղեմ, տպարան Սրբոց Հակոբյանց, 1966, էջ 676: Անդ, հատոր երկրորդ, 1967, էջ ԺԶ+672: Անդ, հատոր երրորդ, 1968, էջ ԺԶ+648: Անդ, հատոր չորրորդ, 1969, էջ ԻԴ+696: Անդ, հատոր հինգերորդ, 1970, էջ ԺԶ+606:

Նախապես, 1952—1960 թթ., Նորայր եպս. Պողարյանը լույս է ընծայել Բ—Ե հատորներով (Ա հտ.-ը հրտ. է հանգուցյալ Արտավազդ արք. Սյուրմեյանը) վերոհիշյալ գրքերում ընդգրկված ձեռագրական ընկարագրությունների մի մասը և որը կարելի է Երուսաղեմի ձեռագրացուցակների առաջին հրատարակությունը համարել: Նրանք ընդգրկում են շուրջ 1200 էջ:

ՆՈՐԱՅՐ ԵՊԻՍ. ՊՈՂԱՐԵԱՆ

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ

ԵՐՈՒՍԱՂԷՄ
ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ
1971

անդրադառնալու հիշյալ ձեռագրացուցակի յուրաքանչյուր հատորի արժեքին և դրանով սպառիչ գնահատանքի խոսք ասելու բազմաբեղուն հեղինակի կատարած նշանակալից աշխատանքի մասին, իր ամբողջությամբ վերցրած: Սակայն ինչ չափով էլ որ ցարդ գրվել է Նորայր սրբազանի պատկառելի վաստակի մասին, լինի այդ հայրենիքում թե սփյուռքում, արտահայտված այն անվերապահ, միահամուռ և բարձր գնահատականն է, որին արդար կերպով արժանացել է նա:

Ներկա գրախոսությունը նվիրված է Ն. եպս. Պողարյանի ուշագրավ մի այլ աշխատությանը, որ իսկական մի նոր խիզախում պետք է համարել հայագիտության երախտավորի ստեղծագործական կյանքում: Հազիվ ավարտած իր պատկառելի ձեռագրացուցակի հինգերորդ հատորի հրատարակման հոգնատանջ գործը, սրբազանը առանց ընդմիջելու իր աշխատանքը, հայագիտությունը հարստացրեց մի նոր ծավալուն աշխատությամբ ևս, որը կրում է «Հայ գրողներ, Ե—ԺԷ դարեր» խորագիրը: Այդ նոր

երկը անմիջական արգասիքն է հեղինակի կողմից կատարված ձեռագրագիտական բազմամյա աշխատանքների, որի ընթացքում պեղելով Երուսաղեմի հայկական գրչագրերի հարուստ գանձարանը, որն իր ընդգրկած հայերեն ձեռագրերի քանակով և գիտական արժեքով երկրորդ տեղն է գրավում աշխարհում՝ Երևանի Մաշտոցյան Մատենադարանից անմիջապես հետո, հնարավորություն է ունեցել ի հայտ բերել մեր միջնադարյան մատենագիրների բազմաթիվ անհայտ մնացած գործեր և կամ ճշգրտումներ կատարել նրանց կյանքի և ստեղծագործության վերաբերյալ:

Իր «Բացատրական»-ում հեղինակը նշում է, որ մատենագրական դասերի ընթացքում, ինչպես նաև Ս. Հակոբյանց ձեռագրացուցակի հատորները կազմելուն առընթեր, տարիների ընթացքում պատրաստել էր սույն հատորը և այժմ տպագրության հանձնելով այն, իրավացի կերպով նկատում է, որ նման մի աշխատություն կարող է «պիտանի ըլլալ հայ մատենագրությամբ զբաղվող ուսուցիչներու, ուսանողներու և բանասերներու»[2]:

Այժմ ծանոթանալով այս նոր աշխատության հետ, կարող ենք անվերապահորեն ասել, որ նրա ժրաջան հեղինակը հասել է իր նպատակին, կատարելով շատ անհրաժեշտ ու օգտակար մի գործ, որի պակասը վաղուց զգալի էր ինչպես հայ ուսանողության, այնպես էլ ուսուցչության ու հայագետների համար: Եթե հայ մատենագրության պատմությանը վերաբերող գործերի շարքում իր առաջնությունը շարունակում է դեռևս պահպանել Վենետիկի Մխիթարյան միաբանության բազմավաստակ գիտնական Հ. Գ. Զարբհանալյանի երկը՝ բաղկացած երկու հատորներից[3], որոնք մինչև օրս շատ բանով պահպանել են իրենց թարմությունը և այդ պատճառով էլ նրա առաջին հատորը արժանացել է մի քանի հրատարակության, ապա, հանուն ճշմարտության, պետք է նկատել, որ շուրջ մեկ դար ժամանակի քննությանը դիմացող այդ մեծարժեք աշխատության կողքին ներկայումս գրախոսվող գործը իր արժանի տեղը կարող է գրավել իբրև նրան շատ բանով լրացնող երկ:

Ն. եպս. Պողարյանի «Հայ գրողներ, Ե—ԺԷ դարեր» գործը նախ ընդգրկում է Ե—ԺԷ դարերի հայ մատենագրերի ցանկը (էջ Ե—ԺԶ), իսկ բուն նյութը՝ հայ մատենագիրներին նվիրված բաժինը, գրավում է 1—572 էջերը, ուր ներկայացված են Ե—ԺԷ դարերին ապրած և գործած 153 հայ մատենագրերի ամփոփ կյանքն ու գործը, սկսած ս. Մեսրոպ Մաշտոցից մինչև Դավիթ Սալաձորեցի: Վերջում ունի նաև «Ցանկ հատուկ անվանց» (էջ 572—616) բաժինը, որը շատ է օգնում այս կամ այն հեղինակի կամ տեղանունների մասին գրքում եղած հիշատակությունները գտնելուն:

Սույն աշխատության առաջին կարևոր առավելությունը կայանում է նրանում, որ այնտեղ ընդգրկված՝ մեր մատենագրության հազար երեք հարյուր տարիների ընթացքում ներկայացված հեղինակների մի մասը կամ բոլորովին տեղ չէր գրավել և կամ միայն հիշատակվել էր թռուցիկ կերպով անցյալի նման տիպի աշխատություններում: Գրախոսվող երկի հաջորդ ակնառու հաջողությունը պետք է համարել հայ մատենագրերի ստեղծագործություններից բերված շուրջ 170 նմուշները, որոնք կարևոր նշանակություն ունեն ընթերցողին տվյալ հեղինակի ոճի և լեզվի հետ ծանոթացնելու գործում: Նշենք, որ այս ևս գրեթե աննախադեպ է նման գործերի համար: Նմուշներ բերված են յուրաքանչյուր հեղինակից երբեմն մեկ, երկու և անգամ երեք հատ: Օրինակ Սմբատ Գունդստաբլից կան երեք բնագրեր, ա) «Յառաջաբան Անսիզի (հատված)», բ) «Յառաջաբանութիւն Դատաստանաց (հատված)», և գ) «Յիշատակարան Ճաշոց Գրոց»[4]: Նույնպես երեք տարբեր նմուշներով է ներկայացված Գեորգ Սկևռացու ստեղծագործությունը[5], և այլն: Սույն աշխատության արժեքն է՛լ ավելի է մեծանում, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ մեջբերված նմուշների մի զգալի մասի համար օգտագործված են ձեռագրական անտիպ նյութեր՝ հիմնականում երուսաղեմյան հայկական գրչագրերից: Ինչ վերաբերում է իր գործում վերստին հրատարակած նմուշներին, պետք է նկատել, որ այստեղ ևս դարձյալ ի հայտ է գալիս հեղինակի մանրազնին համեմատություններ կատարելու անսպառ եռանդը: Նկատի ունենալով տվյալ բնագրի անցյալ հրատարակության սխալները, հեղինակը, համեմատելով այն իրեն մատչելի եղող տարբեր ձեռագիր օրինակների հետ, կատարում է միանգամայն արժեքավոր ճշտումներ և մատնանշում նախորդ հրատարակությունների սխալները: Այդպես է վերաբերվել հեղինակը, օրինակ, Կիրակոս Դրազարկեցու

[2] Նորայր եպս. Պողարյան, Հայ գրողներ, Ե—ԺԷ դար, Երուսաղեմ, 1972, էջ Դ:

[3] Հ. Գ. Զարբհանալյան, Պատմութիւն հայ հին դպրութեան (Դ—ԺԳ դար), չորրորդ հրատարակություն, Վենետիկ, 1932: Նույնի հտ. Բ (Նոր մատենագրություն), Վենետիկ, 1878:

[4] Գրախոսվող աշխատությունը, էջ 309—312:

[5] Նույն տեղում, էջ 326—329:

1117 թ. հիշատակարանի նկատմամբ[6]: Նույն քննական վերաբերմունքն է ցուցաբերում հեղինակը անգամ մատենագրերի երկերը թվելու ժամանակ: Իբրև օրինակ հիշենք Հովհաննես Սարկավագի «Հարցմունք Վրաց եպիսկոպոսի» բնագիրը, որը առանց իսկ մեջբերելու, այն համեմատության մեջ դնելով Երուսաղեմի № 1272 գրչագրի հետ, ընթերցողի ուշադրությունն է հրավիրում, որ այդ երկից կատարված նախորդ երկու հրատարակությունները «բազմասխալ» և կամ «տասնչյակ մը կարևոր սխալներով» են լույս տեսել[7]: Ուշագրավ երևույթ է նաև ձեռագրական հարուստ նորահայտ տվյալների օգտագործումը ինչպես հեղինակների կենսագրության, այնպես էլ նրանց երկերի մատենագիտության ամբողջացման համար:

Ոչ պակաս արժեքավոր է նաև հայ մատենագրերի կյանքին ու ստեղծագործություններին վերաբերող վերջին տարիներին ինչպես հայրենիքում, այնպես էլ սփյուռքի տարածքի վրա լույս տեսած առանձին մենագրությունների և հոդվածների հիշատակումը իրենց տեղում: Այս ևս կոչված է մեծապես նպաստելու հետազոտական աշխատանքներով զբաղվողներին: Սույն մատենագիտական հարուստ տվյալների շարքում կարևոր տեղ են գրավում նաև տարիներ շարունակ հեղինակի կողմից «Ն. եպս. Ծովական» ստորագրությամբ «Սիոն»-ում, «Էջմիածին»-ում և այլ հանդեսներում հրատարակած բազմաթիվ հոդվածները և ուսումնասիրությունները, որոնք կարևոր ներդրում են հանդիսացել հայագիտության համար: Ահա հեղինակի հիշատակության արժանի այդ հոդվածներից մեկի արգասիքն է սույն հատորում գտնվող և հայ միջնադարյան առաջին բանաստեղծուհուն և երաժշտուհուն՝ Սահակդուխտին (7—8 դարեր) նվիրված բաժինը: Անցյալում, ինչպես Հ. Գ. Զարբհանալյանը[8] և ակադ. Մ. Աբեղյանը[9], այնպես էլ ակադ. Հր. Աճառյանը[10] նյութերի չգոյության պատճառով Սահակդուխտի մասին ստիպվել էին բավարարվել միայն Ստ. Օրբելյանի[11] հայտնի տողերով: Նույնպես Հ. Ղ. Ալիշանը[12] և ապա Գ. ծ. վ. Գալեմքյարյանը[13] շփոթության մեջ էին ընկել Սահակդուխտի ստեղծագործության որոշման հարցում: Միայն տարիներ անց հայագիտությունը հնարավորություն ունեցավ վերստին ստանալ Օրբելյանի վկայակոչած՝ Սահակդուխտի ստեղծագործությունը եղող «Սրբուհի Մարիամ» Ծննդյան կցուրդը, շնորհիվ Ն. եպս. Պողարյանի հայտնաբերության[14]: Տների սկզբնատողերով «Սահակդուխտ» հոդվող հեղինակի այժմ հայտնի դարձած այս միակ կցուրդը իր արժանի տեղն է գրավել սույն հատորում[15]:

Այս գործում կարևոր են նաև այն էջերը, ուր բազմավաստակ բանասերը, շնորհիվ իր երկարամյա ձեռագրական պրպտումների, փորձեր է կատարում ի հայտ բերելու մեր մատենագրերի անհետ կորած նաև այլ երկեր: Այդ շարքից ուշագրավ է Անանիա Նարեկացուն նվիրված բաժինը, ուր, խոսելով Երուսաղեմի մատենադարանում պահվող «Ընդդէմ երկաբնակաց» ծավալուն աշխատության, ինչպես նաև նրա կողմից դարձյալ երկաբնակների դեմ գրված «Հաւատարմատ» աշխատության մասին, որ հիշատակում է Ուխտանես պատմիչը[16], հեղինակը նկատում է՝ «Թերևս նախորդի տարբեր մեկ խմբագրությունը», և ապա ավելացնում. «Այս երկու գրություններեն մին կամ մյուսը օգտագործված ըլլալ կթվին Անանիա Սանահնեցիի կողմե, վասնզի իր հակաճառության մեջ կան համանմանա շատ հատվածներ»[17]: Միաժամանակ հեղինակը ցույց է տալիս ինչպես իր կողմից Անանիա Նարեկացուն համարվող այնպես էլ Անանիա Սանահնեցու դարձյալ անտիպ մնացած աշխատությունների իրար համընկնող մասերը: Ինչպես նշել ենք Հ. Ս. Անասյանի կողմից Վարդան Այգեկցուն նվիրված արժեքավոր աշխատության մասին մեր գրած հոդվածում, վերոհիշյալ երկու գրչագրերի համեմատությունը մի կողմից և մյուս կողմից էլ Վարդան Այգեկցու նորահայտ «Հաւատարմատ»-ում մի ոմն Անանիա վարդապետից մեջ բերված վկայությունները, որոնք Հ. Ս. Անասյանի կարծիքով պետք է, որ Սանահնեցունը լինեն[18], կարող են կարևոր

---

[6] Նույն տեղում, էջ 205—206:

[7] Նույն տեղում, էջ 213:

[8] **Հ. Գ. Զարբհանալյան**, Պատմություն հայ հին դպրության..., էջ 785:

[9] **Ակադ. Մանուկ Աբեղյան**, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին (սկզբից մինչև 10 դար), Երևան, 1944, էջ 485:

[10] **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հատոր Դ, Երևան, 1948, էջ 372:

[11] **Ստ. Օրբելյան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, ԼԱ, էջ 139:

[12] **Հ. Ղևոնդ Մ. Ալիշան**, Ցուցիկ հայրենեաց Հայոց, հտ. Ա, Վենետիկ, 1920, էջ 261—63:

[13] «Տաճար», Կ. Պոլիս, 1912, էջ 352:

[14] «Հասկ», 1951, էջ 366:

[15] Գրախոսվող աշխատությունը, էջ 117—118:

[16] **Ուխտանէս եպիսկոպոս**, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, հատված Բ, էջ 132—136:

[17] Գրախոսվող աշխատությունը, էջ 151:

[18] Հ. Ս. Անասյանի գրախոսվող աշխատությունը, էջ 33:

նշանակություն ունենալ Անանիա Նարեկացու ցարդ կորած համարվող երկերի հայտնաբերման գործում[19]:

Ուշագրավ է նաև Աբրահամ Աղբաթանեցի կաթողիկոսի երկերի շարքում «Խոստովանութիւն հաւատոյ և ընդվզք հերետիկոսաց» գործի հիշատակությունը Ն. եպս. Պողարյանի կողմից[20], որի բնագիրը նա հրատարակել էր իր կազմած Երուսաղեմի ձեռագրացուցակի առաջին հրատարակության մեջ[21]: Այդ նույն գործից տարբեր գրչագրեր է հիշատակել նաև Հ. Ս. Անասյանը[22]: Սակայն վերջերս Վ. Ա. Հակոբյանը իր մեծարժեք «Կանոնագիրք հայոց»-ի Բ հատորի ներածությունում, ելնելով այն բանից, որ Աբրահամ Աղբաթանեցու գործին համանման մի բնագիր է հասել մեզ Կանոնագրքի մեջ առանց նրա անվան, ինչպես նաև այդ նույն բնագիրը համընկնում է նաև «Գիրք թղթոց»-ում եղող Աբդիշո ասորի եպիսկոպոսի անունով մեզ հասած երկու թղթերի և «Կնիք հաւատոյ» ժողովածուում եղող անանուն մի բնագրի հետ, կասկած է հայտնում, նրա վավերականության մասին: Նա նկատի է ունեցել նաև այն հանգամանքը, որ այն ձեռագիրը, որից հրատարակվել է Աբրահամ Աղբաթանեցու անունով հասած այդ գրվածքը, նոր գրչագիր է, ընդօրինակված 1737 թ.: Այսպիսով Վ. Ա. Հակոբյանը գտնում է, որ այն չի կարող հաստատ համոզում ներշնչել այդ բնագիրը Աբրահամ կաթողիկոսին վերագրելու համար. ապա այդ երկի հեղինակային պատկանելիության հարցը անորոշ է թողնում[23]: Սակայն պետք է նշել, որ թեև Պողարյան սրբազանի կողմից հրատարակված հիշյալ բնագիրը 1737 թ. ընդօրինակված մի գրչագրից է կատարված, սակայն բարեբախտաբար նույն բնագրից ցարդ հայտնի են նաև շատ ավելի վաղ ընդօրինակություններ, որոնցից է Երուսաղեմյան մի գրչագիր՝ 1417 թ.-ից[24], և Վենետիկյան մի այլ ընդօրինակություն՝ 1335 թ.[25], որոնցում կա Աբրահամ կաթողիկոսի անունը: Այսպիսով սույն բնագրի նոր ընդօրինակություն լինելու պատճառաբանությունը ինքնին վերանում է և ապացուցվում, որ հրատարակված ձեռագրից 400 տարի վաղ գրչագրեր ևս գոյություն ունեն, որոնք դարձյալ պահպանում են Աբրահամ կաթողիկոսի անունը: Նկատենք, որ հիշյալ գրվածքը որոշ չափով համաձայնում է նույն Աբրահամ Աղբաթանեցու կաթողիկոս ընտրվելու առթիվ Հայոց և Վրկաստանց մարզպան Սմբատ Բագրատունուն հայ հոգևորականների կողմից տրված ձեռնարկին[26]: Շատ հնարավոր էր, որ Աբրահամը կաթողիկոս ընտրվելուց անմիջապես հետո ինքը ևս անհրաժեշտ էր համարել գրել առանձին իր անունից հիշյալ գրվածքը՝ անշուշտ նկատի ունենալով ժամանակի դավանաբանական բարդ իրադրությունը: Ինչ վերաբերում է Աբդիշոյի թղթերի նմանությանը սույն գործի հետ, կարող էր հայ իրականության մեջ այն համօրինակային (տրաֆարետային) ձև ունենալ և հաճախ օգտագործվեր հերձվածողների դեմ նաև այլ անձանց կողմից և տարբեր առիթներով:

Ուսանելի և ուշագրավ շատ բան կա գրախոսվող սույն հատորում, սակայն տեղի սղությունը մեզ հնարավորություն չի տալիս վերոհիշյալների նման այլ օրինակներ ևս բերելու:

Այլոց հեղինակությունները հիշատակելու հարցում այնքան նախանձախնդիր եղող հեղինակը իր անձի և երկասիրությունների նկատմամբ չարաչար համեստ է գտնվել և հաճախ զանց է առել այս կամ այն հեղինակի մասին անցյալում իր կատարած աշխատանքների հիշատակությունը: Օրինակ, Հովհաննես Թլկուրանցու տաղերի մասին գրելու ժամանակ բավարարվել է՝ հիշելով միայն, որ «Քանի մը տարի առաջ (1958) Ս. Հակոբյանց տպարանեն լույս տեսավ Թլկուրանցիի Տաղգիրքը, որ կպարունակե իր թե՛ սիրային, թե՛ խրատական և թե՛ կրոնական քերթվածները[27]: Այնինչ այդ իր աշխատասիրությամբ հրատարակված մենագրությունն է՝ ընդլրված Հովհաննես Թլկուրանցուն[28]: Ղազար Փարպեցուն ընդլրված

---

[19] **Ս. Ջոլաճեյան**, Վարդան Այգեկցին և «Արմատ հաւատոյ»-ն (գրախոսության փոխարեն), «Էջմիածին», № գ, էջ 40:

[20] Գրախոսվող աշխատությունը, էջ 62:

[21] **Ն. եպս. Պողարյան**, Ցուցակ ձեռագրաց Երուսաղեմի, Բ հատոր, Երուսաղեմ, 1953, էջ 32—33:

[22] **Հ. Ս. Անասյան**, Հայկական մատենագիտություն, Ե—ԺԸ դդ., Երևան, 1959, էջ 80:

[23] **Վազգեն Հակոբյան**, Կանոնագիրք Հայոց, Բ, Երևան, 1971, էջ XLVII—XLVIII:

[24] **Նորայր եպս. Պողարյան**, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբյանց, հատոր առաջին, Երուսաղեմ, 1966, էջ 4:

[25] **Հ. Բարսեղ Սարգիսյան**, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին, Մխիթարյանց ի Վենետիկ, 1924, Վենետիկ, էջ 327:

[26] Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 149—150: Ուխտանէս, Բ, էջ 57—59:

[27] Գրախոսվող աշխատությունը, էջ 388:

[28] **(Խեւ) Յովհաննէս Թլկուրանցի**, Տաղագիրք, հրատ. Ն. եպս. Ծովական, Երուսաղեմ, 1958, էջ ԻՀ+115:

բաժնում[29] մոռացված է հեղինակի կողմից կատարված մի նոր հրատարակություն՝ «Նորագյուտ հատված Ղազար Փարպեցու Հայոց պատմության խորագրով, որի մասին Ն. եպս. Պողարյանը նկատում է, որ «Այս հատվածի առանձին հրատարակության ընպատակն է ընծայել նպաստ մը Ղ. Փարպեցու Պատմության բնագրի սրբագրության»[30]: Դարձյալ հեղինակային մատենագրությունների բաժիններում չեն հիշատակված Ստեփանոս Լեհացու[31], Վարդան Այգեկցու[32], Փավստոս Բուզանդի[33] և այլոց մասին հեղինակի գրած մի շարք հոդվածները: Հովհան Գառնեցու կապակցությամբ թեև նշված է աշխատությունների ցանկում նրա «Բան շահաւէտ և օգտակար ամենայն մարդկան» գրվածքի երուսաղեմյան ձեռագիրը, սակայն մոռացված է հիշատակել, որ այդ բնագրի հրատարակումը ևս պարտական ենք անխոնջ բանասերի ջանքերին[34]:

Ցանկալի կլիներ, որ սույն արժեքավոր գործի երկրորդ հրատարակության ժամանակ այնտեղ տեղ գրավեր նաև Գրիգոր Ակներցի կամ Ականցի պատմիչը (ԺԴ դ.), որը նախապես հայտնի էր Մաղաքիա արեղա անվամբ, և որի հայերեն բնագրի հետ զուգահեռ Թբիլիսիում 1961 թ. հրատարակվեց նաև վրացերեն թարգմանությունը՝ կատարված Նադար Շոշիաշվիլու կողմից: Շատ լավ է արված, որ հաճախ ցույց են տրված նաև պատմիչների գիտական հրատարակությունները: Անհրաժեշտ է ավելացնել նաև Ղազար Փարպեցու, Հովհան Մամիկոնյանի, Կորյունի և Արիստակես Լաստիվերտցու գիտա-համեմատական բնագրերի հրատարակությունները: Առաքել Դավրիժեցու մատենագիտության մեջ պետք է ավելացնել նաև նրա տաղերը[35]: Ցանկալի կլիներ, որ բերվեն նաև հայ մատենագրերից կատարված օտար լեզվով, ինչպես նաև աշխարհաբար թարգմանությունները:

Այս բոլորը հեշտ ուղղելիք են, կարևորն այն է, որ սույն հատորը կոչված է լրացնելու բազմաթիվ գրքերի և աղբյուրների պակասը: Չբավականանալով իր կատարած մեծ աշխատանքով, հեղինակը միաժամանակ զետեղել է նաև օտար մատենագրերի ժամանակի և երկասիրությունների, ինչպես նաև հիշատակված անձանց մասին ծանոթություններ[36]: Գրքի բազմաթիվ էջերում զետեղված են բառացանկեր, դժվարիմանալի բառերի համար[37]: Այս բոլոր ցանկերը նպաստում են նյութի հեշտ ընկալությանը: Դրական երևույթ է նաև ցարդ իրենց ապրած տարիները անհայտ մնացած յուրաքանչյուր հեղինակի կողքին թեկուզ հարցական նշանով դրված թվականները:

Նորայր եպս. Պողարյանի «Հայ գրողներ, Ե—ԺԷ դարեր» աշխատությունը մի նոր փայլուն խիզախում է բազմավաստակ հեղինակի ստեղծագործական կյանքում և կոչված է միանգամայն իր արժեքավոր նպաստը բերելու ընթերցող լայն հասարակության, ինչպես նաև հայ բանասիրության համար: Նորանոր հաջողությունների լավագույն մաղթանքներ հայագիտության և հայ ձեռագրագիտության բազմաբեղուն ճվիրյային իր կոթողային երկը՝ Երուսաղեմի «Մայր ցուցակ»-ը իր ավարտին հասցնելու և վերոհիշյալ աշխատության նման այլ օգտավետ գործեր ևս պարգևելու համար մեր ժողովրդին՝ ի փառս հայ մշակույթի:

ՍՈՒՐԵՆ ՔՈԼԱՆՋՅԱՆ

---

[29] Գրախոսվող աշխատությունը, էջ 34—36:

[30] **Նորայր եպս. Պողարյան,** Նորագյուտ հատված Ղազար Փարպեցու «Հայոց պատմության», «Բանբեր Մատենադարանի», 8, Երևան, 1967, էջ 263—274:

[31] «Սիոն», Երուսաղեմ, 1960, էջ 103:

[32] «Սիոն», 1960, էջ 104—106:

[33] «Սիոն», 1960, էջ 173—175:

[34] «Սիոն», 1960, էջ 332—335:

[35] Տես Հ. Ս. Անասյան, Հայկական Մատենագիտություն..., էջ 1152—1153:

[36] Գրախոսվող աշխատությունը, էջ 165—166, 369:

[37] Նույն տեղում, տես էջեր 36, 258, 342, 449, 456, 475—476, 515, 520, 547, 565—671:



ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՀԻՐԵՈՒՄ

1972 թվականի մայիսի 7-ին Կահիրեում կատարվում են թեմական ժողովի մասնակի ընտրություններ:

Այս առթիվ, ի դիմաց Կահիրեի թեմական ժողովի դիվանի, Ամենայն Հայոց Հայրապետին գրված մայիս 29 թվակիր պաշտոնական գրության մեջ հաղորդվում էր, որ ընտրություններից հետո կազմվել են թեմական և քաղաքական ժողովների նորընտիր դիվաններ:

Թեմական ժողովի դիվանը ընտրվում է ձեռամբարձ և միաձայն քվեարկությամբ հետևյալ կազմով.

Պ. Արտո Պըլըքտանյան. առաջին ատենապետ.

Պ. Հայկ Օհաննեսյան. երկրորդ ատենապետ.

Պ. Հակոբ Համբիկյան. առաջին ատենադպիր.

Պ. Նորայր Տեովլեթյան. երկրորդ ատենադպիր:

Գաղտնի քվեարկությամբ ընտրվում է նաև Քաղաքական ժողովի դիվանը, հետևյալ կազմով.

Պ. Հայկազուն Քյուրքճյան. առաջին ատենապետ.

Պ. Պոլ Քիլիտջյան. երկրորդ ատենապետ.

Պ. Հակոբ Էքսերճյան. ատենադպիր.

Պ. Բյուզանդ Բրուտյան. գանձապետ.

Պ. Ռուբեն Գազազյան.

Պ. Սարգիս Պալայան.

Պ. Կարապետ Տեմիրճյան.

Խորհրդականներ:

Վեհափառ Հայրապետը, այս առթիվ Իր հայրապետական գոհունակությունը հայտնելով, բարեհաճում է շնորհավորել Կահիրեի թեմական և քաղաքական ժողովների նոր կազմը:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, հանուն Հայոց Հայրապետի, շնորհավորում է թեմական և քաղաքական ժողովների դիվանների նորընտիր անդամներին և բարեմաղթում լավագույն հաջողություններ նրանց եկեղեցանվեր և ազգօգուտ ծառայության սրբազան ասպարեզում:

ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԼՈՆԴՈՆԻ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

1972 թվականի ապրիլի 16-ին, Աշխարհամատրան կիրակի օրը, Անգլիայի հայրապետական պատվիրակ տ. Պսակ արքեպ. Թումայանը Լոնդոնի հայոց Ամենայն Սըրբոց եկեղեցում սարկավագության աստիճան է շնորհում եկեղեցու դպիրներից պ. Ստեփան Հովհաննեսոֆին և պ. Սուրեն Խտըրյանին:

Լոնդոնի հայոց գաղութի համար հոգեկան մխիթարության անմոռանալի և պատմական մի օր է հանդիսանում ապրիլի 16-ի կիրակին: Լոնդոնի մեջ, հայ գաղութի ծոցում, առաջին անգամ էր, որ կատարվում էր ընծաման հոգեպարար ձեռնադրություն:

Այդ օրը Ամենայն Սրբոց եկեղեցին լիքն

էր հավատացյալ և աղոթավոր ժողովրդի բազմությամբ:

Օրվա ս. պատարագը մատուցում է տ. Պսակ արքեպիսկոպոսը, որը և ս. պատարագի ընթացքում կատարում է սարկավագական ձեռնադրություններ՝ խարտավիլակությամբ տ. Արսեն վրդ. Բերբերյանի:

Ձեռնադրության հոգեգրավ արարողությունից հետո ձեռնադրիչ սրբազանը խոսում է գեղեցիկ ու բովանդակալից մի խրատական՝ շեշտելով սարկավագական պաշտոնի կարևորությունը եկեղեցու հոգևոր սպասավորության գործում և թելադրում է նորընծա Ստեփան և Սուրեն բարեշնորհ սարկավագներին ունենալ իրենց նախատիպար սուրբ Ստեփանոսի հավատի կրակը, նվիրումի ոգին, նախաձեռնողությունը՝ արժանավորապես ծառայելու համար Աստծու Եղեռնին և նրա ժողովրդի հոգևոր կյուրիքներին:

Սարկավագական սույն ձեռնադրությունից հետո Լոնդոնի հայոց համայնքի վարչությունը մասնավոր ճաշկերույթով նշում է օրվա հանդիսության կարևորությունը:

Ընդունելության ժամանակ ելույթներ են ունենում տ. Պսակ արքեպիսկոպոսը, Լոնդոնի հայոց ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը, տ. Արսեն վրդ. Բերբերյանը, վարչության անդամներից պ. Հ. Մութաֆյանը, Հ. Արթան, Ջոն Կրեկըրին և դոկտ. Գր. Կորկոտյանը:

Ընդունելությունն ավարտվում է տ. Պսակ արքեպիսկոպոսի գոհության աղոթքով:



ՀԱՆԳԻՍՏ
ՍՏԵՓԱՆ ՍՐԱՊՅԱՆԻ
(1906—1972)

Հունիսի 9-ին, ուրբաթ օրը, Միլանում, 66 տարեկան հասակում, վախճանվում է Մայր Աթոռի հարազատ զավակ ու բարերար, Միլանի գաղութային վարչության նախագահ և ազգային-հասարակական գործիչ Ստեփան Սրապյանը:

Հանգուցյալը ծնվել է 1906 թվականին Կեյվեյում:

1915 թվականի եղեռնի արյունոտ օրերին նա ինը տարեկան հասակում բաժանել է իր ազգի տխուր ճակատագիրը և հագել որբության կրակե շապիկը:

1921 թվականին իր եղբայր՝ ապագա բանաստեղծ Արամայիսի և բազում այլ հայ որբերի հետ ապաստան է գտնում Հունաստանի Կորֆու կղզու որբանոցում, ուր և ստանում է իր նախնական կրթությունը՝ աշակերտելով արևմտահայ հանրածանոթ մտավորականների՝ Թեոդիկին, Արշակ Ալպոյաճյանին, Լևոն Թութունջյանին, որոնք հայ որբուկների մտքի և հոգու անդաստաններում սերմանում էին պաշտամունքը հայ եկեղեցու, հայ լեզվի ու գրականության, ոգին հայոց պատմության ու հավատքը վառ գալիքի և ազգային վերածննդյան:

«Կխլեն գիրքը անոնք, կատաղորեն, հացի պես.
Մարդոց ոճիրը զանոնք զերթ մեյ-մեկ սուր է դարբնած.
Ա՛հ, զորացո՛ւր, կարծրացո՛ւր, մեծցո՛ւր զանոնք, կա՛րծր Աստված»:
(Վ. Թեքեյան):

Այնուհետև հանգուցյալը աշակերտում է Վենետիկում՝ Մխիթարյանների Մուրադ-Ռափայելյան վարժարանում և, այն հաջողությամբ ավարտելուց հետո, հետագայում իր ողջ գիտակցական կյանքը նվիրում իտալահայ համայնքի եկեղեցական-մշակութային և ազգային կյանքի կազմակերպությանը և առաջընթացին, որպես իտալահայ գաղութային վարչության և Հայկական բարեգործական ընդհանուր միության Իտալիայի տեղական մասնաճյուղի ատենապետի:

Տ. Տ. Վազգեն Ա Հայոց Հայրապետի գահակալության տարիներին Ստեփան Սրապ-

յանը, խանդավառված Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի եկեղեցաշեն ու հայրենանվեր գործունեությամբ, որդիական երախտագիտությամբ, իր բարոյական ու նյութական աջակցությունն է բերում Նորին Սրբության շինարարական-կառուցողական

Հանգուցյալի մասին Մայր Աթոռ ս. Էջմիածինը կորցրեց իր հավատավոր ու հարազատ զավակներից մեկին, իսկ իտալահայ գաղութը՝ իր հայրենանվեր ու ազնիվ ղեկավարներից մեկին:

Մայր տաճարում հունիսի 11-ին, կիրակի



Ստեփան Սրապյանը 13 տարեկան, Կորֆուի որբանոցում (առաջին շարքում ձախից երկրորդը)

ձեռնարկներին՝ արժանանալով Հայոց Հայրապետի բարձր գնահատությանն ու ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի շքանշանին:

1965 թվականին, Հայոց Հայրապետի գահակալության տասնամյակի հանդիսություններին, Ստեփան Սրապյանը պաշտոնապես ներկայացնում է իտալահայ համայնքը, Մայր Աթոռում կատարվող հոբելյանական հանդիսություններին:

Հանգուցյալ Ստեփան Սրապյանը եղել է նաև ջերմ ու խանդավառ հայրենասեր հայորդի և աշխատել է իտալահայ համայնքի հայրենասիրական կապերը ամրացնել մայր հայրենիքի հետ:

օրը, Հայոց Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ ի հիշատակ նորոգ հանգուցյալ Ստեփան Սրապյանի:

Խո՛նկ և օրհնությո՛ւն ազնիվ և բարի Ստեփան Սրապյանի անմոռաց հիշատակին:

Հանուն «Էջմիածին» ամսագրի խմբագրության, մեր զգացված խորը ցավակցությունն ենք հայտնում հանգուցյալ Ստեփան Սրապյանի ազնվահոգի կնոջը՝ տիկին Ծինա Սրապյանին, նրա երկու սիրասուն զավակներին և հարազատներին ու բարեկամներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Արարատյան թեմի նորընտիր առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս եպիսկոպոսին արքության պատիվ շնորհելու առթիվ 3

Հաղորդագրություն 5

Նորին Սրբություն Պողոս Զ Պապի ողջույնի գիրը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին 7

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի խոսքը՝ ուղղված Նորին գերազանցություն կարդինալ Ժան Վիլլբրանդին 8

Նորին գերազանցություն կարդինալ Ժան Վիլլբրանդի խոսքը՝ ուղղված Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին 11

Հռոմեական կաթոլիկ եկեղեցու պատվիրակությունը Մայր Աթոռում 14

Արարատյան թեմի նոր առաջնորդական փոխանորդի նշանակում 25

Հոգեհանգիստ Մայր տաճարում՝ մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանի մահվան քառասունքի առթիվ 28

Ամավերջի հանդիսություն հոգևոր ճեմարանում 29

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 35

ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏՅԱՆՑ—Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը 38

Գրախոսություն—ՍՈՒՐԵՆ ՔՈԼԱՆՋՅԱՆ—Նորայր եպս. Պողարյան, «Հայ գրողներ, Ե—ԺԷ դար», Երուսաղեմ, տպարան սրբոց Հակոբյանց, 1971, էջ ԺԶ+616 . 54

ԱՓՅՈՒՌՈՒՄ

Թեմական ժողովի մասնակի ընտրություններ Կաճիրեում 60

Սարկավագական ձեռնադրություն Լոնդոնի հայոց Ամենայն Սրբոց եկեղեցում 60

Հանգիստ Ստեփան Սրապյանի 62

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 29/V 1972 թ.: Ստորագրված է տպագրության 27/VII 1972 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 422

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1972 թ.